— Այսպես: Ճնշումը ցածր է, առավելագույնը՝ 80, նվազագույնը՝ 40: — Բժիշկ Մարությանը խոսում է բարձր՝ ի ականջ գուանը կանգնածների: — Սրտի աշխատանքը տևեք: — Մարությանը կալանավորի կողքին պառկած 80 տարեկան կնոջ քարտից հանեց էլեկտրասրտաժապավենը, մեկնեց Վարդանին, որ գրկել ընկերոջը ու լաց էր լինում:

— Տեսե՞ք: — Բժիշկի խիստ տոսնը զգաստացրեց Վարդանին, Նա էլեկտրասրտագիրը խոթեց կալանավորի բժշկական քարտի մեջ:

— Երո, պատրաստ ես թոփչքի:

— Եարժվել չեմ կարողանում:

— Ե՞րբ կկարողանա: — Վարդգեսը նայեց բժշկին:

— Մեկ շաբաթից:

— Ուշ է: Երեք օրից պատրաստ լինես:

— Իսկ ինչպես..

Շավարշը ձեռքը մեկնեց դեպի պատուհանը:

— Երդորդ հարկից: — Զարմանքով շշնչաց հիվանդը:

— Ուրիշ տարրերակ չկա:

Կոնսիլիումից մի քանի օր անց Խաչիկը կանգնել էր դըռնան առաջ՝ արտակարգ դեպքի համար բժշկի սպիտակ խալաթի տակ պատրաստ պահած ատրճանակը: Կալանավորը մոտեցավ պատուհանին: Ձեռքը դիպավ հրշեց-ելարանին, ու դեկտեմբերյան եղյամից սառցակալած մետաղը հաձելի սառնություն հաղորդեց ընդարձացած մտքերին: Ոտքը գետնին շհասած, հայտնվեց ընկերների ձեռքերին:

Հերթապահող զինվորը սովորականի պես մի քանի անգամ գուող բացեց, նայեց տեղաշորին ու կամաց ծածկեց. Հիվանդը քնած է:

— Բժիշկը դեռ ներսո՞ւմ է: — Հարցրեց խմբից մեկը, որին տարօրինակ թվաց հիվանդասենյակի լուսվյունը:

— Ի՞նչ բժիշկ: Ներսում ոչ-ոք չկա:

— Մի ժամ առաջ սպիտակ խալաթով մեկը շմտավ: — Կասկածանքով հարցրեց զինվորը:

—Մտավ: Ի՞նչարկի, մտավ: —Ասաց ավելի դիտողունակ մեկը:

—Ո՞նց թե...

Խմբի ավագը ընդուած վեր թռավ ու խուժեց դատարկ հիմանդրասենյակը, որտեղ օգը թարմ ու սառն էր Ավագը ետքաշեց վերմակը. տեղաշորում փափուկ ծածկոցից խրամիւլակ էր պառկեցրած: Մոտեցավ պատուհանին: Կրնկարաց փեղկերից այն կողմ, դատարկ փողոցում, ծննդյան տոնի նախօրեի քամին տարրութերում էր եղրևանիները:

* * *

Հայտարարվում է Համամիութենական որոնում: Բոնվելու վտանգը բացառված չէր նաև Հայաստանում: Գործում էր ՊԱԿ-ը: Կալանավորը կեղծ անձնագրով անցնում է Ղափան:

Խեկ Ստեփանակերտում... Որու փոխնդապետը մտնում է գրախանութի: Կինը՝ առեղծվածային ու խորհրդավոր ժպիտ դեմքին, դիմավորում է, հրավիրում ծառայողական առանձնասենյակ:

—Անտրամադիր ես: Ինչո՞ւ— Հարցրեց գորովալից:

—Զեմ դիմանում, Ռայիսա Միխայլովնա: Օրեր եմ հաշվում՝ վերջանա ծառայությունս, զնամ այստեղից: Սիամուտի թանձր ծխի հետ կում արեց սուրբք: Ապահով տեղ է: Կինը հասկացավ, որ տղայի մասին է խոսքը և կոկետ ցած թողեց աշքելը:

—Սև գործ է պատըաստվում Ղարաբաղի վրա, Ռայիսա Միխայլովնա: Փոխնդապետը լցրեց կոնյակը և միանգամից կու տվեց:

Կինը որու դասականների հազվագյուտ և ընտիր մի քանի հրատարակություն կապոց արեց ու դրեց սեղանին: Լեռնացին Ղարաբաղի և նրա հարակից շրջանների պարետ Ժուկովի տեղակալի՝ գնդապետ Մուրկովի տրամադրությունը դրանից էլ չբացվեց...

Մոտենում էր 1991-ի ապրիլ-մայիսը:

Եւ երբ Գողգոթա ասաւած տեղն է-
կան, նորան լեղիի հետ խառնած զիջի
տուին խմելու: Եւ անցնող դարձնանե-
րը հայենոյում էին նորան, իրանց գր-
լուիները շարժելով. երէ Աստուծո որ-
դի ես, իշխ խաչից: Եւ շուտով նո-
րանցից մէկը վագեց՝ մի սպանգ առաւ
ժացախով լցրեց, եղէզի վրա անցրեց,
եւ նորան տուավ... Յիսուսը դարձեալ
մեծ ձայնով կանչեց՝ Եւ արձակեց հո-
գին:

1989 թվական: Հունվարի 25: ԽՍՀՄ դատախազության
քննչական խումբը կալանում է Յուրի Զհանգիրյանին և երեք
օր պահում է Շուշիի բանտում:

Մեջբերում օրագրից.

«Շուշիի բանտի մասին շատ էի լսել: Մի քանի անգամ
եղել եմ բանտապետի սենյակում, երբ պատուղ-բանջարեղենի
միավորման տնօրենն էի: Բայց չէի պատկերացնում այն դա-
ժան պայմանները, որի մեջ հայտնվեցի ես: 200 զրամ ան-
հաց, զուր՝ մեջը մի քանի հատ ձավար, կես կարտոֆիլ,
առանց յուղի: Շարժումը ուզում են խեղաթյուրել, ներկայաց-
նել որպես մի խումբ կաշառակերների գործ: Այսինքն՝ Ղա-
րաբաղի պրոբլեմ լկա»:

1990 թվական: Մի քանի անգամ տնային կալանք: Երեք
ամիս անշատում են հեռախոսը:

* * *

1991 թվական: Մայիսի 15: Ժամը 5.30: Դղբկոց լըս-
վեց: Խոշալլուի կողմից շարասյուն էր շարժվում: Յուրի Զհանգիրյանը միացրեց տագնապի ազգանշանը, որ միայն
Հովսեփավախում էր լսվում: Տնօրենը հեռախոսով հայտնեց
շրջակա գյուղերին: Շարասյունը կանգնեց շորս կիլոմետրի
վրա. Կալինտակ կոչվող տեղամասում: Զանգեց Ստեփանա-
կերու: Պատասխանը եղավ՝ թողնել Հովսեփավախը: Զհանգիր-
յանը տղաներին հավաքեց խորհրդակցության:

— Մենք մնում ենք, ոու հեռանում ես: — Առաջինը խո-
սկ Վովան:

— Քո կալանքը կլինի մեր պարտությունը: — Արմանդն
էր:

— Մենք մնում ենք: — Ռաֆիկի ձայնը վճռական էր: Տղաները շտապեցնում են:

Տնօրինը թողեց ավանդ:

Զինվորները ներխուժում են գյուղ: Նոնականետով բացում են պահեստի դռները: Ձարդուփշուր անում՝ ինչ պատահում է: Պահանջում են Յուրիին և Կարենին: Զինվորները «խորհուրդ տվեցին» թողնել Հովսեփավանը: Որ դիմադրելը իմաստ չընի: Ետ զառնալու ճանապարհին նրանք պատանդ են վերցնում և Թուրքերին հանձնում անշափահաս Արսեն Հակոբյանին, որ Հովսեփավանի բնակիչ է: Հայրը մեծ գումար տալով տղային հանում է Շուշիի բանտից:

Կատարված դեպքից երեք օր հետո գիշերված ժամը 3-ին Զհանգիրյանը ծածուկ, ծպտված մտնում է ավան:

«*»

1991 թվական: Օգոստոսի 9: Շամբ՝ 2.15: Ավտոբուսը առաջացավ, կանգնեց տան դիմաց:

— Զհանգիրյանին ենք ինդուստրում: — Քաղաքավարի դիմեց ուսւ զինվորը:

Ցուրին ոտարորիկ, քնատ կանգնեց պատշգամբում:

Զինվորները ավտոբուսից գորս թափվեցին: Աստիճաններից ցատկելու և փախչելու փորձ արեց: Կինը հասկացավ կատարվածը: Բոնեց ուսւ զինվորի օձիքից: Ավտոմատի հարփած: Բուռնցքի հարփած բերանին: Կինն ընկալի: Կրակոցներ օդում: Դագանակը գործի դրվեց: Ավանը շրջապատված է:

— Դե, Զհանգիրյան, քեզ տեղնուտեղը գնդակահարե՞նք, թե՞ բանտում փտեցնելուց հետո: — Կծու հարցը Աղբբեշանի զիմավոր գատախաղի օգնականը, որ գտնվում էր ուսւ զինվորների հետ:

— Ինչի՞ համար: — Մոզան փորձեց մոտենալ նրան:

— Դուք լավ գիտեք: — Զինվորները կարեցին դիմը:

— Հովսեփավանը կիսատ շթողնես: — Զհանգիրյանը գըրպանից հանեց բանալիների կապը և շպրտեց:

Թուրքերը հոհոացին:

— Դուք ինք... Կգաս՝ կշարունակես:

— Թուզլ շտաս Հովսեփավանը դատարկիլի: — Գոռաց Յուրիին:

Դագանակի հարված գլխին, և Հովսեփավանի հիմնադիրը ուշագնաց փռվեց գետնին:

ՄԵԶԲԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

Ն. Տ. Եկեմենկը (Կոմիտեի անդամ):— Ես ձեզ կխընդրի, չնկեր գնապես, մեկնարաննեւ Ասկերանի շրջանի պարանի տեղակա ներքին զորքին մայր Պեկինին հայտարարությունը. «Ես գտնում եմ, այս ինչ կատարվում է այս տեղ (Են մասին ունի ամ իրադարձությունները, որ բնմարդկում են պատճե) կարիք էր ավելի քաղաքակիրք ձեռք անել: Գրոհայն ներքին զ նարափել անկանական, պետք է, բայց դրա համար պետք չէ շարդի հիվանդանոցներ, կոտրատել դուներ, ամարգել մարդկանց»: Ին պես համարել պաշտոնական ներկարացուցիչ և ձեր հայտարարությունները, որ մարդու իրավունքի ոչ մի խախտում չի կատարվում այն գործողությունների ժամանակ, որին համակցում են ձեր և ուռարածանությունները:

Ե. Բուդյային, գնդապետ:— Ասկերանը գտնվում է ԼՂԻՄ-ի տարածքում, որտեղ իմ զորամիավորությունը ավագականացրելի զ նարափմանը չեն մասնակցել: Գուա համար հարցուն պատասխանել չեմ կարող:

Խորհրդարանական ո մկնդրամ

Մալիսի 18

* * *

1991 թվական: Հոկտեմբերի 28: Հարցաքննություն
Բաքվի հեռուստատեսությամբ:

Ադրբեյջանի զիմավոր դատախազ Իսմեր Գահրով, — Ա-
նուն, ազգանուն, հայրանուն:

Կալանավոր. — Ցուրի Հովսեփի Ջհանգիրյան:

— 35 թվականի ծնված:

— Այս:

— Մննդո՞վ:

— Դաշրութապից:

— Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու եք:

— Այո:

— Աշխատավայրը:

— Հողի վարձակալ: Մինչ այդ գյուղատնտես էի:

— Հնատանեկան գրությունդ:

— Ամուսնացած, ունեմ երեք երեխա:

— Գիտե՞ք ձեզ ինչ մեղադրանք է ներկայացվում:



Յուրի Զհանգիրյանը Հովսեփավաճում

— Գիտեմ: — Ճանգիրյանը փորձում է ժպիտ խաղացնել:

— Սպանություն; 52 զլուկա ոչխարի հավշտակում;

Լոռություն:

— Դուք «Կոռունկ» կոմիտեի անդամ եք: Ճի՞շտ է:

— Ճիշտ է:

— Պատմեցեք ձեր գործումնեռության մասին: Ինչո՞վ եք զբաղվել: Ի՞նչ պարտականություններ ունեիք: Թվարկեք այն անձանց, ովքեր մտնում էին կոմիտեի մեջ:

— Արկադի Մանուչարովի առաջարկությամբ է ստեղծվել «Կոռունկ» կոմիտեն: Սկզբում 5 մարդ էինք, հետո՝ 55: Անուն ազգանունները կարդացին հենց հանրահավաքում: Հետո ստացանք հանձնարարություններ:

— Կոնկրետ քո՛ խնդիրը: Դատախազի դիմքը ավելի է խստանում:

— Եւ զմուկերպել հանրահավաքներ, ցուցեր, հւնգես գալ հայտաբար լույսուններով, գիմումներով:

— Հետո՞— Հարցնում է սպառնալից:

— Հետո՞...— Կալանավորը կմկում է իւեղճացած: — Լեռնային Զարաբաղը զուզա բերել Ադրբեջանի կազմից և միացնել Հայաստանին:

— Ճի՞շտ են եղել նման ոտնձգությունները ուրիշի հողի նկատմամբ:

— Ոչ:

— Ետքել Ադրբեջանի տարածքից մի մաս և տալ Հայաստանի՞ն... Ճի՞շտ ես գտնում:—

Գաիբովի տոնը բանում է անհանդուրժող և զայրալից:

— Ես գտնում եմ, որ այդ ճանապարհը ճիշտ չէ:

— Մի սանտիմենտը հող Հայաստանին չի զ! շվի: Դուք դա գիտե՞ք:— Գաիբովի ձայնի բարձրությունը անցնում է պատշաճության բոլոր սահմանները:

— Գիտենք:

— Համոզվա՞ծ եք դրանում:

— Ի՞նչ կե, համոզված ենք:

— Հողը հո հացի կտոր չէ, որ բաժանես:— Կալանավորի խեղված գեմքին նորից ծամածոված ժպիտ է խաղում:

— Մեզ սկզբում թվում էր, թե դա հնարավոր է:

Հետո հասկացանք...

— Պատմիր: Ինչպես ես համարձակվում գործել հանլար Շահմամեդովի վրա:

— Եմ ձեռքին եղել է պայթուցիշ-ինքնաշարժ կական,
որը ես օգտագործել եմ իբր նոնակ: Զեռքիս եղել է և հրա-
ցան:

— Ի՞նչ հրացան:

— Որտեղ են տարել Շահմամեդովին:

— Երկի զյուղ: Կալանավորը խեղճանում, մի բուռ է
դառնում:

— Գրոհայիննե՞րն են տարել:

— Այո:

— Կոնկրետ՝ ո՞վ:

— Խորով Ստեփանյանը: Նա սպանված է:

— Պայմանավորվածություն եղե՞լ է ձեր մեջ:

— Ոչ: Նա ապրում էր Դաշբուլաղում, ես՝ Հովհաննեավա-
նում:

Գաիրով: — Խուզարկության ժամանակ ձեզ մոտ գտել
ենք այս դիմակը: Մանո՞թ է:

— Մանոթ է: Եղել է «Ամարաս» բարեգործական ընկե-
րությունից ստացված տուփերի մեջ:

— Այստեղ ձեր վերաբերմամբ որևէ հակաօրինական գոր-
ծողություն կիրառվե՞լ է:

— Ոչ: — Ծտապում է պատասխանել կալանավորը:

— Օքնիքի խախտումներ եղե՞լ են: Բռնություն գործա-
դրվե՞լ է:

— Ոչ: Ոչ:

— Անօրին քննությո՞ւն:

— Ոչ մի:

— Դուք հանդիպե՞լ եք Ռուսաստանի խորհրդարանի ներ-
կայացուցիչներին:

— Հանդիպել եմ: Երբ նրանք հարցրել են, թե ինչպիսի
պայմաններում են մեզ պահում... Ես պատասխանել եմ՝
պայմանները... ը...ը... — Կալանավորը կմկմում է:

— Առողջարանային չեն: — Հուշում է զլխավոր դատա-
խազը:

— Հետաքննության վերաբերյալ գանգաւ ու ունե՞ք:

— Միայն մի խնդրանք ունեմ, հարգելի գեներալ, ան-
ձամբ՝ իմ կողմից:

— Ես այնտեղ իմ ժողովրդին օգտակար կարող եմ լի-
նել: Աշխատող մարդ եմ: Ով աշխատում է, վի կարող զենք

վերցնել: Պատերազմը ձեռնուու է խարերաներին, խարդախներին: Մենք պարտավոր ենք այնպես անել, որ խաղաղություն տիրի այս հողում:

Երրորդ ամիսն է Հովսեփավանի տնօրենը չկա: Բանտից դուրս եկող շարագույժ լուրերից արյուն է սառչում: Ոչ ոքի մտքով շանցավ լքել նոր կառուցվող ավանը:

—Վատ ժամանակներ են, Արթուր, Տարածները չեն գալիս, եկածները՝ հաշմանդամ: Գո՞ւցի աշխատանքից դուրս գաս:

—Ես ո՞վ եմ, ինչ եմ ինձնից ներկայացնում, որ հետապնդեն: Նույնիսկ մի կարգին շգիտեմ էլ, թե այստեղ ինչ է կատարվում:

—Զգույշ եղիր, Արթուր: — Մոր տագնապները շցրվեցին:

Օք ավարտին էր մոտենում: Արթուրը մտավ քեռու՝ Զհանգիրյանի աշխատասենյակը, բացեց արկղը, վերցրեց դոմինոն, որ պահակության երկար գիշերը ընկերների հետ կարճեն: Դոնից հաղիվ մի քայլ էր արել, լուսիցունը շամփեց ավտոմատի ճարճատյունը:

Հովսեփավանի վրա պտտվող մահը այս անգամ թիրախ էր ընտրել 21-ամյա Արթուր Սարգսյանին: Կրակել էին մոտիկից՝ 7-8 մետրից: Ինը գնդակ մեջքից խրվել, քրքրել էին մարմինը:

Հոկտեմբերի 28-ն էր, ժամը՝ 8.30: Բաքվի հեռուստատեսությամբ ցուցադրում էին Զհանգիրյանի հարցաքննության տեսաժապավենը:

Մահը հետապնդում էր իր զոհերին՝ սիրունատես դատախազի տեսքով:

Մահը հետամուտ է Հովսեփավանին: Զերբակալություններ, գիշերային հարձակումներ: Ավանի կառուցման ոգևորությունը տեղի է տվել սարսափի մղձավանցին:

Գունատ, սեակնած նստել է Ռոզա Զհանգիրյանը: Քարցած, անհաղորդ շրջապատին:

Հիշեց:

Առաջին ցույցից հետո էր:

— Դու վստա՞ն ես այս գործի նաջողության մեջ:

— Մենք արդար ենք:

— Կնաշեն: Արյան մեջ կխեղդեն:

— Թոլուրին սպանել չեն կարող: Ես կընկնեմ՝ իմ տղան կկանգնի տեղս, նա ընկնի՝ երա որդին կկանգնի: Ճանապարհը գնացողն է հաղթահարում:

Հիշեց:

Տուն եկավ բարձր տրամադրությամբ:

— Տեսա՞ր, — ասում էի չէ՞ն, մեզնից վախենում են:

Խոշալափ կողմից բուրքը անցավ գետը:

— Չեռք ժաշիր ու սկսած գործից:

— Իմ հողի վրա եմ ես տուն շինում:

— Թշնամություն մի հրանիրից: Արյուն է եռում գետի երկու կողմում:

— Ես կովից հնորու մարդ եմ:

— Միամիտ մի ձեացիր: Արյան հնու է փշում ու գործից: Ամեն ինչ կվերշանա, մեր հին զնալ-զալը կլեւսկավի:

— Դուք կառուցում եք մեզ արգելո՞ւմ: Դա՞ է հարեանությունը:

— Պոչդ խոր մի բաղիր: Դու զիտես ինչ ես անում: — Երկուք խոր զննեցին իրար:

— Արած ծախսիդ արծեքը կտանք:

Ցուրին մմծիծաղ տվեց:

— Քառապատիկ կլնարենք: Մեկ միլիոն...

Հայի դեմքն անվրդով, անհողողոդ էր:

Հիշեց.

Ցուրի: — Զեմ ուզում կենդանի ընկնել բուրքերի ձեռքը: Երեք տեսնես՝ ազատվել չկա, կկրակես:

Կարեն. — Դու՝ նույնպես:

Ցուրի. — Թայց ես մեզ վրա ո՞նց պիտի ձեռք բարձրացնեմ:

— Հերի՛ք է: — Կինը գոռաց և անցավ մյուս սենյակը:

Նստել է գունատ, սեակնած, անցյալի հուշերի ու ներկայի ծանր տպավորության տակ: Իսկ թշնամին հետևողական նենգությամբ հետապնդում է Հովսեփավանի գաղափարին: Շարունակի՛, թե հետ դառնա. Կինը տանջվում էր իրա-

բամերժ մտքերից: Եղբայրը՝ Մայիսը կարծես զգաց՝ ինչ է
 կատարվում նրա հոգում:
 — Ետ քաշվիր, չե՞ս տեսնում կնոջ տեղ չէ:
 — Չեմ կարող: Իրավունք չունեմ:
 Մտքերը մեկեն հստակվեցին:
 Հաջորդ օրվանից Ռոզան Հովսեփավանում էր:

Զհանգիրյանի օրագրից.

Հասանաբարագում (Բերդաձոր) ստեղծեցի լաբորատորիա: Թուրքերը քարկոծում են մեղ: Կարել են հեռախոսակապը: Գողանում և շարդում են լաբորատորիայի գուլքը: Իմ գրասենյակի վառարանի մեջ պայմանագիրը սարք տեղավորեցին այն: Հաշվարկով, որ պայմանագիրը տեղի կռնենա առավոտյան թուրցկաժամին: Պատահականությունը փրկեց ինձ: Մենք սկսեցինք մշակել ծրագիր, բե ինչպես ազատենք այս կետը թուրքերից:

Իմ առաջին գործը եղավ աշխատանքից աղատել պահակ Ալլահվերդիկն: Հետո սկսեցի նեղել շրջակա հայ տնօրեններին, որոնք ուժեղ կապերի մեջ էին թուրքերի հետ և չէին կարողանում հրաժեշտ տալ «յուղոտ պատառներին»: Լեզու գտանք զինվորների հետ: Մեր տղաները շարդեցին Խոչալուկց Հասանաբարդ պարենամթերք բերող մեքենան: Մենք որոշեցինք կաշառել մի թուրքի, որ առաջինը թողնի Հասանաբարդը: Բայց այդքան շատ գումար չունեինք: Որոշեցինք ճնշում գործադրել: Այգիներում տղաները ծեծեցին թուրք բրիգադավարին: Հաջորդ օրը թուրքերը աշխատանքի դուրս շեկան: Քանդեցինք նրանց անասնապահական շենքերը: Թուրքերը տեղի տվեցին ու սկսեցին տեղահանվել:

1990 թ.

Հովսեփավանի հարցը մի քանի անգամ զրվեց խորհրդակցությունում: Որոշումը կա (1990 թ. մարտ), բայց սկսելու ձգձգում է: Մարզում իշխանությունը կնորկով կաշառակերների ու հափշտակիչների ձեռքին է:

Հայաստանից 8 հազար տնկիներ ստացանք: Եաբաթօրակ հայտարարեցինք և սկսեցինք այգու հիմնադրումը: Թուրք

քերին դա կատաղեցրեց: 200 հոգով եկան և այգու ջուրը
շրջեցին իրենց կողմը: Մենք շատ քիչ էինք, չկարողացանք
դիմադրել: Հաջորդ օրը մեր տղաները՝ Կարենը, Սասունը,
Վլադիկը ձիերով գնացին առվի հունը շրջելու մեր կողմը:
Իրենք՝ 200 հոգի, մերոնք՝ 10: Հրածգություն: Զո՞հ չկա՝ եր-
կու կողմից: Հաջորդ օրը ծառատունկը շարունակեցինք:

1991 թ.

* * *

Մեր գյուղացիները պայքարի համար դեռ քնած են, դեռ
նրանց ուղեղին լի հասել, որ իրենց սահմանները իրենք
պիտի պահեն: Մի բոռնցք գառած Ստեփանակերտի հրա-
պարակում գոռացել են՝ պայքար, պայքար մինչև վերջ, բայց
դա ըմբռնվել է մի տեսակ գեղեցիկ խաղի նման: Քնած պայ-
քար շի լինում: Զենքով, արյունով է միայն հնարավոր պաշտ-
պանել հողը:

Հովսեփավանը պիտի ընդարձակվի տարածվի, միանա
օդանավակայանին: Տարվա վերջին հարյուր տուն կունենանք:
Արտադրական օբյեկտներ կլինեն:

Շինանյութեր, հագուստներ, հաստոցներ, մթերքներ Հա-
յաստանից ստանում ենք:

* * *

Նոյեմբերի 9: 1990 թվական: Հավաքվեցինք և ընդու-
նեցինք հողակագիր:

Մենք՝ Հովսեփավանը կառուցողներս, երբ Ազրբեջանի
կառավարությունը արյունահեղ գործողություններ է ծավա-
լում, հայտարարում ենք՝ այսօր քան երբեմ համախմբված
ենք տեղական իշխանության շուրջ, պայքարում ենք Արցա-
խում վերականգնելու պետական կարգավիճակը:

Մեր նպատակն է՝

կառուցել և պաշտպանել Հովսեփավանը: Մեր անձնա-
ղությունով և պայքարով նպաստել Արցախի վերա-
միավորմանը Հայաստանին:

Մեր սկզբունքն է՝

բարձր կարգապահություն: Զգոնություն: Խիզախու-
թյուն: Աշխատասիրություն: Անբարույականություն է զենքը
թալանի և շահագիտական նպատակներով օգտագործելու:
Պատրաստ ենք համագործակցել բոլոր այն կազմակերպու-

թյունների հետ, որոնք ծառայում են ինքնապաշտպանության կազմակերպման գործիքն:

Աշխատակարգը՝

Գիշերային հերթապահություն սահմանել: Զթույլատրել աննպատակ փամփուշտների օգտագործում, անասունների կորուստ: Նշված կետերը խախտելը կհամարվի դավաճանություն և նախատեսվում է հետևյալ պատիժը.

Հասարակական պարսավանք և տուգանք՝ 100 ռուբլի: Կրկնվելու դեպքում՝ հեռացնել աշխատանքից:

Ստորադրում ենք:

* * *

20-25 հոգի մոտենում ենք Հովսեփիավանի վարչական շենքին: Ժամը՝ 14.00: Շրջապատված ենք:

Զեռքս մեկնեցի հեռախոսին: Հավաքեցի շրջակա գյուղերի կապի բաժանմունքի համարները:

— Տղաներին ասեք՝ թող շուտ հասնեն: Թուրքերը:

Ասկերան: Ռուս պարետը:

— Առավոտյան այդտեղ կլինենք:

Մտեփանակերտ: Պարետատուն:

— Այս ժամին չենք կարող գալ:

Ասկերանի շրջմիլիցիայի բաժանմունք: Խոստանում են գալ: Դեպքի վայրը չներկայացան նույնիսկ հաջորդ ամբողջ օրը:

Կարենը լույսը հանգրեց: Դուռը քացով տվեց և կրակահերթ մթության մեջ: Գարիկը հրացանը ճանկեց ու թռավ պատուհանի մոտ: Կրակոցները Հետո մթության մեջ՝ հայոցյանքներ:

— Կենդանի մարդ չկա: Սատկել են: Հեռանանք: — Լսվեց թուրքերեն: Խումբը կրակելով նահանջում է:

Արցախաշենից տղաները օգնության հասան: Արձակվել է 150 փամփուշտ: Պատերին՝ զնդակոծման հետքեր: Կարենը՝ գլխից վիրավոր:

11. 1. 1991 թ.

* * *

Համոզվեցի, որ հայ միլիցիան կազմալուծված մարմին է, կամակատար ոռուների ձեռքին և քանի որ ենթարկվում է Ադրբեյջանին, վերապահումներով է գործում անգամ այսպիսի

պահերին: Մի կողմից էլ՝ հայ միլիցիայից խլել են ավտո-
մատները: Ասրբանակներով ինչպես կովկեն մինչև առամ-
ներք դինված օմոնի դեմ: Էհ, դրանց բոլորի հերն էլ անի-
ծած: Մենք թեկուզ հրացաններով նրանց հոգին կհանեինք,
կհետապնդեինք մինչև նրանց որջը, բայց մեր ու նրանց
արանքում զինվորական պահակակետեր կան, ավելի վտան-
գավոր, բան թուրքերի հարձակումները:

* * *

Վերջին դեպքերից ես հասկացա, որ պատրաստ չենք
պայքարի: Մեր տղամարդկանց մեծ մասը անտարբեր է,
տներից զուրս չի գալիս: Մինչեռու այս օրերին նրանք գիշեր-
ցերեկ պետք է մեր սահմանները հսկեն: Եթեկվա դեպքը ինձ
շատ բան մտածել տվեց: Ինձ զարմացրեց փախստական Բե-
նիկի վերաբերմունքը: Նա կովի մեջ չնետվեց: Խորենը թողել
էր պահակակետը: Առավոտյան, երբ հայտնվեց, կատաղած
ծեծեցի նրան:

Երեկոյան, երբ տուն գնացի, Ռոզայի վերաբերմունքը
ինձ համար անսպասելի էր:

— Թող քո Հովսեփավանը:

Լուցի: Բայց իմ աշքերի մեջ կարդաց պատասխանը:

— Տղաներիս վերադարձու տուն: Վախենում եմ:

Ոչինչ չպատասխանեցի: Ռոզան լաց եղավ:

19. 1. 1991 թ.

* * *

Հարձակում են Հովսեփավանի վրա: Սպանվում են Կա-
մոն և Վերսենը: Գիշերը տղաները բարձրանում են Սարդա-
րաշենի բարձունքները: Վերեք լուծված է: Մեկի տեղ՝ տասը.
սա պիտի լինի մեր սկզբունքը:

10. 2. 1991 թ.

* * *

Պայքարը կրում է տարերային բնույթ: Քաջ տղաներ
կան, իհարկե: Բայց նրանք զործում են առանձին կամ իրմ-
բերով, անկազմակերպ: Ժամանակը եկել է անցնելու զին-
ված պայքարի, բայց շատ ղեկավարների, պաշտոնյաների
վախեռոտության, մորթապաշտության պատճառով ժողովրդ-

դական համախմբումը տեղի վի ունենում: Թուրքերը օր-առ-օր ավելի են լկտիանում: Զինվորականությունը կաշառված է թուրքերից: Զորքորդ տարին է շրջափակման մեջ ենք: Դրաի հետ կապ չկայ Թուրքական զյուղերում թափով անօրեն շինարարություն է կատարվում:

* * *

Մուհամամը իր ոչխարների հետ գալիս է մեր արտավագյրը: Հավանաբար՝ հետախուզության: Տղաները բազմից զգուշացրել են, թայց քանի որ իր թիկունքում մեծ ուժ է զգում, շարունակում է զալ: Այս անգամ տղաները հովվի աշքի առաջ մի քանի ոշխար գնդակահարեցին՝ որպես նախազգուշացում: Կրակոցների վրա Խոշալլուկից թուրքերը հասան: Թեժ կոփվ սկսվեց: Նրանք փախուստի դիմեցին: Ալբերտը, Կամոն, Խոսրովը որոշ տարածություն հետապնդեցին նրանց:

Քիշ-միշ հաջողվել է զենք ձեռք բերել: Հակահարված ենք տալիս թուրքերին: Սրագրեր ենք մշակում: Մեզ ուժ է պետք:

Պայքար, պայքար մինչև վերջ:

20. 3. 1991 թ.

Մեր ծրագիրը պիտի լինի՝ թուրքերին քշել Արցախից: Ինչ միշողով ուզում է լինի: Անգամ կյանքի գնով: Հերիք է խարվել: Մարդու հանդեպ՝ մարդ, ավազակի հանդեպ՝ ավազակ: Հովսեփավանը բերդ պիտի գառնա: Զինվել: Միայն ու միայն՝ զենք: Դա է մեր փրկությունը:

* * *

Ռոզան ուզում է ինձ հոտ պահել իմ ճանապարհից: Բայց ես չեմ կարող: Այսօր փետրվարի 10-ն է, 1991 թվական: Այս տողերը գրելու պահին ես չեմ կասկածում, որ հաղթանակը մերը կլինի: Մենք շատ անգամ պարտվում ենք, որովհետև մեզ թույլ ենք կարծում: Հիասթափիլած եմ մարզի և գյուղերի ղեկավարներից, նրանց անգործությունից: Եսստած սպասում ենք, որ թուրքերը գան ու մեզ ջարդեն: Ճենց միայն այն, որ որոշվեց շրջակա զյուղերից զալ ու Հովսեփավանում ընդհանուր պաշտպանություն կազմակերպել, չեկան, նրանք չեն գիտակցում, որ կոփվ է և պետք



Հիմնադրվում է Հովսեփավանում

է կովեն: Մի քանի անգամ գյուղերն եմ գնացել և տեսել՝ ոչ
մի հսկողություն: Ինքնապաշտպանությունը, ազգային ինքնա-
պիտակցությունը դեռ շատ ցածր է:

ՄԵԶԲԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

Բ. Ա. Զոլոտովին: — Դուք 4-րդ բանակից եք, այդպէս է:
Այսուեղ թվեր թերվածին, որ ննշող մեծամասնությունը
տեղական բնակչութեր՝ աղբեջանցիներ են: Ծի՞չու են այդ
թվերը:

Ա. Պ. Բուուլեկին: Անդրկովկասան զինվորական օկ-
րովի 28-րդ մոտոհրաձգային գվարդիական դիվիզիայի
հրամանատար, գնդապետ: — Զեկուցում են: Յօ տոկու'
պավոնմական ազգության, Յօ տոկու' միջնամասիական և 40
տոկու աղբեջանական: Կան զորամասեր, որուել տեղա-
կան ազգության տոկոսը հասնում է 50-60%-ի:

Խորհրդարանական ու Ակնյոց ժ
Մայիսի 18

Դրությունը բարդանում է: Զկան Գետաշենը և Մարտունա-
շենը, Հադրութի շրջանի մի շարք գյուղեր: Մենք տեսնում
ենք այս ամենը, մենք պատրաստ ենք անձնագոհաբար
պաշտպանել մեր հողը: Բայց դա ֆիզիկապես հնարավոր
չէ: Չորրորդ ուսական բանակը դրվել է Աղբեջանի արա-
մադրության տակ: Տեղահանության քաղաքականություն է
վարվում: Բոլորս զիտենք այս և մեզ հաստուկ համբերատա-
րությամբ սպասում ենք: Ինչ անել: Տագնապի մեջ ենք: 10-
20 հոգանոց խմբերը հրացաններով ու նոնակներով զինված,
ինչ կարող են անել կանոնավոր բանակի դեմ: Մեզ մնում է
միայն զսպված մնալ, ժողովրդի մոտ բացատրություններ
տանել, որ խուճապի շմատնվեն, դիմանան: Ժամանակը թե-
լադրում է գազանությանը պատասխանել գազանությամբ:
Բայց նորից պարզվում է, որ պատերազմը հայերի դեմ վա-
րում է խորհրդային բանակը:

10. 5. 1991 թ.

Լրացուցիչ տեղեկություն

Մայիսի մեկին Հայաստանի Հանրապետության Գերա-
գույն խորհրդի նախագահ Ալեք Տեր-Պետրոսյանը տասը բոլով
տեսողությամբ նեռախոսագրույց ունեցավ ԽՍՀՄ պրեզիդենտ
Մ. Գորբաչովի հետ՝ Շահումյանի շրջանում, Գետաշենի են-
թաշրջանում և Արցախում ստեղծված իրավինակի շուրջ: Հա-
յաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագա-
նք Գորբաչովին ներկայացրեց այն երեք հիմնական խնդիր-

ները, որոնց շուտափույք լուծումը կհանդիսանա իրադրության կայունացման իրական երաշխիք:

Առաջին անհապաղ դադարեցնել ենթին զարժերի սառարածանումների բոլոր կարգի ուղղմական գործողությունները վերաբիշյալ շրջաններում:

Երկրորդ՝ բոլոր տակ ուղղաբիոնների բարձրներ նշված շրջաններ:

Երրորդ՝ ոչ մի գեպենում բոլոր շտալ Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի բնակչության տեղափառում:

Գրեզիդենտը նախագահին խոսացավ իր հսկողության տակ առնել և զբաղվել նշված խնդիրների լուծմամբ: — Հաղորդում է Արմենպետ զործակալությունը:

* * *

Անասնագողությունը, որ լայն ծավալներ էր ընդունել, թուլացավ: Մենք սկսեցինք պաշտպանել մեր բնակավայրերը: Շարունակվում է հայ տղամարդկանց որսը: Ընտրում են ունեորներին: Կորզված փողը թուրքերը և ոռուները կիսում են: Վերջիններս մտնում են գյուղերը, խորոված ուտում, քիչ անում, ուսումնասիրում մարդկանց և տեղանքը, միասնականց զրահատանկերով գալիս և պատանդներ վերցնում: Մի քանի օր առաջ Սրբախաշենում ցերեկը քեֆ անելուց, բարեկամության մասին երդումներ տալուց հետո փորձել են ձերբակալել Սլավիկին, Վիլենին, Թոփիկին:

20. 06. 1991 թ.

Դատախացությունից ոսւս քննիչները զինվորների հետ մտան Հովսեփավան: Նրանք իբր իմիշալլոց հարցրել են իմունի մասին: Մենք արդեն թաքնվել էինք: Թողեցին հեռացան:

Հրացաններով ոշինչ անել հնարավոր չեմ: Ժամանակակից զենք է պետք: Ուր է հայի խելքը, որ օգտագործում են ուրիշները: Ժամանակն է ուշքի զանք: Անկախության ճանապարհներ որոնենք: Մտածված: Խելացի: Ազգը պայքարի է բարձրացել ու կգնա մինչև հաղթական ավարտը:

10. 07. 1991 թ.

* * *

Նամակներ բանտից:

Ռողա, Վեզիրով իբրահիմը ինձ շատ է օգնում: Նույնիսկ ծիսախոս է տվել, ծանրոցդ ինձ է հասցրել: Մեր մեկտեղ կտրած հացը, տասը տարվա ընկերությունը նա չի մոռացել:

Գտեք ԿամԱԶ-59-57 մեքենայի վարորդին Հուսելով
Մուղափատին: Օգոստոսի 27-ին ժամը 10-ին Խոշալուից
գուրս է եկել դեպի Շուշի: Մերոնք պատանդ են վերցրել:
Գտեք նրան: Ինձ միայն դա կիրկի:

3. 09. 1991թ.

Բարեւ, հարազատներս: Ես ողջ առողջ եմ: Ինչը և ցան-
կանում եմ ես ձեզ: Անհանգիստ եմ ձեզ համար: Էդուարդ
Գնորդելիը թող շուտ վերջացնի շինարարությունը:
Ինձ առաջադրված է բրեկան գործ: Երբ և ինչով կվեր-
ջանա, չգիտեմ: Երանի բանակցությունների գնան: Եթե
ներգործելու փոքրինչ հնարավորություն ունեք՝ օգտագոր-
ծեք: Երկու կողմից սպանվում են անմեղ մարդիկ: Երանի
շուտ խաղաղություն հաստատվի: Այն ժամանակ միայն հնա-
րավոր կլինի մեր հանդիպումը:

Համբուրում եմ:

18. 03. 1991թ.

* * *

1992 թվականի ապրիլի 2-ին Աղբբեշանի գերազույն
դատարանը Յուրի Ջհանգիրյանին դատապարտում է պատ-
ժի գերազույն շափի՝ գնդակահարության: Հունիսի 9-ին Շու-
վելյանի բանտում սպանվում է Ջհանգիրյանը: Ոչ հարազատ-
ները, ոչ Լեռնային Ղարաբաղի իշխանություններն այդ մասին
շնորհեկացգել: Տեղեկությունը ստացվել է Սանկտ-Պետեր-
բուրգից հայերի փաստաբան Վյաչեսլավ Տյուլակից: Ավելի
ուշ Հայաստանի դատախազի Բաքվի հետ ունեցած հեռա-
խոսազրույցի ժամանակ տեղեկությունը հաստատվել է:

* * *

Տող գյուղի սահմանագիծ: Հուլիսի 13: 22 տարեկան
թուրք գերին անցնում է այն կողմ:

Դիմակը՝ բանտային ծածկասավանի մեջ դրվեց հարա-
զատների առաջ: Բժիշկը տեղի տվեց կնոջ համառ պահան-
չին՝ բացի: Բոզան դանակ խնդրեց: Կոացավ քայլայված
մկանների ու ոսկորների վրա, բազուկից պոկեց կալանա-
վորի համարանիշը՝ 2888, պինդ բռնեց ափի մեջ ու մնաց
շոքած գետնին...

Մեկ տարվա բանտարկությունից իր երկիրն է վերա-
դարձել արցախյան շարժման առաջնորդներից մեկը՝ Յուրի
Ջհանգիրյանը:

Զարբնիր, զարբնիր, վեր կաց, ով
Նրուսաղեմ, որ խմեցիր Տիրոջ ձեռքից
նորա բարկութեան բաժակը: Ահա առ-
նում եմ ձեռքիցդ բմրութեան բաժակը,
եւ դու այլեւս պիտի շխմես այն: Եւ
նորան դեռում եմ Ինգ հարատահարող-
ների ձեռքին, որոնք ասում էին Ին
առձին. ծոփր, որ մենք անցնենք...

Զագլիկ: Գյուղը շրջապատված է: Դ զրահամեքենա տունը
առել են շուրջկալի մեջ: Զինվորները ներս են լցվում: Մի
քանի բոպե անց՝ տունը տակնուվրա էր, իրերը՝ զարդուկիշուր:
Զինվորներից մեկը ձեռքը կոխեց բարձի տակ: Գոհարը նրա
ձեռքին փամփուշտներ նկատեց: Ծվաց:

—Ի՞նչ ես անում:

Կնոջը քշեցին պատշգամբ:

—Ես տեսա փամփուշտները: Դո՛ւք զրեցիք:

Կնոջը պատշգամբից ցած զցեցին: Տղամարդու ձեռքերը
ալորեցին մեջքին ու շպրտեցին զրահամեքենայի մեջ:

—Ինչո՞ւ —Դիմազրության թույլ փորձ արեց:

—Այնտեղ կիմանաս:

—Անտոնյանին վերցրել ենք: — Հեռակապի մեջ մտավ
կապավորը: — Չորս հոգի էլ են կալանված՝ պատահական
մարդիկ:

—Արագ դուրս եկեք, մտեք հարևան գյուղ: Գործողու-
թյունը շարունակեք: — Հրամայեցին «կենտրոնից»:

Միրրաշիր: Երջմիլիցիայի գետնահարկ:

—Մինչեւ քո գալը հաշտ ու համերաշխ էինք, դո՛ւ թըշ-
նամացրիր: Դո՛ւ Հենց ոտք դրեցիր գյուղ՝ ամեն ինչ սկսվեց:
— Ումութլուեցի Կասրմով նորեղդինը հսում է:

—Աշքերդ հիմա կհանեմ, բուռդ կդնեմ, որ Ղարաբաղից
ճղելու ճամփան էլ շպտնես: — Օմոնականի հագուստի մեջ
Ռազմիկը ճանաչեց Ռմութլուի բուժկետի վարիչին:

1991 թվականի մայիսի 17-ն էր:

* *

Շահբուզաղ: Բանտ: Ալքերը կամաց-կամաց վարժվեցին
մութին, սկսեց զանազանել դեմքերը:

—Դու՛ այստեղ: — Զարմացած հարցրեց իսկանդարյան

Երվանդին, որ մէջքից կորացած անքում էր:
—Եղբորս տղային կոխեցին զրահամեքենայի մէջ, մո-
տեցա՝ ներկայացա՝ ասացի գպրոցի տնօրենն եմ, բացա-
տըրություն պահանջեցի, ինձ էլ քաշեցին ներս: — 70 տարե-
կան մարդք ցավից երկտակվում էր:

—Կմեռնեմ: Չեմ դիմանում:

—Սրանից նեղ տեղն էլ կա, աղատվել էլ կա: Կմտածեն,
կհանեն մեզ: — Հուսազրեց Ռազմիկը:

—Տղա ջան, քե՞զ ինչի համար:

—Իմ ձեռքին եղածն էլ մի փոքրիկ դանակ էր: — Մհերը
մի կերպ շրջեց փշրված մարմինը:

—Իսկականից զենքի տեղ չգիտե՞մ: — Զայնը ցածրաց-
րեց Ռազմիկը:

Ուսանողը լոեց:

Չորս եղբայր՝ Մհծշենից, մեքենայի մէջ էին, մեքենան
իւլեցին, իրենց քշեցին այստեղ: 8-ը՝ Թալիշից, 6-ը՝ Վաղու-
հասից, 3-ը՝ Մարտակերտից, 2-ը՝ Չափարից: Բոլոր շրջան-
ներից այստեղ մարդ կար՝ 59 հոգի: Խուցն այնքան է նեղ,
որ բոլորի համար պառկելու տեղ չկա: Կեսը շոքում է շեշտ
բետոնի վրա ու ննջում, կեսը՝ կանգնած սպասում իր հեր-
թին: Ոչ փալաս, ոչ նստարան: Պատուհանի երկաթե ճաղա-
շարերի արանքով կոյուղու ջուրը շարտում են ներս: Գար-
շահուստություն: Հեղձուկ: Օդը չի հերիքում: Ծնչահեղձ են
լինում: 18 տարեկան Հրահատը ուշաթափվեց: Ռազմիկը օր-
վա հացի իր բաժինը տվեց նրան: Տղան շոր, պինդ հացը
ցեց բերանը, ծամոնի նման երկար ծամում ու ծծում էր:

Առաջին հարցաքննություն:

—Առաջնորդ... Կծու հեղնեց քննիչը: — Կազմակերպիշ...
—Ես բանվոր մարդ եմ:

—Բանվորությունդ անեիր՝ իշխանավարի ապրեիր, ինչ-
պես ապրում էիր: Ոչ թե քաղաքից գայիր, Զազլիկը Ումութ-
յուից անշատեիր, մարդկանց իրար դեմ հանեիր: Ինչո՞ւ ես
բաժանել: Հը:

—Առանձին-առանձին ավելի արագ կզարգանան:

—Դու տնտեսագե՞տ ես, թե բանվոր: — Քննիչը կանգ-
նած օմոնականներին աշքով արեց:

Զա՛րդ:

...Նստեցրին աթոռին:

—Մա դո՞ւ լես:

Կալանավորը ձեռքով սրբեց աշքերը լովող արյունը՝ նա-
յեց լուսանկարներին:

1988: Մարտ-ապրիլ: Ստեփանակերտ: Հրապարակ: Հա-
զարավոր վերբունեցված ձեռքեր: Տախտակամած են սար-
ֆել: Ինք ամբոխից երոյթ է ունենամ: Աև վերարկուով է:
Դեմքն աղոտ է եւենու:

—Եթե ապանեն, եթե քանա ճետեն, եթե անգամ խարոյի
վրա այրեն... Չենք հրաժարվի մեր պահանջից: Ոչ մի ուժ չի
կարող պոկել մեզ այս հողից: Ոչ մի ուժ չի կարող շեղել
մեզ մեր եանապարհից:

70 հազարանոց բազմությունը շնչանատ կլանում է հոե-
տորի մտերը: Բռունցիները բարձրանում են վեր, և հրա-
պարակը պայրում է բառերից:

—Մի՛-ա -ցո՛ւմ:

—Հա՛-յա՛ս-տա՛ն:

Վանկարկումից ինք շփորփում է: Աշխան ընկեռում է ամ-
րինին մատ կաճքած էդուարդ Կազարյանցին, որի տանեն էր
ցույցի նախօրյակին: Իրեն ճախապատրաստում էր: Դուն
ետեսում կացին տեսավ: Աս' ինչի համար է՝ զարմացած
հարցեց: Պաշտպանության. ինչ կիմացվի, շատ ոտք կմտնի՝
եղավ պատասխանը:

Նախորդ օրը սերտած բառերը միտքը եկան, ձեռքը
բռունց արեց, ձգվեց հասակով մեկ և արտասանեց:

—Արդար պահանջ,

Ոչ մի հահանջ:

Ամբոխը զնաց մտի ետեից: Կրկնեց:

—Արդար պահանջ,

Ոչ մի հահանջ:

Օդը վաճիկարկումից շիկացել ու պայրում էր: Հանրա-
նավալից հետո երգահանը մոտեցավ: Գրկեց:

—Իմ սպասելիները գերազանցեցիր: Պատրաստ հոե-
տոր ես, տղա:

—Ընդհանուր գործի համար՝ պատրաստ եմ:— Կրախո-
սանից հուզվեց ինքը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

1991 թվական: Ապրիլի 24:

ԽՄԿԿ Կենակումի պենսումի ընդմիջմանը թեյի սենյա-
կում ենք: Գորբաշովը ցուցադրաբար դիմում է Մուրալիբավին.

— Այսպ, ինչպե՞ս ես: Տանե ինչպե՞ս են:

Մուրամբը: — Ընթափակալուրյուն, Միխայիլ Սերգեևիչ, ապրում են: Միայն թե այսօր ցեղազապահուրյան օրն է, անհանգիստ եմ՝ հանկարծ ունել տիան բան շպառամի:

Նախազահուրյան սննդակում նույն օրը:

Ս. Պողոսյան: — Դուք իսկապե՞ս գործողուրյուններ եք սկսում հայերին բանազարքներու ուղղուրյամբ:

Մուրամբը: — Տավառն գործողուրյուններ չեն նախատեսվում, բայց մենք բոլոր միջոցները կգործադրենք նայ գրահայիններին զինաբաժեկու և Ղարաբաղից դուրս էշելու համար:

Ստեփան Պողոսյանի (ՀՀ կոմկուտակ քաղաքացիար) «ՄԿ Ժողովից Վաճառ ծով» Հինգ ամիս հինգ օր՝ գրքից

— Մա դու չե՞ս: — Քննիլը մի ուրիշ լուսանկար վերցրեց և աշը խորից Ապրիլի 24-ի ցուցցն է, ինքն է, կողքին դարձյալ գաղափարի ուսուցիչը՝ Զագարյանցը, վիրաբույժ էղուարդ Դուկասյանը, մարզի Ռազմիկ Պետրոսյանը:

Շաղված հայացքը կտրեց լուսանկարից:

— Ես չկամ այդտեղի:

— Դու հաճախ ես եղել Ստեփանակերտում, Ի՞նչ հանձնարարություններ ես ստացել:

— Ինչպես բոլորը՝ մասնակցել եմ ցուցին: Ուրիշ ոչինչ՝ Կալանավորին բերանքսիվայր պառկեցնում են հատակին: Զերբերը փոկերով պինդ կապում են մեխերից: Դադանակով խփում են:

Դլիսի՞ն:

Ներբանն երի՞ն:

Երիկամների՞ն:

Ցավից ցնորվում է:

Երբ աշքերը բացեց, ամրողովին զրի մեջ էր: Փոկերը ետ տարան, նստեցրին աթոռին:

— Բա՛... Քննիլը փովեց աթոռին: — Խոզի խորոված էիք ուտում, վրայից թթի արադ խմում: Էնքան կերաք, խմեցիք, որ կատաղեցիք ու միսներս սկսեցինք ծամել: Ի՞նչ վատէիք ապրում, որ երկու ժողովուրդներին իրար խառնեցիք: — Քննիլը վեր կացավ, մի քարտեզ փոեց սեղանին:

— Շան որդի: Ես հողերը ձե՞րն են, որ աշք եք տնկել:

Բարդան, Դաշտեսանը, Շահումյանը, Խանլարը առված էին Հայաստանի տարածքում: Կալանավորը շշմեց. ինքը

Միայն Ղարաբաղի, գրքերից էլ՝ Արևմտյան Հայաստանի մասին գիտեր: Միթե սրանք էլ են մերը՝ մտածեց, բայց բարձրածայն ասաց.

—Ես քարտեղից զլովս չեմ հանում:

—Քեզ էշի տեղ մի դիր: Ի՞նչ կրթություն ունես:

—Ցոթամյա: —Ռազմիկը թաքցրեց, որ երկու տեխնիկամ է ավարտել՝ տեքստիլ և կոշկի արտադրության:

—Ճարեր: Այսօրվա համար այսքանը բավական է:

Խցում տղաները թևատակերից բարձրացրին, նստեցրին: Ուշաթափվեց: Բախսցին դուռը՝ ջուր խնդրեցին:

—Թող սատկի:

Վիտյան հանեց բլուզը, քամհարեց: Խոր շունչ քաշեց և աշքերը բացեց:

—Հորեղբայր, սա էլ քո Ղարսի խորովածը: —Սրտնեղած ասաց Սամվելը:

—Բա առանց տանջվելու խորոված ուտել կլինի⁷, շան որդիներ, էն էլ Ղարսում: Ես դժվար թե, բայց դուք կուտեք: —Մի կերպ շնչաց Ռազմիկը և հիշեց:

87-ին զյուղ գործուղվեց: Զուր շկար: Մեկ կիլոմետրից ութով ջուր էին կրում: Մինչև մեկ տարին ամեն բակում ծարակ դրվեց: Կապ շկար: Ամեն տաճ հեռախոս դրվեց: Դրաց ուրբախան էր, դարձրին միջնակարգ:

Թուժկետ բացեցին: Արեւտանոց բացեցին, ինքնաշեն զենք ունեցան: Ճանապարհները խնապատեցին ու ասֆալտապատեցին: Ամեն օր՝ մի եռ կառուց, մի առաջինադառնում: Մի օր, երբ հավաքվել էին, ինքը ճայից-ճայեց հիացավ իր զյուղով, ասաց՝ տղաներ, էլ ինչ եք ուզում, միացումն արդեն կա, ես մտածում եմ կորցրած մեր հողերի մասին: Պատկերացնո՞ւմ ե՞լ՝ էսպես նստած՝ մի օր Ղարսում խորոված ենք ուսում: Հենվեցին, երեակայեցին, երազեցին:

* * *

Երկրորդ հարցաքննություն:

Քննիլը 32 հոգու ցուցակ դրեց դեմք: Ե-ը՝ զենքի վարպետներ, մնացածները՝ զենք բռնողներ:

—Մրանց զեկավարը դու ես:

—Մի գյուղից ենք:

Դու տեղակ շես, հա՞ն, որ Բարկենը պնդացիր է սարքել:

— Գուցե ատոմային ռումբ էլ է սարքել, ևս բանվոր
մարդ եմ: Զիմ տեսել: — Ու մտածում է, ով է մատնել, տղա-
ներից ո՞ր մեկը...

— Մակից ու Ալբերտի ավտոմատներից ու նոնակներից
էլ տեղեկություն շունե՞ս:

Մախված են՝ Համոզվեց: Իրենը պրծած է, գոնե տղա-
ները չբոնվեն:

— Այս անգամ փախան: Մյուս անգամ մեր ձեռքը կընկ-
նեն, և իրենց Համար՝ ավելի վատ: — Քննիլը կարծես կար-
դաց կալանավորի մաքերը:

— Եսկ քեզ, ձեր սատանա, կգնդակահարենք:
Քննիլը սեղանին փոնց փորձաքննության նմուշներ:

— Ո՞ւմ ձեռքի գործն է:

Ուղղաթիոի լուսանցույցի տակ՝ անցք: Լուսանցույցերի
արանքում՝ գնդակների հետքեր:

— Տեղյակ շեմ:

— Կրակել են «Մոսին» Հրացանից: Փամփուշտները հին
են, թուրքական: — Քննիլը կարգում և աշքն է խոթում փոր-
ձաքննության հետևողունները:

— Մա քո ձեռքի գործն է: — Դագանակով խփեց գլխին:

— Ինձ իզուր եք տանջում: Ծեր մարդ եմ: Կնոջս հետ
մեղու ենք պահում: Տնամեկճռվս եմ զբաղվում: Տեղեկու-
թյուն շունեմ: — Ամեն հարմածի հետ դռնում ու վեր է թշում:

— Կարծում էիք՝ կարող եք նույնիսկ ուղղաթի՛ռ վայր գցել:

1989 թվական: Նշանակման մեջ են: Խենք էլ կուել
են ՌԱՄՊՐՈՒ ճանապարհը: Բայց ուղղարինները օրը 3—4
անգամ Մահեկլուից բռչում են ՌԱՄՊՐՈՒ: Ուղղարինից կրա-
կում են, ահաբեկում: Տղաներով հավաքվեցին Ռազմիկնեց
նկույրում: Եվ են որոնում:

— Ես դրա հարը գիտեմ: — Սամվելի աշխեր փայլեցին:

Դպրոցի տնօրենը երկու օր չեւեաց: Գնաց Վաղու-
հաս, պապի բաքրած հրացանը հանեց-բեւեց.

— Լավ զենք է: Մրանով կարելի է գործ անել: Էս էլ՝ 30
մարտական փամփուշտ: Մեծ հարստության է:

Աղամամուրին երկու հօգի տարբեր ուղղություններով
հասան Աստղաբլուր:

Սամվելը բաքրացավ ծառը:

— Հարմա՞ր է: — Ներքեից կանչեց Ռազմիկը:

— Եշան բռնելը մի տեսակ դժվարանում է:

— Իշխր, գետնից ավելի ճեղու կլինի:

Դիրք բռնեցին: Սպասում են: Ժամը 9-ին՝ առաջին բոիշ-քը: Սամփելը կրակում է: Արագ փոխում է փամփուշտը: Երկրորդ, երրորդ կրակոցներ: Ռազմարիոր օդում տատանվեց, քայլ շարունակեց բոիշքը: Չորրորդ կրակոցն արդին ան-իմաստ էր:

Իշան զյուղ:

— Զեղ շատ էիք ուժեղ կարծում: Ուղղաթիռ վայր գցող-ներ... Կապեք հատակին:

Կալանավորը գողաց ողջ մարմնով:

Թուրքը ցուցափայտը զրեց եղունգի վրա և կրունկով սեղմում է՝ ինչքան ուժ ունի: Երբ աշքերը բացեց, եղունգի ծայրից արյունը ծլում էր գետնին:

— Խոստովանիր: Մեղք կթեթևացնես: Ո՞վ է կրակել:

— Զեմ տեսել: — Նորից ուշաթափվեց:

Երրորդ հարցաքննություն: Զախ աշքը կորցրել է տեսությունը: Լնդերը թուլացել, ատամները թափվում են: Ար-յուն է միղում:

— Մրանից էլ տեղեկություն շունե՞ս: — Քննիլը մազե-քից բռնած քաշում ու ցուց է տալիս ականի վրա պայթած տղայի դիակի փորձաքննության լուսանկարները. դեմքի մի մասը չկա: Մյուս մասը՝ այլանդակված: Զեռքը կտրված է: Աղորերը՝ բեկորներից քայլայված: Վերջույթները չկան:

— Պայթյունն է՞լ չես լսել:

— Զեմ լսել:

1989 թվական: Մայիս: Կովահող տեղամասում տղաները ոշխարը խուզում են: Ավտոմատի կրակահերք: Երբ զյուղից հասան՝ զեղակածեծ, արեաշաղախ բնկած էին աղաները: Քաշիկը՝ հոնի ծառի տակ, Արտաշը՝ 20 մետր հեռու՝ փռում մեջ:

Ալբերտենց տան գետնահարկում գաղտնի խորհրդակ-ցություն է:

— Սա համուս չէ, որ մենք ունենք: Սա հաց չէ, որ մենք ուստում ենք: Ամեն պատառ՝ արյան մեջ բարախած: — Բար-կենք ձեռքը սեղանին զարկեց:

— Աշխերը պիտի վախեցնենք, որ մոտ չգան: Թի չէ՝ օրք մի զան ենք տալու:

— Պատասխան պիտի տանք: Երկաւի փոխարեն շարաբ:

— Կմեռնենք՝ այս հողում, կապրենք՝ այս հողում — Տղաները՝ թենիկը, Զանիկը, Քարկենք, Մակիչը, այրվում են վրեմից: Գիշերը Խաչատուն ու Մակիչը ճանապարհի վրա տկան են լարում: Հետո 12 հոգով հարձակվում են Ռմուրլովի վրա: Փոխադարձ հրաձգություն: Երկու օմոն սպանվում են, ֆերման՝ երկիզվում:

Մեկ շաբաթ անց ոստական զորքերը շրջապատում են Զաղիկը: Ավտոմատային գնդակածություն: Խուզարկություն: Երկու ժամից հետո, երբ զինվորների շղրան բացվում և հեռանում են, զյուրը սպում է հերքալան կրուստը:

Աստղաբյուր բարձունքի ստորառում սպանված ընկած է Խաչատուրը: Զինվորի գնդակը կպել ու ցրիվ է տվել ճակատը: Գյուղին մոտ, հարբավայրում ընկած է Վաղիկը՝ մեջքից գնդակով խոցված: Երկաւն էլ զենքը ձեռքներին անտառ էին փախչում:

Ինչոր մեկը մատնել էր: Բայց թե ով...

* * *

Հարեան խցից անընդհատ լսվում էր կիշանցի Յուրայի բառաշխունը: Ստիպում էին, որ ասի՞ Ղարաբաղը Աղրբեշանի հողն է, չէր ասում: Երբորդ օրը ձայնը մարեց: Բուժակ Դաթիկոն, որին հսկիլը տարել էր խոշտանգվածի մոտ, ետ եկավ ճնշված տրամադրությամբ.

— Հազիվ թե ապրի: Արյուն է թքում:

Գիշերվա ժամը 3-ին հսկիլը դուռը բացեց:

— Երկու հոգի եկեք իմ ետևից: — Ռազմիկն ու Նորելը հետևեցին նրանց: Յուրայի դիակը խցից հանեցին և տարան բակ: Ռազմիկը փակեց հանգուցյալի աշքերը, ձեռքերը խաչեց կրծքին: Հսկիլը դադանակով խփեց զիսին:

— Սատկելիս էլ՝ խաչը շեն մոռանում:

* * *

Հանում են բակ՝ ձեռքները՝ ծոծրակին: Նախքան դադանակները կրարձրանային, շոքում են գետնին:

— Կանգնեցեք: Չեռքներդ ցած: — Հրամայեց հսկիլը:

Հանձնածողով էր եկել ստուգման: Մեջտեղում՝ Աղրբեշանի զիսիավոր դատախազը և մի ուս զնդապետ: Կարգում են պետն-ազգանունները: Հերթը հասնում է Նիկոլայ Օպովին:

— Ի՞նչ Արանց մեջ ոռւսներ էլ կա՞ն: — Նախ զարդար
ցավ, ապա խոռովով գնդապետը:
— Սա երեխ պատահաբար է Հայտնվել այստեղ: — Փոքրձեզ
կոծկել Գափբովը:

— Ինչպե՞ս: — Գնդապետի Հայացքը ավելի խստացավ:

— Մենք դրան առանձնահատուկ ենք նայում: Նույնիսկ
«Մարդուո» ենք տալիս: Այդպիս չէ: Օոլով: — Գնդապետի
առաջ ծռմովում է թուրք բանտապետը:

Օոլովը չի պատասխանում: Կանգնել է գունատ, մեռածի
պես:

— Պատասխանիր, Օոլով: — Բանտապետը մոտենում և
քսու ժպտում է:

Օոլովը զիմով է անում:

— Հըմ: Առաջ անցեք: — Գնդապետը ընդունում է նախ-
կին դիրքը:

Երեք օր հետո Օոլովը շարքում չկար: Ազատել էին:

Երբ հանձնաժողովը հեռացավ, Գափբովը առաջ եկավ:
— Ռամ վրա եք հույսներդ դրել: Հայաստանի: Աղքատ ու
սոված երկիր: Արտասահմանի հայերի՝ ձեռքերը կարճ են:
Սրա՞նց ոռւսների՞: Տեսա՞ք: Ռուսը կամ որսի շունը: Ով շատ
հաց է տալիս, նրան է ծառայում: Մենք հարուստ ենք: Կը-
տանք՝ ձեր համիցը կտանք: Դո՛ւք ինչ ունե՞ք, քա՛ր: Թողեք
հեռացեք այս հողից: Ամեն ինչ վերջացած է:

— Տեսա՞ք ինչ ասաց: — Խցում ճնշող լուսիթյուն է:

— Նա իր իմացածն է ասում, մենք՝ մերը: — Դրմբոնցի
աշխարհագրության ուսուցիչ կարոն տնքաց ու փաթաթանի
տակ հավաքեց փորի ճողվածքը:

* * *

Մեկ ամիս էր անցել:

Վերջին օրը: Շարքով անցնում են, ստորագրում, որ ըն-
դունում են Ադրբեջանի և ԽՍՀՄ սահմանադրությունները:

Ավտորուսը կանգնում է Ստեփանակերտի քաղաքադռա-
նը: Կալանավորները իշնում են՝ ոնց որ հանդերձալ աշխար-
հից եկած ուրվականներ:

— Անտոնյան Ռազմիկ՝ չե՞ք տեսել: — Գավթի փնտրող
Հայացքը հորից սահեց անցավ մյուս կալանավորներին:

Ռազմիկը փլվեց մայթին: Ոստիկան Սամվելը տղանե-
րին բերեց կանգնեցրեց մնջացած հոր դիմաց:

Սիրեցէք ձեր թշնամիներին, բարի
արէք ձեզ ատողներին. օրինեցէք ձեզ
անհծողներին. աղորք արէք ձեզ նե-
ղացնողների վերա... Եւ երե դուք ձեզ
սիրողներին սիրէք, ի՞նչ շնորհիք է
ձեզ... Ուրեմն ողորմած եղէք: Եւ ձեր
վարձքը շատ կինի:

Փայտե նստարանի վրա նա է՝ Գրիգոր Բաղդասարյանը:
Կոճղանման, ալքերը՝ խոշոր, հայացքը՝ անորոշ, կիսավայրե-
նի: Ականջի տեղը խոռոշ է: Ռմբակոծությունից զարդված պա-
տուհաններից հակտեմբերի վաղաժամ ցուրտը ներս է լցվում
կիսամութ սենյակը: Տղամարդը, կինը, շորս փոքրահասակ
երեխանները ցնցոտիների մեջ են:

— Աղջի՞ն ես:

— Կինն եմ:

Տղամարդը տեղից շշարժվեց, շարունակեց նստել ան-
շարժ, պլուխը կախ, ինքնամֆոփի: Թվում է՝ շրջապատում ոչինչ
կապ չունի նրա հետ: Բայց երբ երեխաններից մեկը բարձրաց-
րեց կաթսայի կափարիչը, մարզը գոռաց: Երեխանները սսկվե-
ցին: Ես ցնցվեցի:

— Եյարդային է դարձել: Բանտից հետո: — Կնոջ ժպիտը
տարօրինակ թվաց:

Կինը մոտեցավ, խաղաց շալիս ծոպերի հետ:

— Առնովի է, թի՞ գործել ես:

— Գործած է:

Երեխանները սրտապնդված մոտեցան մեզ, մայրը փա-
ղաքուշ կշտամբեց, և նրանք բաշկեցին մի անկյուն: Նայիցի
երեխաններին ու թվաց, թի նրանք անուն չունեն: Մոր գեմքին
նույն անորոշ, տարտամ, սիրալիք ժպիտն է:

— Հին շոր-մոր թե ունես՝ տուր, իթէ տակի շոր էլ լինի...

— Ու կինը բարձրացնում է փեշը: — Զի հերիքում: Ազնիվ
խոսք, Մարտակերտում, տանը ամեն ինչ ունեմ: Այսինքն՝
ունեինք: Զհասցրինք ոչինչ վերցնել: Թուրքերին մնաց: Հա-
րուստները, պաշտոնավորները, կամաց-կամաց իրենց ունե-
ցածը տեղափոխեցին Հայաստան, մեր մտքով շեր անցնում,
որ Մարտակերտը հանճնվեր:

Ամուսինը մեր զրուցին անհաղորդ, անուշաղիր նստած էր:

Հանկարծ հիշեցի, որ մոտա՞ պայուսակիս մեջ մի քանի
կտոր բաղցրավենիք կա: Հանում եմ, ու փոքրիկ, կեղտից սկ-

վացած ձեռքերը անմիջապես հափշտակում են: Մի կտոր հետ
եմ քաշում ու պարզում տղամարդուն: Կոկորդից խոխոց է
դուրս գալիս, և ես մի կերպ շոկում եմ շնորհակալություն բա-
ռի հնչյունները:

— Մարտակերտում ի՞նչ էիր աշխատում:

— Վարորդ:

Բառերը հնարժարերում է դժվարությամբ: Մեծ ճիգեր
գործադրելով: Զայնը ցածր է, ընդհատումներով, խզոցով:
Խոսելու ժամանակ աղամախնձորը անբնականորեն ցցվում
դուրս է պրօճնում: Աթոս մոտեցնում եմ, որ կարողանամ լսել:

— Իսկ բանտարկությունից հետո:

— Ոչինչ:

Այսինքն ի վիճակի չէ:

— Կոկորդդ ցավո՞ւմ է...

— Պառկեցրել են մեջքիս վրա և կոկորդս սապոզով կոխ-
կըրտել: Որ այնտեղից դուրս եկա, բուժվեցի: Հիմա կարգին
խոսում եմ: Սա էլ են բռնդել: — Զեռքը տանում է դեպի ական-
ջի զատարկությունը: — Բայց կործքս շավացավ: Փոս ընկած
է: Սապոզների հետքերն են: Ցավեցնում է:

— Ընկերոջս՝ ստեփանակերտցի Միշալին խիեցին, շորս
ատամը միանգամից ընկավ: Իմ լինդը պատվեց: Գանակը
բերցին, ինչքան ոսկե ատամ ունեցող կար, շարք կանգ-
նեցրին, բոլորինը հանեցին:

— Շամփուրները շիկացրել են, մեջքներիս դրել: — Մարդը
վեր կացավ, հանեց բլուզը, ցույց տվեց մեջքին վերևից ներքե-
ծագած գորշագուն ակոսները:

— Երբ են բանտարկել քեզ: — Միշանկյալ և անկարեւոր
հարց եմ տալիս, որ ժամանակ գտնեմ և աղատվեմ սահմոկե-
ցուցիչ պատկերից:

— Մայիսի 10-ին: 15 օր՝ Բարդա: Այնտեղից՝ Գերանիոյ:

— Ոնց որ խաղողը ճմառն:

Ասածը նորից կրկնեց: Համեմատությունը ոնց ծնվեց
այս խեղված, մարմնի մեջ: Խաղող և դժոխք: Անհամադրելին
ինչպես համադրվեց նրա ուղեղում:

— Քանի տարեկա՞ն ես:

— 38:

Մարդը 20-25 տարով ծեր էր երևում:

— Եթե թուրք պատահի, ինչ կանես:

— Անխիղճ են: Բոլորը: — Խոսափում է ուղիղ պատա-
խանից և գլուխն օրորում է, այսինքն, ոչինչ չի անի:

— Կնոջը այնտեղ կատարվածի մասին պատմել ես:
Հարցնում եմ, որ կնոջ միջոցով լրացնեմ շասվածը:
Փափախ նման մի բան աղավաղվեց դեմքին:

— Ինչու հոգին քրքրվի, առանց այն էլ տեսածը շատ է:
Հետո էլ այնտեղ այնպիսի բաներ են կատարվել, որ ինձ հետ
դերեզման կտանեմ: Իսկ եթե շատ ես ուզում իմանալ, կի՞ն
նստածներից հարցորու, նրանք գուցե ինչ-որ բաներ պատմեն:

Ուժերն արդեն չեին հերիքում շարունակելու զրուցը:
Զայնն ամրողովին խզվել էր: Աթոռին նստած զգում եմ, որ
ուժերս փայտացել են, ու ներքին դող է պատել ինձ՝ զրուցից,
պատուհանից փշող ցրտից, շրջապատից: Ուժի եմ կանգնում:
Կի՞ն ուղեկցում է ինձ մինչև դարպասը:

— Օճառը, շորերը շես մոռանա, Կրերես, չէ,
Ռիտան նորից խաղում է շալիս ծովերի հետ:

* * *

Երկրորդ հանդիպում: Գրիգորը դրսից փայտի կտորներ է
քարշ տալիս վառարանի համար:

— Աղքակուտաբերից է հավաքել: Ինչ անենք, պիտի ապ-
րենք: — Շաղակուտում է Ռիտան:

Գրիգորը նստեց նստարանին նույն դիրքով գլուխը կախ:
... Բարդայում երրորդ օրը դուռը բացեցին, պարկի նման
մի բան շպրտեցին ներս: Ներ մի կի՞ն էր՝ ծեծված, շարդված,
շորերը պատառտած:

— Ո՞վ ես: — Հարցրեցի:

— Հայ եմ: — Կի՞նը պատասխանեց դժկամ, թուրքերեն:

Ամբոխը հավաքվել թուրքի տան առաջ, պահանջում էր
կնոջը:

Ամուսինը նայեց տղաներին, տղաները՝ հորը: Կի՞նը սսկվել
կուշ էր եկել իր տան անկյունում: Ամուսինը դուրս եկավ ամ-
բոխին ընդառաջ՝ համողելու ձեռք քաշեն: Տան ներսում՝ նրա
ձայնը շէր լսվում, իսկ ամրոխի զայրութը, վանկարկումները
հասնում էին մոր ու տղաների ականցին: Մայրը շկարողացավ
նայել տղաների աշքերին: 17 տարեկանից թուրքի տան հարսը
առաջին անգամ զգաց իր օտարությունը: Աստիճանների վրա
կոպիտ ոտնաձայներից կի՞նը հասկացավ, որ ամուսինը չէ: Որ-
դիները՝ նույնպես, Տղաները շմուտեցան մորը: Մայրը շկարո-
ղացավ վերջին պահին նայել իր զավակներին, ինչպես նաև
շնայեց, բայց ներքին զգայարաններով շոշափեց, տեսավ ամ-
բոխի առաջ գլխիկոր կանգնած իր երկրորդ կեսին:



Ականջը կտրած կալանավորը. Գրիգոր Բաղդասարյանը

Կնոջը թողեցին Գրիգորի մոտ, խցում: Կինը հայերէն ոչ
մի բառ շասաց: Կոռում էր, կոծում էր՝ ես թրուցի եմ, ինձ
տարեք ձեր պետի մոտ, նրա հետ խոսելիք ունեմ: Հսկիչները
ուշադրություն չեն դարձնում: Կինը բարձր-բարձր բանափառ-
խատողներին ի ականջ սկսեց հայոյել հայերին:

— Եղիր, բաժ, հիմա վերկենամ ոտքերիս, տակ կտամ:
Զդիմացավ Գրիգորը:

Հսկիչը գուրը բացեց.

— Թե տղամարդ ես, շարունակիր: — Կալանավորը լոեց:

Մի բանի օրից հետո եկան կնոջը տարան: Երեք օրից բերեցին՝ տանջահար: Գցել էին շրանցքը, որ խեղպի, երկար տարածություն քշվելուց հետո ալիքը ափ էր շպրտել՝ կենդանի: Կինը խելքը գլուխը հավաքեց: Տասը օրվա ընթացքում հայերեն ոչ մի բառ շասաց: Գրիգորը հարցում փորձ արեց, կինը խոսափեց, ոչ մի բառ շասաց՝ ոչ ամուսնու, ոչ տղաների մասին:

Գերիներին տեղափոխեցին Գերանբոյի բանտ: Կնոջը տեղափորեցին հարկան խցում: Առավոտայան բուրրին հանեցին գուրս: Երբ ներս եկան, տեսան՝ կինը չկա: Հսկիչը կանչեց Գրիգորին.

— Սրա տեղաշորը փաթաթիր բեր: Կալանավորի աշքերը մնացին չոված: Մեղաշորն արնաշաղախ էր:

— Ինչ եք արել կնոջը:

— Մորթել հնք: — Անտարբեր նետեց հսկիչը:

* * *

Առաքելան կեռնի մսերը պատովել ու կախվել էին: Ծեր մարդ էր, սիրտը՝ հիվանդ, չեր դիմանում: Տարան Միրրաշիր: Փոխանակել շաշչողեց, երեք օրից ետ բերեցին: Համբաց ընկած, միայն մի շունչ էր զնում-գալիս: Աշերը բացեց, չուր ուղեց: Հսկիչը մի բաժակ տվեց: Մինչև վերջին կաթիլը ծրծունքեց և... մեռավ: Ոնց որ քներ, առանց մի բառի, առանց մի ծպտուն հանելու, առանց տնքոցի:

Գրիգորը գուրը ծեծեց, հսկիչն իմաց արեց:

— Բոլորդ պիտի սատկեք: — Ու փակեց անցքը:

24 Ժամ հետո եկան, հրամայեցին դիակը հանել միջանցք: Կալանավորը նայեց դիտանցքից: Մի թուրք սերժանտ, անունը Ռովշան, մոտեցավ գանակը հանեց, մեռած մարդու ականջները կտրեց: Գրիգորը փլվեց հատակին:

ՄԵԶԲԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

Ա. Վ. Կիզման, Ռուսաստանի Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեի հասուրկ լիազոր:— Ասացեք, խնդրեմ, ո՞ւմ կողմից է անցկացվել անձնագրային ուժինի ստուգումը մայիսի 12-ից սկսած:

ՊՈԼՈՉՈՎ:— ԽԵՍՀԸ ներքին գորածասերի կողմից Աղքաբեշամի իրավապահ մարմինների գորաքաժամումների օժանդակությամբ:

ԿԼԻԳՄԱՆ:— Պարետատունը ումի՞ տեղեկություն այն մասին, որ կատարվել է բռնություն, ունեցվածքի խոռն, սպասություն:

ՊՈԼՈՉՈՎ:— Պատասխանում են: Անձնագրային ուժինի ստուգման ժամանակաբնաթացքուն շարդեր, բռնություններ չեն եղել: Դրանք եղել են ստուգումից հետո...

ԿԼԻԳՄԱՆ:— Բայց եղել են:

ՊՈԼՈՉՈՎ:— Ես հիմա կասեմ: Մեզ մոտ կան միայն նեռագրեր տարրեր մակարդակների, սկսած երկրի պրեգիդենտից վերջացրած մեր շրջանի պարագաներից՝ պահանջով՝ վերլուծել պարզել և տալ իրավաբանական գնահատություն: Ենոյն փաստերը, որ մեզ հայտնի են դարձել այդ նեռագրերից, մենք ուղարկել ենք, նաև պատասխանարար ընկեր Պավակին և երեք մեճք գտնել ենք՝ պետք է նանրապեսուրայն դատավազություն, որի օպերատիվ բնշական խումբը գրադպատ է այդ գործերով:

ԿԼԻԳՄԱՆ:— Ձեզ մոտ ընդհանրապես ոչ մի տեղեկություն չկա:

ՊՈԼՈՉՈՎ:— Քննություն կատարելը չի նաևում ներքին գորքերի իրավասության մեջ:

ԿԼԻԳՄԱՆ:— Մեզ նեռագրուն է բաղաքացիական բնակչության ճակատագիրը: Մենք այժմ որոշակի գիտենք, որ մեծ քանակությամբ մարդիկ, բաղաքացիական բնակչություն, ոչ թե գրուայիններ, որ ուսմեր կամ այլ բաներ են պատրաստուն, մեկնել են այս տարածքներից, որտեղ երանք մշտապես ապրուն են: Ո՞վ պետք է ապահովեր երանց անվտանգությունը, միիցիցա՞ն, դատավագությունը, ՊԱԿ-ը, զինվորնե՞րը: Ո՞վ պետք է պատասխան տալ Ո՞վ պետք է վերահսկի իրադրությունը:

ՊՈԼՈՉՈՎ:— Մես տարիներին, անկանած, փաստաթուրերի համաձայն, տարածում հասարակական կարգի, օրինականության համար պատասխան է տախի պարետությունը: Մասնավորապես, ի նկատ ունեմ բաղաքացիների մեկնումը: Զարթների իրադրություններից հետո ԼՂԲՄ-ի խորհրդային մարմինները մեզնից օգնություն են խնդրել և Ստենամակերտ ենք հաւաքի 1400 կիմ և երեսաւ: Եղել են ան այսպիսի դեպք Շուշիի շրջանուն: Երբ նեզ դիմու են մարգի զեկավարները ուղղաթիռ տրամադրելու աշխատեցից նոյն կնոջ դուրս բերման համար, մենք ապահովել ենք

Արանց անվտանգությունը: Խաչ Վերաբերում է շարապամթ,
Հարդուիք շրջանու ողեկցել է Աղրբեշանի միլիցիան,
Ըստի շրջանու խորհրդային բանակը:

Ն. Մ. Արժաննեիկով, մարդու իրավունքների կոմիտեի
նախագահի տեղակալ:— Պատասխանը ինձ չի բավարա-
րում: Որովհետև հասարակական կարգի պահպանում հաս-
կացության տակ եւ պատկերացնում եմ՝ անվտանգության
ապահովում: Մինչդեռ նրանք պահովում են կարգուկան-
եր, որպեսզի նրանց դուրս բերեն: Բայց հարկավոր է, որ
ամսուել, որտեղ մարդիկ ապրում են, ի մկանի ուժում քա-
ղաքացիական բնակչությանը, նրանց ոչ որ չնեղացնի:

ԿՈՎԱԼՅՈՎ:— Դուք ասացիք, որ ներքին գործերի գո-
րամասները բնաւուղանանմանը չեն մասնակցեն: Խոկ ար-
գելք բնադիմացնե՞ն են:

ՊՈՂՈԶՅՈՎ:— Անդրադառնանք օրենքին:

ԿՈՎԱԼՅՈՎ:— Օրինավո՞ր է, որ մարդկանց ապրելու
վայրից քշում են:

ՊՈՂՈԶՅՈՎ:— Հայուարարում եմ պրեզիդենտի, Գերա-
գովն խորհրդի նախագահության նրամանագիրը արտա-
կարգ դրության մասին, երկրորդ կետը, որտեղ ասված Է՝
Ժամանակավորապես արտաքինացնելով քաղաքացիներին...
Դրա համար այդ խնդիրը լուծելիս, որի մասին դուք հիմն
խոսում եք, Աղրբեշանի կառավարությունը և ԼՂԻՄ-ում
գործող կառավարման մարմինները (կազմկոմիտե), հեմվել
են օրենքի վրա: Տեղում՝ կառավարման մարմինների՝ մա-
սնավորապես Աղրբեշանի ղեկավարության, գործունեության
մեջ խառնվելու, միշտանելու իրավունք մենք չունենք: Օրեն-
քի՝ համաձայն:

ԿՈՎԱԼՅՈՎ:— Շենքակապություն: Պարզ է: Հաջորդ
հարցը, կարո՞ղ է պատահել, որ պարետությունը շիմանա
տարածքում անցկացվող գործողության մասին: Ո՞ւմ որո-
շումն էր, դուք եք եք այդ մասին իմացն:

Ա. Վ. ՊՈՂՈԶՅՈՎ:— Մենք բնակչության տեղահանման
հարցերով չենք զրադպում: Եթե դուք ուզում եք իմանալ իմ,
որպես մարդու, անձնական կարծքը, ինձ համար անընդու-
նելի են բոլոր ձևերն ու միջոցները, որով լուծում են հիմ-
նարարը կտնաշին Ղարաբաղուն: Դա իմ մարդկային
գիրքորոշումն է: Ես հարցի խաղաղ լուծման կողմ-
նակից եմ: Հարցի երկրորդ մասը՝ ով է համա-
ձամեցրել պարետության ներ այդ հարցերը: Նորից
եմ կրկնում: համաձայնենելով պետք չէ: Դրանք որոշված են
օրենքով, և Աղրբեշանը ղեկավարում է օրենքով: Ուրիշ
հարց է, նրանք ինչպես են դա իրականացնում: Կա դատա-
խագություն, կան այլ մարմիններ, որոնք կարող են պար-
զություն տացնել:

ԿՈՎԱԼՅՈՎ:— Առանց համապատասխան որոշման,
նույնիսկ օրենքը հիմք ընդունելով, բնակիչների տե-
ղափոխում հնարավոր չէ իրականացնել: Պատ-

կերացրեք, ձեզ հայտնի է, որ ինչ-որ մեկը ժարդ-կանց ավտոբուս է հասեցնում և տանում: Դուք որ-տեղից գիտեք, օրենքի վրա հիմնվեր՞վ են տանում, թե՞ տանում են անտառում գնդականարելու կամ լճում խեղդելու: Ձե՞ս որ դուք պարտավոր եք նախկի կարգ: Պար-տավոր եք նետաբրբերվել, թե ինչ է կատարվում: Հարցենում եմ ում որոշումն է: Զեր մարդկային դիրքորոշումը գրավիչ է, բայց ինձ բոլորովին անհականալի է Զեր պաշտոնական դիրքորոշումը:

ՊՈԼՈՉՈՎ:— Պարենտովյանը չեն տեղեկացրել, որ այդ բնակավայրերից ծողովորդը տեղահանվելու է:

Հունիսի 18

Խորհրդարանական ուժներում

* * *

Կանգնած են՝ հրապարակ բացած: Մեջտեղում Գրիգորն է, Միշան և 23 տարեկան բարեկան բաքվեցի մի հայ: Դանակը տվեցին Գրիգորի ձեռքը:

— Կտրիր ականջը կամ քեզ սպանում ենք:
Գրիգորը դանակը շպրտեց:

Միշային հրամայեցին նույնը՝ Գրիգորի ականջը կտրել: Դանակը գցեց ձեռքից: Կանգնածները սպառնալից շարժվեցին դեպի բաքվեցի տղան: Բոռնցքներ իշան գլխին: Տղան կտրեց Միշայի ականջը: Հետո արյունոտ դանակը շպրտեց ու չոքեց գետնին: Խաժամուժը վրա պրծավ Գրիգորին.

— Եթե չես ուզում մեռնել... Քեզ ապրելու վերջին հնար-ռավորությունն ենք տալիս:

Բաքվեցի տղան ձեռքերով գլուխը բռնած դողում էր: Գրի-գորը շպրտեց դանակը:

— Սա ուրիշ տեսակ մարդ է:— Ասացին ու տարան: Նստած էր ոստիկանի համազգեստով բարձրաստիճան թուրքը:

— Սպան մոտեցավ, նկար հանեց՝ գունավոր, գեղեցիկ:

— Ճանաշում ես,— Հարցրեց:

— Զէ:

— Հիմա կճանաշես:

Դանակը հանում է և...

Բլուզը հանեց, դրեց կտրված ականջին, պառկեց կողքի: Երկու օր մնաց այդպես:

Խղզոցը շատացավ: Գրիգորի վերջին բառերը ավելի շատ կուահում էի, քան լսում: Կինը տաք թեյ էր զրել մոտը, մի քա-նի կում արեց:

— Բայց զորավար Անդրանիկի ո՞ր ականջն է կտրված
եղել:

Աչքերի խորքում շող հայտնվեց: Խոպոտ, խզոցով ձայնը
դարձավ փափուկ: Հայցքի անորոշությունը կորավ ու սպասո-
ղական, ուղիղ ինձ է նայում:

— Ասացին՝ նրա աշն է եղել կտրված:

ՄԵԶԱԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

Աղբեջանի հայաբնակ շրջաներում, Լեռնապի Ղա-
րաբաղում և Աղբեջանի մետ Հայատանի սահմանակից
շրջաներում բռնուրդում է գործադրվում՝ «Բարեկանելոր» անվան տակ: Գատժվում
է մի ժողովուրդ, որը ցանկանում է օգտվել ինքնորդշան իր
սահմանադրական իրավունքից: Նշված շրջաներում, որտեղ
նախապատճական ժամանակներոց ապրել, արարել և զոհ-
վել են նայերը պաշտպանելով իրենց նայենիքը, մեր իշ-
խանուրյամբ իրականացվում է երանց բռնաւեղանանումը:

Հակամարտուրյան Շրջանում՝ մարտական առաջարկան-
քի կատարման ժամանակ՝ (անձնագրային ուժիմ ստոր-
գում, արցատական բնակչության տեղաբանում, ինքնա-
պաշտպանության խթերից գեների առօրավում), պետական
գինորդական կազմավորումները օգտագործում են տեղո-
րիստների և պատժչների փորձված մեթոդը՝ խաղա-
բնակչությունից պատահեներ վերցներ...

Օստվակի, Կերպել, Ցիգավ, Շունով, Տարսև, Տիմչև...

Մայիսի 25, 1991 թ.

ԽՍՀՄ Գեղարվեստի Ակադեմիայի անվանի գործիչների,
ակադեմիկոսների, թղթակից-անդամների ԽՍՀՄ պրեկիդեն-
տին գրած նամակից

Եւ ձեզ պիտի առնեմ ազգերի մի-
ջից եւ ժողովեմ ձեզ ամեն երկներից
եւ ձեզ բերեմ ձեր նողը. Եւ ձեզ
վերայ մաքուր չուր պիտի սրսկեմ. Եւ
վեր պիտի առնեմ ձեր մարմնիցը ժա-
րելէն սիրաք եւ ձեզ մարմնեղէն սիրտ
պիտի տամ: Եւ պիտի անեմ, որ իմ
օրէնքների մէջ վարուիք եւ իմ դատաս-
տաները պահէք... Եւ իմ ժողովուրդը
լինէք եւ ես ձեր Աստուածը լինեմ:

Մայիսի 16: Հին Շեն: Ժամը 9.00: Գործողությունն ա-
վարտված է: Տղամարդկանց լցնում են ավտոբուսները: Շա-

բասյունը շարժվամ է դեպի Լաշին։ Գնում են տանջալի դանդաղ, կանգառներով։ Ճանապարհին հաճախ են հանդիպում արնածաբավ հրուսակախմբերի։ Ամեն անգամ՝ ծեծ, անարդանք։

— Աստված կդատի մեզ, — մի կանգառում հնչեց թուրքի մի վեհերոտ ձայն ու անմիջապես էլ խլացավ ամբոխի վայրենի ազաղակներից։

Կես ճանապարհին ավտոբուսը կանգնեցրին։ Ռուս սերժանտ էր։

— Ինչպես էինք պայմանավորվել։ — Պաշտոնական և ազդուու հարցրեց։

Թուրք ուղեկիցները ոչինչ շպատասիանեցին։

— Զեկ հրամայված էր տեղահանումը կատարել մարդավայրել։ Իսկ դուք... Զենքներդ հանձնեք, շուտ։

Սերժանտը կատակ չէր անում։ Թուրքերը դժկամությամբ, բայց հանձնեցին ավտոմատները։ Ատրճանակները՝ նույնպես։

— Սա ի՞նչ բան է։ Ես բոլորում եմ։ — Համարձակվեց մեկը։

Սերժանտը անուշադիր՝ շարունակեց։

— Ճանապարհից՝ ոչ մի շեղում։ Ուղիղ՝ մեր ետևից։ Լաշին։

Ավտոբուսից մինչև շրջմիլիցիա՝ 25 մետր հատվածը ամբոխը շրջափակել էր։

Զարդ։

Խցում 40 հոգի են։ Թուրք սպան բացեց դուրը։

— Մարդավարի ապրելը շհասկացաք։ Սրան եք արժանի։ — Եվ արցունքաբեր գազ բաց թողեց։

Ամբոխը գոռում էր։

— Կոտորեցեք։ Մորթեցեք։ Հենց այստեղ։ Սրանք բանտի հացին անգամ արժանի չեն։

— Պիրիեւ։ — Ներկայացավ ոռւս գնդապետը։ — Ներիք եղավ։ Տանձեցիք էս ժողովրդին։ Համբերության բաժակը լցվել է։ Հայտարարում եմ՝ ով զենք ունի՝ թող բերի հանձնի։ Ով զենքի տեղ գիտի, թող ցուց տա։ Հրամանս կատարողը մինչև երեք ժամը ազատ կարձակվի։ Գործողությունը՝ անձնագրային ռեժիմի ստուգում, զեկավարում եմ ես։

— Իսկ եթե զենք չկա՞։ — Շարքից ձայն հնչեց։

— Կա։ Համոզված եմ։ Գնացեք մտածեք։

Երկրորդ օրը։

Հսկիչը Ալոշալին ուղեկցում է բանտապետի մոտ։

— Ես մարզի գլխավոր դատախազն եմ; Պլավսկի; Բողոք
ունե՞ք:

Միթե՛ չի տեսնում՝ ինչ վիճակում եմ՝ մտածեց ու պատաս-
խանեց.

— Ոչ:

— Դուք գրանցված շեք այն գյուղում, որտեղ ապրում
եք; — Դատախազը նայեց արձանագրությանը:

— Զեմ հասցրել, բայց այնտեղ եմ ծնվել, միջնակարգն ա-
վարտել:

Պլավսկին՝ անուշադիր կալանավորի խոսքերին՝

— Ուրեմն սրա կալանքն օրինավոր է; — Ասաց թուրք
քննիչին:

— Ազատ ես; — Շրջվեց:

* * *

Կռացրին: Բարձրացան սեղանի վրա, որ դագանակի հար-
վածները շեշտակի իջնեն մեջքին:

— Հրաժարվո՞ւմ ես, որ զենք ունեմ:

— Չունեմ:

— Իսկ եթե ձերոնցից կանգնեն և ասեն՝ ունեմ:

— Որ շոնեմ՝ ո՞նց կասեն:

Քննիչը դարակից հանեց մի ցուցակ և շրջեց կալանավորի
կողմը:

— Կարդա՞:

— Բարձր:

— Ավանեսյան Ալյոշա: Կարարին: Նոր Հաճնից:

Ալյոշան ճանաշեց Առնոլի ձեռագիրը:

— Համառությանդ համար՝ դաս:

Երկու ժամից հետո նորից կանգնած էր քննիչի առաջ:

— Գրոհայի՛ն ես;

— Զենք եմ պահում:

— Զենք ունեմ:

— Գողերը շատացել են.

— Գրիր: — Թելադրեց քննիչը.

«Մկրտչյան Առնոն կարարինը տվել է, որ թուրքերին
սպանեմ»:

— Սպասիր, գրան շեն հավատա: — Ասաց երկրորդ քննի-
չը: — Անքնական է ստացվում: — Եվ շտկեց. — «Զենք եմ վերցրել
թուրքերից պաշտպանվելու համար»:

— Իսկ հիմա՝ կարարինի տեղը:

— Ցուց կտամ:

ՈՒԱԶ-ը շարժվեց դեպի Հին Ծեն: Կալանավորից բացի
վեց հոգի են: Մեծում են՝ հենց ընթացքի մէջ:
— Հերիք է: Հալից ընկապի: Լուսանկարելու համար թողեք
մի քիչ տեսքը տեղը մնա: — Միջամտեց երիտասարդ թուրք
սպան:

Անտափի ծալրը: Ֆերմայի մոտ: Քարը շրջեց:
— Զըխկ: Զըխկ: — Լուսանկարում են:
Զեռքը մեկնեց կարարինին:
— Զըխկ: Զըխկ:

* * *

Նորից հարցաքննություն:
— Զենքի պահեստի տեղը:
— Զգիտեմ:
Կալանավորը չէր ստում:
— Ճանաշո՞ւմ ես Առստամյան Գագիկին:
— Ճանաշում եմ:
— Խոստովանել է, որ Եղծահողի տակ թուրք վարորդին
միասին եք սպանել:
— Զի կարող: Նման բան չի եղել:
— Դատական փորձաքննությունը պարզել է, որ քո կարա-
րինի փամփուշտն է:
— Հնարավոր չէ:
— Հմիմա կիսուսովանես: — Քննիչը, որ իրեն ներկայացրեց
որպես Ասազովի հատուկ խմբից, վեր կացավ:
— Մինչև հիմա ստացած մանկական խաղ էր:
Կանգնեցրեց պատի դեմ: Փայտե մի ձող առավ և սկսեց
խփել զիխին: Կալանավորը սկզբում ցավ չէր զգում: Հարված-
ները կամաց-կամաց և ուժեղանում, և արագանում են:
Նրան թվաց, թե գլուխն սկսեց ուռչել: Դիտակցությունը
մթագնեց:
— Հերիք է: Կմեռնի, մեր զահլեն են տանելու: — Լսեց
բժշկի ձայնը:
— Ես ոլ ոքից չեմ վախենում: — Քննիչն էր: — Սա պիտի
խոստովանի:
— Անմեղ եմ: Կյանքում մարդ սպանած չկամ: — Ուռած
լեզուն մի կերպ շարժելով կմկմաց Ալյոշան:
— Իսկ եթե ազատ արձակենք, կարո՞ղ ես օգնել մեր մի-
լիցիային:
— Ինչպես: — Նվազած հարցրեց կալանավորը:

- Եթե մարդ սպանեն, հայտնիս:
- Ես իմ քաղաքացիական պարտքը կկատարեմ;
- Ազրբեջանի՝ քաղաքացու պարտքը: — Շեշտեց քննիլու:
Գիտակցությունը մթագնեց:

* * *

- Քննչական մեկուսարան:
- Ճանաչո՞ւմ ես Խաչատրյան Մելիկիկին:
 - Համագյուղացիներ ենք:
 - Որտե՞ղ է աշխատում:
 - Պանրի արտադրամասում:
 - Զարմանալի է: Եթե գրոհային չէ, ինչո՞ւ է հրաժարվում
սրան ճանաչելուց: — Քննիլը զիմեց կողքի նստածին:
 - Կարդա՞՛: — Մի բուղթ մեկնեցին Ալյոշային:
 - Թուղթը շուտով տվեց:
 - Տառերը հայերեն են, բայց հնարավոր չէ կապակցել:
 - Քննիլները հոճում են: ...Կախել էին առաստաղից: Ոտ-
քերը՝ իրարից հեռու: Մեկ ժամ գանահարել ու խոշտանգել էին:
 - Այդ վիճակում էլ ստիպել են որել, որ ճանաչում է:
 - Մելիկիկին խուց բերեցին: Այլանդակված Կիսամեռ: Ալ-
յոշան մոտ քաշվեց:
 - Համառելդ ի՞նչ իմաստ ուներ:
 - Կարծում էի՞ զա էլ շպիտի ասեմ: — Լաց եղավ:

* * *

- Մեկը բացեց ակնատը: Միլիցիայի աշխատակցի հա-
մազգեստով էր: Ծխախոտ պարզեց:
- Ո՞վ ես:
 - Մսիեթցի թուրք: Հիմա թեյ և հաց կրերեմ:
 - Քիչ հետո վերադարձավ:
 - Հասցեղ ասա, Շաքիր: Լավությանդ տակից դուրս
կգանք:
 - Աստված տհանում է և դատում:
 - Աստված քնզ ճետ, Շաքիր:
 - Հետքերը մաքրեք: Զիմանան: Ես այստեղ օտար եմ՝
ոնց որ դուք:

* * *

Շուկելլան:

- Ցուրա՞: Դու էլ ես այստեղ:
- Վերջն է, վերջը: — Զոր մաշկի վրայով կաթեցին աբ-

ցունքները: — Մարմինս շեմ զգում: Ներսս ոնց որ փառած...
Դեմքն այլակերպված էր Զեռքերը՝ կոր, զոսացած:

* * *

— Չեմ դիմանում: — Գոռում ու թավալվում է Ալլոշան: Գագիկը գրկեց բարձրացրեց:
— Քեզ ի՞նչ է եղել: Մի քանի ամիս կնստես՝ բաց կթող-նեն: Բա որ ի՞մ տեղը լինեիր:
— Ուզում եմ հիշել տղաներիս դեմքը՝ շեմ կարողանում:
Հո շեմ խելագարվում, Գագիկ:
— Պինդ կաց: Քեզ հավաքիր՝ որ դիմանաս: Ես շեմ վա-խենում: Գիտեմ, որ զնդակահարություն են տալու: Դա՝ հեշ: Դատն է ծանր նստելու հոգուս: Ծաղրելու են, ստորացնելու են: Մտածում եմ՝ ինձ ոնց պիտի պահեմ:
Գագիկը վեր կացավ, իր բաժին հացն ու շաքարը հանեց և ստիպեց ընկերոջն ուտել: Ալլոշան ուտում էր, իսկ ինքը դեռ իր մտքերի հետ էր:
— Մեզ պատանդ էր պետք: Մենք ստիպված կրակեցինք:

* * *

— Սերոբ: Սերգեյ: Ալլոշա: Մհեր: Հենրիխ: — Կարդում են անունները:
Կոացնում են, նստում մեջքներին ու դադանակով հարվածելով տանում են մինչև հատուկ մեկենան:
Աղդամ: Դժոխքի վերջին դուռը:
— Կինդ որտե՞ղ է: — Հերթական ստորացումն է:
— Կրասնոդարում: — Պատասխանում է Սերգեյը:
— Գրիբ: — Թելագրում են:
Գրում է. «Իմ կյանքը կախված է քեզնից: Փրկիր ինձ»:
Թուղթը պատում է թուղթը, հարձակվում կալանավորի վրա:

— Դու ծախեցիր կնոջդ, շուն: Դու ի՞նչ մարդ ես: Կալանավորը հարվածների տակ վնասում և լաց է լի-նում: Երեկոյան կողմ նրան մեքենա նստեցրին և տարան: Նախիջևանիկի մոտ թուրքերը ջարդ էին կերել և կալանավորին մահվան սպառնալիքի տակ ստիպեցին կրակի տակից հանել մի քանի դիակ:

Երբ կալանավորներին նստեցրին մեքենան, Սերգեյը լմո-տեցավ:

— Դու մնո՞ւմ ես: — Զարմացած հարցրեց Սերոբը:

— Գործ կա: — Նայեց խեղճ-խեղճ, վիզը ծռած:

Ընկերները հասկացան, որ մեղք ունի գործած:

— Կներեն: Արի: — Ասաց Ալլոշան:

Գլուխն ավելի հակեց:

1992 թվական: Մարտ ամիսն էր:

Մեքենայի միջից կալանավորները ետ նայեցին և տեսան,
թե ինչպես է մաքրում արցունքները:

Մեկ ամիս հետո լսեցին, որ թուրքերը կտոր-կտոր են ա-
րել տղային:

◆◆◆

Եօրեապատիկ նատուրում արա մեր
դրացիներին իրանց ծոցի մէջ՝ իրանց
այն նախատինքը, որով լեզ անարգե-
ցին, ով Տէր:

Կուացավ, թարմ վարունգ պոկեց ու մեկնեց թուրք Ռահ-
մանին:

— Զրուց ունենք քեզ հետ:

— Բարով համեցեք... Տուն մտնենք, օջախ է...

— Զրուցից հետո...

Զրահամեքենայի մոտ երեք ոռւս զինվորներ ոլորեցին
ձեռքերը:

— Ռահման, մեր կարած աղուհացը...

— Շուշիում կխոսենք:

1991 թվականի հունիսի 4-ն էր:

* * *

Պատուհան-անցքը բացվում, փակվում է: Վայ նրան, ով
նստած տեղը կննջի, ձեռքը ծնոտին կդնի կամ կզրուցի:

Տանում են հարցաքննության.

— Գրոհայինների անունները:

— Զգիտեմ:

Քննիլը դարձակից մի լուսանկար է հանում:

— Ովքե՞ր են:

Բովուրիսանի անտառում աղբյուրի մոտ քեֆ են անում:
Հատերին շի ճանաշում: Սանոթներ կան: Բայց եթե մեկի ա-

Նունը տա, սկսելու են փորփրել. ինչ նպատակով, ինչպես,
ինչու իսկ ինքը ասելիք չունի: Լավագույն միջոցը հրաժարվելն
է:

— Զեմ ճանաշում:

— Քեզ էլ շե՞ս ճանաշում:

Նորից նայեց: Նստած է մեջտեղում ու դեպի վերև է նա-
յում: Ուղղաթիռից են լուսանկարել, հազիվ է ճանաշում:

— Ես չկամ այստեղ:

— Լա՞վ նայիր: Նորից նայիր:

— Չկամ:

Քննիչը սեղմում է զանգի կոճակը: Թուրքերը ներս են լրց-
գում:

Քթից-բերանից արյուն ժայթքեց: Վերնաշապիկը քրքըռ-
վեց: Աթոռի թիկնակին երկար տախտակ ամրացրին ու ձեռքե-
րը կապկալեցին: Աթոռը շրջեցին թիկնակի վրա: Երկու հոգի
կանգնեցին ձեռքերին: Մետաղալարով ծեծում են: Բերանը
լաթ խցկեցին: Նվազում է: Լաթը հանում են:

— Գրոհայինների անունները:

— Չդիտեմ:

— Ջենքի պահեստի տեղը:

— Չկա:

Լաթը նորից են խցկում:

Զի Հիշում, թե ինչպես ընկերը՝ Համլետը գրկած բանտա-
խուց է տարել: Թրջոցներ են դնում: Ուշքի է գալիս: Վիկտորը
շոշափում է կողոսկրերը.

— Սա ի՞նչ բան է:

Կողոսկրերի կոտրատված հատվածները նրա ձեռքի տակ
այսուայնկողմ են շարժվում:

* * *

Հունիսի 8: Նորից՝ քննիչի մոտ: Համարյա մերկ է: Հազիվ
է կանգնում: Զգում է, հենց մի թեթև խփեն կընկնի: Մեկը յո-
տեցավ ու բռունցքով ներկրից վերև՝ աչքի տակ: Այտոսկրը
շարդվեց: Աշքերը բացեց կալանախում: Լեզվի տակ դառն
ինչոր բան զգաց: Բժիշկը կուցավ նրա վրա:

— Ճանաշում ես:

— Ոչ:

— Վաղը կճանաշես:

Տանում են ունտգեն նկարահանման: Հինգ կողոսկր շարդ-
ված է: Փաթաթում են:

— Հիվանդաթերթիկ եմ ձևակերպում և քեզ վեց օրով ուղարկում բանտի բուժմաս: — Բժիշկը բարություն է խաղում: Հրաժարվում է, խնդրում իրեն թողնել խցում: — Կողքահաստություն պետք չէ անել: Ինչ որ գիտես, ասա և ազատ կարձակեն քեզ: — Եթե իմանայի՞... — Զիմացողն այստեղից դուրս չի գալիս, հասկացիր: Եվ լավ մտածիր: Վեց օր քեզ ժամանակ:

* * *

Հսկիչը դուռը բացում ու ներս է մտնում բանտի աշխատակիցների հետ:

— Վաշագան:

Միակ շծեծվածը նա էր: Տարան հանդիպման, անգլիացի և ոռու թղթակիցներ էին եկել բանտ:

— Եթե լեզվից որևէ բան թոցրիր, հենց այստեղ, դուան մոտ քեզ կենդանի-կենդանի կթաղենք: Թիշ անց Վաշիկը մտավ մի քանի ծխախոտ ձեռքին: Անգլիացի թղթակիցն էր տվել: Հսկիչները հետեւից ներս մտան, ծխախոտը խլեցին, Վաշիկին էլ տարան ծեծված ետ բերեցին:

— Ինչ որ բա՞ն ես ասել, — հարցրին ընկերները:

— Եթե ասեի, կսպանեին, ինչպես տեսնում եք, կենդանի եմ:

* * *

Բանտախոցից հանում են Ալբերտ Շեկսպիրին: Առաջաձորից էր: Երկաթե ձողով, ամրաններով ծեծում են: Իբր տանը խուզարկության ժամանակ ինքնաշշեն նորակ են գտել: Մեկ շարաթ անց ընկերները նրա մոտ տարօրինակություններ են նկատում: Անջատվում էր շրջապատից, տնքում ու զառանցում:

Տղան խանգարվել էր, բայց թուրք քննիչները դարձյալ կանչում են հարցաքննության: Ստորագրում էր ինչ որ տալիս էին, պահանջում էին:

— Գրոհայինները:

Գրում էր համագույզացիների անունները, ում որ հիշում էր:

— Երեանից ինչո՞ւ ես եկել: Նկատի ունեին երեանյան բարձրագույն կրթությունը:

— Եկել եմ թուրքերին կոտորեմ:

Արձանագրվում էր:

- Ովքեր են ուղարկել:
 - Հայ ժայրահեղականները:
 - Զենքի տեղը:
 - Անտառում, գյուղում, մեր տանը:
- Ամեն ինչ արձանագրվում էր: 20-րդ օրը Ալբերտին խցից տարան:

ՄԵԶԲԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

ԽԵՆՔՈՎ, ԽՍՀՄ ՊԱԿ-ի Անրկապացուցիչ:— Հարց է ծագում Առաջին հերթին, որպեսզի մենք հատկանակ իրար, մենք պետք է խոսեն նոյն լեզվով: Այսօր մենք չենք կարող իրար բացատրել, թե ովքեր են գրոհայինները: Տենք կարող բացատրել, ինչ է ճշանակում պատահեն և ինչով են տարրերում գերիներից, ճերրակալվածներից և կալանվածներից: Կան բացեր արտակարգ դրության իրավական ուժին մասին ԽՍՀՄ օրենքում, որովհետև սա փաստուեն ազգամիջան հակամարտությունն է, իսկ հատկապես ազգամիջան հակամարտությունը հիմք չի հանդիսանում, որպեսզի կիրառվի արտակարգ դրության օրենքը: Սա պարզ-հասարակ իրավական բացթողում է: Դրա համար այսուհետ զինվորականները ասում են, որ իրենք գործում են ոչ թե արտակարգ դրության օրենքի հիմանը, այլ հենքում են պրեզիդենտի գրոհայիններին զինաթափելու հրամանագրի վրա, և ենթարկվում են խիստ բնեադատության:

Հարկավոր է պարզ պատկերացնելու ովքեր են հակամարտող կողմերը: Եվ կրնֆիլիկտին լրացուցիչ մասնակիցները մոցնելը տանում է դեպի իրադրության նորմապացում, թե՞ ընդհակառակն, դեպի հակամարտության մասշտարքների ծավալում:

Մայիսի 18
Խորհրդարանական ունկնդրում



ԲԺՇԿԻ վեց օրն անցավ: Դուռը բացվեց, մի խումբ ներս մտավ: Մեկն առաջ եկավ, այնպիսի մի ապտակ հասցրեց, աշքերը դուրս թռան:

— Հա՛, հա՛, հա՛, հա՛,— քրքջում է:— Վալեհն եմ, Վալեհը: Ճանաչեցի՞՞ը:

Սերժիկը փորփորում է հիշողությունը: Անունն էլ էր անծանոթ, ինքնն էլու նորից ապտակ: Հաճոց:

— Հա՛, հա՛, հա՛... Հիշո՞ւմ կս ինչպես քեռուս երկու անգամ ապտակեցիր:— Նորից ապտակ է ստանում:

— Ալիին մոռացե՞լ ես... Հանդից խոտ էինք տանում: Մեքենան կանգնեցրիր, դու ապիտակ ձիու վրա էիր:

Հիշեց: Հանդից խոտը գողանում էին: Մեկին բռնեց: Բայց
թուրքը օձի լեզու թափեց, ինդրեց, աղաշեց: Մոտը փոքր տղա
երեխա կար նստած: 8 տարի առաջ էր:

— Հիշեցի՞ր:

— Հիշեցի, բայց Ալին խոտը տարավ, հիշում ես, տա-
րավ:

— Մեր հանդը, մեր խոտը... Դո՞ւ ով էիր, անհավատ:

— Մեր մեջ թշնամություն չկար: Ես հանդերն էի հսկում:

— Հա՛, հա՛, հա՛... Դու ո՞վ էիր, որ թշնամի լինես կամ
պինես: Մեր հանդը, մեր խոտը, մեր հողը:

* * *

— Էլման, օգնիր:

— Միակ միջոցը խոստովանելն է:

Հովհիկ Թևանը ոչխարի հոտը բերում արածեցնում էր ի-
րենց գյուղի հանդերում: Նրանք անտառ չունեին, ինքը փայտ
էր տալիս, նրանք՝ ոչխարի միս, բուրդ: Ինչքա՞ն է Թևանի տա-
նը ինքն իր ձեռքով հնդկահավի խորոված արել: Կերել են, կե-
նացներ են զարկել: Տղան՝ էլմանը իրեն հորեղբայր էր ասում:

— Էլման, օգնիր:

— Դուք եք մեղավորը:

* * *

Քննասենյակ. Այստեղ է նաև զարադաղլուեցի Մամեդը՝
բինգինակայանի լցավորողը, որի հետ մի փութ աղ ու հաց է
կերել: Զարադաղլուի հայտնի գեպքի՝ 6 սպանվածների մեջ
նրա եղբայրն է, եղբոր կինը, երեխան, հորաքույրը, հորաքույ
ամուսինը:

Կալանավորին կանգնեցնում են պատի դեմ: Քրքրված
ներքնաշապիկը պոկում են: Հարված ողնաշարին: Այն զգացո-
ղությունն ունեցավ, թե բինգին լցրեցին ու վառեցին: Զեռքն
ակնթարթաբար, իրենից անկախ բարձրացավ ու շըրըխկ՝ մեկի
դեմքին: Թուրքը փովեց գետնին: Թափվեցին վրան, պառկեց-
րին, հանեցին գուլպաները: Երկաթե ծողով ծեծում ու ծակծը-
կում են ոտքերի ներքանն ու զարշապարը: Ունում է: Այդ օրը
նյարդերը տեղի տվեցին: Խեղճացավ:

— Մամեդ, փրկիր, մեր աղ ու հացը վկա լգիտեմ ով է
սպանել:

Եվ իրոք շգիտեր:

Ուշագնաց է լինում: Խսկ երբ ուշքի եկավ, ծեծողները
նստել էին բազմոցին և հոգնած հեռում էին: Մամեդը կանգնել
էր գլխավերեռում:

— Գիտեմ, որ դու չես սպանել: Բայց սպանողների տեղն
ասա, քեզ բաց թողնենք:

— Չգիտեմ:

— Այդ դեպքում ոշինչ անել չեմ կարող:

* * *

Հունիսի 15:

— Սկրժիկ Մկրտումյան:

Քննիչն է, բժիշկը:

Բեղերը բութածելիով քաշը ում, կտրտում, իրո թրաշում
են: Հետն էլ սպառնալիքներ՝ եթե լիուտովանի, տանում են
մորթելու: Դանակը պահեցին ականջի վրա:

Դանակը... խըրտ... Արյունը ականջը լցվեց:

— Զեզ սպանելը մեղք է, մեկ-մեկ պիտի տանջենք, մինչև
որ... Բոլոր հայերիդ պիտի անցկացնենք... շշով... հասկացա՞ր,
չէ՞: Տեսել ես, չէ՞, ոնց են ցավից տապակվում:

— Գիտեմ, կանեք:

— Գիտեմ, թե դուք ինչի եք ընդունակ: — Այդ պահին կա-
լանավորը ուզում էր, որ սպանեն՝ տանջանքները վերջանան:
Հովադի նման, ոստիուներով, հարձակվեցին:

— Ասելո՞ւ ես:

— Կասեմ:

Մի կողմ են քաշվում:

— Եթե կենդանի մնամ, ամեն տեղ պատմելու եմ, որ 15
թուրք մի կապած հայի չկարողացան սպանել:

Թուրքը ցատկում է փորին ու սապոգներով կոխկրտում,
Հետն էլ կատաղած փնչացնում: Հետո իջավ, գոռում է.

— Դեղ տուր: Ատամնացավի գեղ տուր:

Բժիշկը գնաց եկավ՝ չորս հար ձեռքին:

— Երկուսը հիմա խմիր, երկուսն էլ՝ հետո:

Թուրքը չորսն էլ միանգամից կատաղած կու տվեց: Աշ-
քերը շաղվեցին, դեմքն աղավաղվեց, արյունը խփեց գլխին:
Հարձակվեց: Հետո ընկերները նրան պատմեցին, որ գլխից
քարշ տալով տարել են բանտախուց: Մի քանի ժամից հետո,
երբ թուրքերը մտան, Սերժիկը ուշքի էր եկել: Թհատակերից
բռնեցին դուրս տարան: Զրի փողբակը պահեցին վրան: Կանգ-
նեցնում են՝ դաշարկ պարկի պես ընկնում է:

— Հսեք, մի օր դրանց տեր է դուրս գալու: Ի՞նչ պատաստան եք տալու: — Լսվեց մի ձայն ճաղաշարից այն կողմ, որտեղ սովորաբար միշտ մեծ ամրոխ էր հավաքվում:

— Այդ ով էր, այդ ո՞ւմ ձայնն էր: Ո՞վ էր հային պաշտպանողը, թող առաջ գա:

Ճաղաշարի առաջ թուրքը ետ ու առաջ էր գնում, պատրաստ ծվատելու և պատառ-պատառ անելու խոսողին:

Ամբոխը լուս է: Աչքերն արյուն կոխած բռնում է ճաղաշարից ու թափահարում:

— Ձայն հանողը թող առաջ գա:

Լուսիցուն: Ամբոխը մի քայլ ետ է քաշվում:

Թուրքը մոնչալով հարձակվում է կալանավորի վրա:

ՄԵԶԵԲՈՒՆՄ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

ԽՍՀՄ պետիկենուը պետք է անհապաղ միշոցներ ձեռնարկի, որնք բացառեն ԽՍՀՄ զինված ուժերի և ԽՍՀՄ ներքործնախարարության ներքին զորքերի օգտագործումը որևէ նույառակու, բացի հակամարտ կողմերին բաժանելուց:

Միշագցանորեն ճամաչված նորմերի և մարդու իրավունքների վերաբերյալ համաձայնագրերին համապատասխան անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել խաղաղ բնակչության բռնի տնտանակությունը, ազատել պատանեմերին և սպառագեն ընդհարումների ներ կապված քենցական գործերը հանձնել ԽՍՀՄ դաստիարակության տնօրինությանը:

Մարդու իրավունքների խախտումները պետք է կանցկան, ում կողմից ել որ դրանք կատարվեին լինեն:

Մայիսի 15, 1991 թ.

Ռուսաստանի ժողովածանավորմերի 4-րդ համագումարի հայտարարությունից

* * *

Հունիսի 18: Քննասենյակ: Քննիչը փոխված է: Պահվածքը հանգիստ, բայց խիստ ու կոպիտ: Ջգում է, որ այս մեկը բարձրաստիճան պաշտոնյա է:

— Դե, պատմիր:

— Ոչինչ չգիտեմ:

— Իմանալու ես: Բոլորդ իմանալու եք: Եվ թուղթը հրում է զեմքը: — Ամեն ինչ մանրամասն, այնպես, ինչպես կատարվել է, գրիր:

— Տեղյակ չեմ:

Սեղմում է զանգի կոճակը: Ներս են լցվում: Զեռքերը՝ վեց

կտրված մատներով՝ մեկնում է սեղանին:

— Խեայեք: Երկրորդ կարգի հաշմանդամ եմ...

— Ցուցերի դուրս գալու ժամանակ մտածեիր, որ հաշմանդամ ես...

— Ես չե՞մ կանչել:

— Միլիոն մարդ եք հրապարակ դուրս եկել, ասեղ գցելու տեղ չկար, աննամուսներ: Հազարից ավելի մարդ ենք բանտ բերել, բոլորդ էլ հրաժարվում եք, բոլորդ էլ ստորագրել եք, որ ենթարկվում եք Ազգբնշանի սահմանադրությանը, բա էդ ովքե՞ր էին միացում պոռացողները:

— Ես անտառապահ եմ, գլուղացի մարդ եմ: Ես դեմ եմ եղել:

— Ովքեր են կողմ եղել, նրանց անուններն ասա:

Լուրջուն:

— Թե վա՞տ էիք ապրում:

— Զէ, նույնիսկ ավելի լավ էինք ապրում, բան պետք էր:

— Ուրեմն...

— Զպիտի միացում կանչեինք:

Շրջվում է ազ կողմին նստած բանտապետի տեղակալ Մամեդովին:

— Պինգ է երևում: Սրանով դո՞ւ գրադվիր:

ՄԵԶԲԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

ԱՄՆ-ի նախագահ, նորին մեծության պարոն
ԶՈՐՋ ԲՈՒԺԵՆ

Ֆրամսիայի Հանրապետության նախագահ նորին
մեծության պարոն

ՖՐԱՆՍՈՒԱ ՄԻՏԵՐԱՆԻՆ

ԳՖՀ-ի կանցեր, նորին մեծության պարոն

ՀԵԼՄՈՒՏ ԿՈԼԻՆ

Միացյալ թագավորության վարչապետ, նորին
մեծության պարոն

ԶՈՒ ՄԵՅԶԵՐՈՒՆ

Շապոմիայի վարչապետ նորին մեծության պարոն
ՏՈՒԻԿՈ ԿԱՅՖՈՒԻՆ

Խոտայիայի Հանրապետության նախարարների
խորհրդի նախագահ նորին մեծության պարոն

ԶՈՒԼԻՈ ԱՆԴՐԵՈՒԻՆ

Կանադայի վարչապետ նորին մեծության պարոն
ԲՐԱՅԱՆ ՄԱԼԻՌՈՒՆԻՆ

Հարգելի պարոնայք:

Լեռնային Պարաբաղի Խնքնափար Մարգի ծողովդական
պատգամավորների խորհրդի գործկոմը, ծողովդական

պատգամավորների շրջանային և քաղաքային խորհուրդների գործկութեալը, կուսակցութան շրջանային (քաղաքային) կոմիտեները, ԼՂՀ արհմիությունների ֆեներացիայի խորհուրդը՝ հաշվի առնելով, որ աշխարհի առաջատար տնտեսական զարգացած երկրների միջև տնտեսական ու քաղաքական սահմանադրամականությունները պետք է կայունության և կարգութանոնի երաշխիք լինի համայն աշխարհում.

ճանաչելով յոթենակի պետությունների ղեկավարների ներն ու ազդեցությունը արդի աշխարհում՝ ուղղված ժողովուրդների միջև հարաբերությունների բարեկավմանը, անընտան աշխարհի ապահովմանը, արդարության ու համագործակցությանը.

նիշենով մարդկության առաջ աշխարհի յոթ առավել զարգացած պետությունների ղեկավարների պատասխանատվության մասին և հաշվի առնելով նրանց հնարավորությունները աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների վրա ներգործելու խնդրում.

նշենով Խորհրդային միության ղեկավարության կողմից Լեռնային Ղարաբաղում կազմակերպված հայության՝ արդի պայմաններում անհախաղեա ցեղասպանության ակտը, որի հետևանքով զոհվում են միանգամայն անմեղ, խաղաղ մարդիկ, հաղածանների և բռնազարդի են ենթարկվուած իրենց մայր հողից փարյալներ դառնալով իրենց սեփական երկրում.

ինեկով Խորհրդային միության ղեկավարության կողմից և արտաքին քաղաքական կարգավիճակը որոշելու ժողովուրդների իրավունքի և իրավահավասարության սկզբունքից.

արտահայտելով Լեռնային Ղարաբաղի բնակչության հայ մեծամասնության կամքը, որն արտահայտվել է 1991 թվականի մայիսի 15-ին ՄԱԿ-ին և մայիսի 17-ին նրա գիտակոր քարտուղարին, ինչպես նաև Ամերիկայի, Նվրուպայի, Ավստրալիայի, Շապոնիայի, Հարավային Կորեայի, Սինգապուրի, և Ֆիլիպինների պետությունների և կառավարությունների ղեկավարներին ուղղված մեր դիմուններում, որոնցում խնդրվում է քաղաքական ապահոված տրամադրել Լեռնային Ղարաբաղի ամբողջ հայ բնակչությանը.

խնդրում ենք Ձեզ Լոնդոնում կայանալիք «յոթենյակի» առաջիկա հանդիպմանը բնանարկելու համարակի.

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը քաղաքական ապահոված տրամադրելու և միջազգային բավունքի նորմերի համաձայն, կաստակած շարժական ունեցվածքով ԽՍՀՄ տարածքից մեկնելու հնարավորությունը.

ԼՂԻՄ մարզգործելու, ԼՂԻՄ արհմիությունների ֆեներացիայի խորհուրդ, Ստեփանակերտի քաղաքործում, Ասկերանի, Մարտակերտի, Մարտոնու, Հայրութի շրջաններու, կուսակցության Ստեփանակերտի քաղկում, կուսակցության Ասկերանի, կուսակցության Մարտակերտի, կուսակցության Մարտոնու, կուսակցության Հայրութի շրջաններ:

Մայիսի 29, 1991 թ.

Բանտապետի աշխատասենյակ: Արբասովը թեյ է խմում:

— Գուցե թեյ... Մի բաժակ:

— Ո՞ւ, ո՞ւ, — Հրաժարվում է:

— Որ ձեր գյուղում, ձեր հանդերում ինձ պատահես, կսպանես: — Զայնը մեղմ է:

— Ոչ, ոչ, ինչ եք ասում, ընկեր պետ, պատիվ կտամ, հՀարգեմ:

— Զեմ հավատում: Ստեփանակերտում ինչքան ընկերներ ունեի: Ընկերություն, ախակերություն էինք անում: Հիմա մեկ-մեկ զանգում ենք, հուզվում, նոյնիսկ լաց ենք լինում: Դու էլ տեսնում եմ, խեղճ մարդ ես, մարդ սպանել շես կարող, բայց կիմանաս, այն զիշեր, որ հարձակվեցին Պարագաղուի վրա, անցուդարձ կլինես, ովքեր էին, անուններն ասա, հենց այստեղից քեզ տուն ուղարկեմ:

— Իմացածներս արդեն ասել եմ:

Բանտապետը կարմրեց, սփրինեց, քրտնեց:

— Մեր համբերությունն էլ աշհման ունի: Մենք էլ մարդ ենք, չե՞: Զեր միլիցիայի մայոր Շահբարզյանը շդիմացավ, կոխ-վեց, ձերոնք էլ կարծում են՝ մենք ենք սպանել:

Կախից ձայն չի հանում, մտածում է՝ հիմա վերկենա, կհոշոտի, պատառ-պատառ կանի:

— Մենք բարի մարդ ենք, իսկ դո՞ւք...

Տեր Աստված՝ թող սպանեն՝ տանջանքները կվերշանան՝ կրկնում է մտքի մեջ:

Օգոստոսի 4: Կալանախցից հանում և տանում են անծանոթ միջանցքներով: Դուռը բացվում է: Երկաթե ճաղաշարերով տաղալար է: Մեջտեղում պարան-օղակներ են կախված:

Երեք-չորս հոգի թեատակերից բռնիցին ու բարձրացրին աթոռի վրա:

— Պարանը վիզգ գցիր: — Հրամայում են:

Դողում է:

Նորից՝ հրաման: Ատամների կափկափյունը լսելի էր: Պա-

բանը հազարին վգին: Արդեն ոչինչ չի գգում: Ոնց որ մշտակի միջից, նրան է հասնում մեկի շայնը:

— Ելի ժամանակ տանք: Գուցե խոստովանի:

Իշեցնում են աթոռից: Հրելով, քացի-քացի անելով տանում են, բայց նա չի դդում ո՛չ ցավ, ո՛չ վիրավորանք, ո՛չ ժամանակ:

* * *

Օդուտոսի 5: Հանեցին բանտի տարածքից, կարծում է տանում են գնդակաճարության: Ետկց փակվեց բանտի երկաթյա զուրը:

— Ազատ ես:

Չի ըմբանում բառերի իմաստը:

Հոհոց:

— Ազատ ես:

Հոհոց:

* * *

12 ննդեցիներից յոթը ազատ են արձակվում: 5-ը՝ Վիկտորը, Ստյոպան, Կարենը, Արգինալը, Գրիգորը ինն ամիս թուրքական բանտում կրում են իրենց խալը:

* * *

1992 թվական: Փետրվարի 16: Ժամը՝ 7.00: Հարադաղ-լուի Ճորակը հրետանային կրակից թնդում է: Առաջին գծում «Արարոն» է: Երջակա սարերում, երկրորդ գծում, գիրք են բռնել տեղի ինքնապաշտպանության ջոկատները:

Սերժիկը հրացանը ձեռքն առավ և ճորամիջի ճանապարհն ընկավ: Նարադաղուց որոշակի տարածության վրա կանգնեցրին, մոտենալ չեին թույլատրում: Մարտադաշտից պատղարակի վրա մի վիրավոր բերեցին: Ճանաչեց: Մականունը «Ճուտիկ» էր, Հոյաստանից: Ցավից գալարվում էր: Սրսկեցին:

— Ոնց ես, Ճուտիկ: — Հարցրեց Սերժիկը:

— Ներսս վառվում է: Երկի ամեն ինչ վերջացած է...

Երկրորդ օրը, կեսօրին գործողությունն ավարտվեց: Ստեփանակերտ-Մարտոնի մայրուղու մեջտեղը տեղիված, շրջակա գլուղերի վրա ահուսարսափ տարածող զարադաղուն չկա: Այնտեղից դուրս բերվեց գերիների շարքը: Սերժիկը հրացանը ձեռքին հետեւց նրանց: Ամիսներ շարունակ ներսը կրծում էր մի ցավ. հատոցել իր տանջանքների դիմաց: Հիմա ինչքան քայլում է շարքի ետևից, այնքան ներսում թուլանում է ատելությունը: Մինչդեռ իրեն թվում էր, թուրք ընկնի ձեռքը... Այժմ, երբ հատուցման ժամը հասել է, նայում է ողորմելի խլակներին ու հոգում գտնում է միայն նողկանքի, գարշանքի զգացում: Ինքը ճանաշեց 18-20 տարեկան երկու տղաների, որոնք օմոնի համազգեստով էին: Բժիշկ Ադիլի տղաներն են, այն Ադիլի, որ գիշերը մի խմբի հետ գողության էր գնացել Մուշկապատի ֆերմաները և այնտեղ սպանվել: Այդ դեպքից հետո ութ անմեղ մուշկապատցիների տարան և տանջեցին բանտում: Երբ խումբը հասավ Կաղաքու պահեստի մոտ՝ Բալիբաղ, ջաղացից վերև, թթայգիների մոտ, ճակատին սևերիդ ժապավենով զինվորը կտրեց շարքի առաջը: Կանանց քշեցին մեքնայի մեջ: 28 տղամարդու առանձնացրին: Մեկը փորձեց փախչել դեպի թթայգիները: Առաջինը նաև ընկավ: Այս վայրում մի քանի ամիս առաջ կաղաքուցի նելսոն Ավանեսյանը հոտն էր արածեցնում: Օրը մոայլ ու ամպոտ էր: Քաշաթուխապի միշից դուրս եկան դարանակալած ավագակները: 30 տարեկան տղամարդու խոշտանգված դիակը գտան ձաղացի ձորում:

Այս նույն ջաղացի մոտ քլիքլիում և ելք է գտնում մի այլ ատելություն: Սրբունը մաքրվում է արյամբ, ատելությունը՝ ատելությամբ: Դժվարը այն զգացումը կրելն էր, որ ուներ Շուշիի նախկին կալանավորը: Նրա հոգին տանջվում էր խղճի և ատելության հերթագյուղ իրարամերժ զգացումների մեջ: Սևերիդ ժապավենով զինվորը մոտեցավ նրան և հրամայեց թաղել դիակները: Մոտակայքից մի էքսկավատոր բերել տվեց: Հողով ծածկեց փոսը: Երբ մի քիչ հեռացավ, շրջվեց ու ետ նայեց: Փոսից ինչ-որ ոսկորներ էին դուրս ցցված: Խոշտանգված հոգին շհասկացավ՝ ձեռքե՞ր են հողից դուրս ցցված, թե՞ իրեն է թվացել:

Երէ մէկը կամենում է իմ ետեփց
գալ, թռղ իր անձն ուրանայ եւ ամեն
օր իր խաչն առնէ եւ իմ ետեփց գայ:
Արովիետեն ով որ կամենայ իր անձն
ապրեցնել՝ կկորցնէ նորան. եւ ով որ
իր անձն կորցնէ ինձ համար՝ ես կապ
րեցնէ նորան:

Մարտակերտի տարածքում և մէրճ նկատվում էին ոստի-
կանական հատուկ ջոկատների կուտակումներ: Սպասվող
հարձակումներին պիտի պատասխան տրվեր: Շահումյանից
դենք տեղափոխվեց Քաջավան: Ավտոմատ՝ 40 հատ, նոր,
գործարանային: Օրը ցերեկով յուղեցին, մաքրեցին: Փամ-
փուշտները՝ 100-ական լցրին գրավանները: Ստեփանակերտից
եկած 40 հոգանոց խմբից 10 մնացին գիշերելու, մյուսները՝
Քաջավանից դուրս եկան որոշակի խնդրով:

* * *

— Զեռքներդ վեր: Չշարժվել:

— Զենքներդ ցած զցեք:

Ճայթեց անսպասելի, մթության մեջ: Ավտոմատների
փողերն ուղղվեցին պահակակետի տղաների վրա: Խավա-
րում հազիվ են նշանարվում զինվորների ուրվագծերը: Երկ-
րորդ պահակակետը ևս անշշուկ զինաթափվեց: Ճանապար-
հը գեպի Քաջավան բացված է, 18 տուն՝ դավին անտեղյակ՝
քնած: Գյուլլիշա, Շոթանու, Ումությու, Փափրավենդ զյուղե-
րին սահմանակից երեք պահակակետերը ևս վերացվեցին:

Մթության մեջ զինվորներն առաջանում են: Սրանք հե-
տախուզական խմբերն են: Զինվորներից մեկը խանութի մոտ
գայթեց: Պատահական կրակահերթ՝ օդի մեջ: Դա նման էր
տափնապի աղջանշանի: Արմենը և Ալիկը, որ գիշերային հա-
վաքույթից հետո շրջում էին պահակակետերը, վազեցին
կրակոցի ուղղությամբ: Փողոցի լապտերների լույսի տակ
նրանք տեսան զինվորների խիտ շղթանները: Արմենը ձեռքն
ընկած փայտը շպրտեց և անջատեց էլեկտրականությունը:
Շարունակությունը ընթանում է խավարի մեջ:

— Կանգնի՞ր: — Ալիկը լսեց զինվորի ձայնը, բայց շառու-
նակեց վազել:

Ավտոմատի հարված գլխին՝ և գիտակցությունը կորցրեց:
— Զինվորնե՞րը... — Դուան մեջ հաղիվ հասցրեց գոռալ Ար-
մենը, բայց արդեն ուշ էր: Քնաթաթախ, կիսամերկ աղանե-
րը չկարողացան զենք օգտագործել. պատուհանից արցոն-
քարեր գաղ էին կրակել սենյակ, և հակազազային դիմակ-
ներ հագած զինվորները ջարդում էին տղաներին:

Գիշերվա ժամը 4-ն անց էր, երբ սկսեց գործել գյուղն
օղակի մեջ առած ուղղմական տեխնիկան:

Զարդ:

Թալա՞ն:

Ահարեկլություն:

ԽՍՀՄ նԳՆ ներքին զորքերի Ռիգայի զինվորական ջո-
կատը կատարեց մարտական առաջադրանքը: Առգրավված են՝
9 ավտոմատ, 3-4 կարարին, 5 որսորդական հրացաններ, 1
նոնականնետ, 5 հաղար փամփուշտ, նոնակներ: Զերբարկալ-
ված են 24 «զրոհայիններ»: Զարդված, արնաշաղախ ընկած
են Հասանաբարդի «զտման» կայանի նկուղում: Դանիելյան
Արարատը շնչում է ընկերների ականջին.

— Զենքի գործը՝ ինձ վրա:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդակցությունը վերջացել էր զործողությունն ըս-
կրավելուց ընդամենը մեկ ժամ առաջ: Հավաքվել են դպրոցի
տնօրենի տանը:

— Բոլոր շրջաններից ներկայացուցիչներն այստե՞ղ են: —
Արմենը, որ դեկաֆարում էր զյուղի ուղղմական պաշտպա-
նությունը, շրջեց հայացքը:

— Այստեղ են:

— Կենարոնի՞ց:

— Այստեղ են:

— Քաղաքական իրավիճակը սրվել է: Պրեզիդենտի հրա-
մանագիրը իրագործվում է: Ակտիվ գործում են ներքին զոր-
ծերի նախարարության զորամասերը, դատախազությունը,
ՊԱԿ-ը: — Հակիմն աեղեկություններ ավեց դաշնակ Արկադին:

— Դա չի հշանակում, որ մենք բռպացնում ենք պայքա-
րը: Խնդիրը մնում է նոյնը: Հարձակումներին հարձակմամբ,
սպանության՝ սպանությամբ, բալամին՝ բալանով: Թշնա-
մու ոչ մի զործողություն անպատիծ շպիտի մեա: Ոչ մի զի-
շում: — Տեղից լրացրեց Ղույան Աշոտը:

— Մարտավարական զործողությունների մեջ որոշ փոփոխություն և զաղանքություն, տղաներ: — Արկադին շարունակեց խոսքը: — Երկրորդ՝ զենքի հիմնական մասը, գինահագուստը տեղափոխում ենք առավել ապահով բաժանումներ, անտառները, լված բնակավայրերը, գերեզմանոցները: Պետք է կանխարգելի աշխատանք տանել, բայց ներ «կեղառ» զենքները: — Խոսքն օգտագործված զենքի մասին է: — Երանք, որոնք կասկածվում են ՊԱԿ-ի կողմից առժամանակ նեռանում են պայմանագիր կամ զործում են երկրորդ, երրորդ մարդու միջնորդությամբ: — Հայացքը կանգ է առենում Ալիկի վրա: Արպես համաձայնության նշան՝ վերջինս ժպտում է:

— Երանց տեղեն ապահով է:

— Ապահով է: — Արբարը հասկացավ, որ խոսքը Ռմությունից վեցցած բուժերի մասին է, որ պիտի փոխանակեին Կիշանի մոտ պատահեղ վեցցված չորս հոգու նեա, երկուսը՝ ուսանողութիւն:

— Քաջական արդեն ուշադրության կենտրոնաւմ է: Վրտանգավոր է երանց այսուհեղ պահել: Կազմակերպեք տեղափոխման զործը: — Արկադին եզրափակեց երույթները:

Մշակվեց հերթական հակագործողության ծրագիրը. Մաճիքլուից հարձակվել էին Զանյարադի վրա՝ պետք է պատասխան տան:

— Գործը կատարեք մասնաւ: Հետք շրադնեք: Հազ տարեք, որ խաղաղ բնակչությունը գործողությունից հետո չվնասվի: — Հրահանգեց Վազգիմիրը:

— Կարեն կապեք: — Շատապեցրեց Ղույան Աշոտը: — Վասնագովոր է այսքան երկար մի կետում մնալը: Մի խումբ՝ Արկադին, Գառնիկը, Գարիկը, Ղույան Աշոտը, Մհերը, Հայկը մուրի մեջ բաշվեցին Գյողարադի անառոր: Վաղիմիրն ու Գարիկը տեղափառվեցին զյուղին կից մի կիսավեր տան մեջ, որը դուրս էր մնացել զինվորների կազմած շղթայից: Կրակոցների ձայնի վրա երանք արքացան և նողոպետցին անտառ: Լուսադեմին առաջին խմբի տղաները Զանյարադից բապիտակ «Երազ»-ով իջնում են զյուղ: Նկատելով զինվորների շղթան՝ վարորդը հասցեում է բնրացքից մետենան շրջել ու փախչել: Բէտեէրը հետապնդում է: Գեղացիրը գործում է: Մանը վիրավորվում և մահանում է խնձրիսաւանցի Ալիշը:

* * *

Շուշի: Բանտ: Հարցաքննությունը կատարվում է բուժկեռում:

—Մաթեմատիկոս: Բարձրագույն կրթությամբ: —Քընդիլ Բայրամովը հեղնական և խորիմաստ ձգում է բառերը:

—Յածը խավերից չես: Ամեն ինչ՝ մտածած, հավասարակշռած... — Արձանագրության թղթերն առաջ քաշեց:

—Կուսակցականությունդ:

—Կոմերիտմիության անդամ:

—Հասկանալի է: Խուսափում ես պատասխանատվությունից: Դաշնա՞կ:

—Անկուսակցական:

—Աչքերի փայլը տես: Ուրախացավ: —Միջամտեց մինչ այդ լուս նստած երկրորդ քննիչը:

—Ռովից-ծով Հայաստա՞ն: —Փալլատակեց Բայրամովի միտքը: —Ինչ հանձնարարությամբ էիր Քաջավանում: Ասա: Խոստովանությունը կթեթեացնի հանցանք:

—Պատահական եմ հայտնվել: Կանգնել էի ճանապարհին, մեքենա էր գնում: Մտածեցի՝ այնտեղ գնալը ավելի հեշտ կլինի, քան Մարտակերտից Կոճողութ հասնելը:

—Լավ ես հորինում: Իսկ հիմա պատմիր՝ ի՞նչ գործողություն էիր ծրագրում:

Ինչոր մեկը մատնե՞լ է, թե խոսք է քաշում: Իսկ եթե տղաներից չեն դիմացել և խոստովանե՞լ են. ուղեղում հաշվարկն ու վերլուծությունը կատարվեց ու դասդասվեց ակընթարթային:

—Մեկ օր առաջ դասամատյանում աշակերտների զնահատականները կան: Կարող եմ թվարկել անուն-ազգանունները: —Կալանավորը փաստարկները չեր հորինում: Նա ինչպես միշտ Քաջավան մեկնելուց առաջ նախազգուշական միջոցներ էր ձեռնարկել՝ շբացառվող հետաքննության համար: —Կարող եք ստուգել:

—Անձնագիրս Մարտակերտի դինկոմիսարիատում է: Դրժվար չէ պարզել ամսաթիվը: — Իր «անմեղության» ապացուցն էլ էր վաղօրոք կանխամտածված ու սարքված:

—«Հյուրընկալության» մանրամասնությունների մասին

պատմիր՝ զենքով, նոնակներով: —Քննիչն անցավ ծաղրալից
տոնի:

—Փորձաքննության պատախանը կգա՝ կհամոզվե՞ք, որ
զենք չեմ ունեցել: Չեմ օգտագործել:

Իր ու տղաների մատնաշետքերը կային զենքերի վրա, և
Ալիկն այս ամենն ասաց ներքին մտատանջություններից ել-
նելով ու պատասխանի մեջ իր համար ինչ-որ բան պարզե-
լու հույսով, քան համոզելու:

—Աղվես: Յուղոտ զենքի վրա հնարավոր չէ հայտնաբե-
րել հետքերը: Բացի այդ՝ զինվորները ձեռք են տվել զեն-
քին: Հիմարարար:

Երկի փորձում է՝ մտածեց ու խոր թաքցրեց հանգստու-
թյունը:

—Զենքը որտեղից և ինչպես եք ստանում:

—Ես միայն հյուր էի:

—Տես, հետո ստիպված լինես ցուցմունքներդ փոխել:
Երկար մտածիր՝ նոր պատասխանիր: —Կծու ընդհատեց Բայ-
րամովը:

—Քաշավանի գրոհայինների հետ քո կապերը:

—Երմենի և կնոջ՝ Գայանեի հետ համակուրսեցիներ ենք:

—Դա ձեական է: Դուք ավելի կարևոր կապեր ունեք: Տղա-
ները շեն դիմացել, խոստովանել են: Ձեր համագործակցության
մասին պատմիր: Ռազ-մա-կան, քա-դա-քա-կան: — Բայրա-
մովը հեղնական ձգում է բառերը: — Հավանաբար շես սպա-
սի «խելոքացնելու» արարողություններին: Հը...

Կալանավորը լուռ է:

Սեղմում է գանգի կոճակը:

Ներս են բերում նորիկին: Մի կերպ է մնում ոտքի վրա:

— Ծանաչում ես:

— Նույն ինստիտուտի ուսանողներ ենք:

— Միայն:

— Հանրակացարանում եք ապրել: Մի շրջանից եք:

— Շփումներ չեմ ունեցել:

Նույն հարցերը՝ նորիկին: Պատասխանը՝ մոտիկից վի-
ճանաշում: Նորիկին տանում են:

— Գիտե՞ս ինչ է սպասվում քեզ:

— Գիտեմ:

— Ուրեմն: Մի համառիր: Պիտի ենթարկվես, իմ ձեռքին

ևս՝ ուզենամ կսպանեմ, ուզենամ՝ բաց կթողնեմ:

—Քիչ առաջ ապացուցում էիք, որ Հանցագործ եմ: Հանցագործին ինչպես եք բաց թողնելու:

—Պոլ մի խաղացրու: Եթե կյանքդ քեզ համար թանկ է փրկիր: Ասեմ ինչպես: Բայրամովը վերցնում է գրիշը:

—Դու տեսել ես, թե Արմենը ինչպես է տան առաջ չոքած կրակում զինվորների վրա:

Կալանավորը լուս լսում է:

—Զենքը Հայաստանից է գալիս Ղարաբաղ: —Դրում է:

—Նորիկը տանը զրուցում ասել է, որ Քաջավանը բնակեցի է Հարեւան աղբբեշանական բնակավայրերին վնաս հասցնելու համար:

Վերջացրեց:

—Ստորագրիր:

Կալանավորը պատուց թուղթը:

—Հրաժարվում ես:

—Այս:

—Համբերությանս հետ մի խաղա, տղա: Մինչև ես նորից զրեմ, դու մտածիր: Լավ մտածիր: Կփոշմանեմ՝ հետո ուշ կլինի: Թուղթը նորից է մեկնում կալանավորին:

Հանգիստ, սառը պատում է:

—Կսանկացնեմ: Աղվես: —Բայրամովը կատաղած հարձակում է:

Հայհոյանքներ: Հարվածներ:

—Զո՞ւր: —Քննիլը ոլորված ձեռքը դնում է ջրի մեջ: Կատաղությունից հնում է:

—Հերթապահ: Բե՛ր նրանց... Գիտես շէ՞ ում:

Հերթապահը զիսով արեց:

Մտնում են երկու հաղթանդամ քրեական տիպեր:

Բուժկետի մի անկյունում անգիտակից բնկած է կալանավորը: Բայրամովը Հովացած ձեռքը հանեց ու չուրը շպրտեց կալանավորի դեմքին: Ալիկը բացեց աշքերը: Հերթապահը կռանտակերից բարձրացրեց ու նստեցրեց աթոռին:

—Ամեն ինչ նորից ենք սկսում: Խելո՞ք: Այսպէ՞ս: Դու տեսել ես, որ սենյակի միջից նորիկը և Արմենը կրակել են զինվորների վրա:

—Զինվորներն էին կրակում շենքերի վրա: —Շրթունքները հազիվ հեռացնում և պատասխանում է Ալիկը:

Բայրամովքը լսելուն է տալիս, նորից նույն տեքստը զբում
և պարզում է: Կալանավորը թուղթը խում է, տանում բերա-
նը, ատամներով պատռում է: Բայրամովքը տեղից ցատկում և
գոռում է: Հակիչները լցվում են սենյակը:

Դոոոցը հեռանում է: Հաճելի մի թմրություն տարած-
վում է դեպի ծայրանդամները:

Հետաքարձ հայաց:

Ազդանշանի դեպքում պիտի հավաքվեն ու մտնեն ցույցի:
Քիշ-քիշ, խմբերով մոտենում են հրապարակին:

— Տղաներ, ինչո՞ւ եք կանգնել այստեղ:

— Զե՞զ ինչ: — Կոպտեց Ալիկը:

— Մեզ՝ շատ բան: — Ընկերը ցույց է տալիս Պետական
անվտանգության կոմիտեի աշխատանքի վկայականը:

— Գրադարան ենք եկել:

Հաջորդ օրը տղաները իմանում են, որ ՊԱԿ-ից ստուգել
են իրենց բարտերը:

ՊԱԿ-ի աշխատադիները շրջում ու ցրում են մարդկանց
խմբերը:

Առաջին ցույցը ձախողվեց: Ուսանողներին առանձին-
առանձին կանչում են կոմիտե՝ «մշակման»:

Պատրաստվում են երկրորդ ցույցին: Ամեն ինչ արվում
է բացահայտ: Խնամքատի դոները կողպված են: Պատու-
հաններից դուրս են ցատկում: Մոտքի մոտ հավաքված
տղաները շարդար են դուրք: Կարգախոսները անմիջապես
գրվում են:

Ուսանողների շարքերը մտնում են հրապարակ: Ետեմից՝
բազմությունը: Շարքերը խառնում են: Ոչ ոք ամբոխին չի
մտնենում: Մարդիկ սպասում են. որեւէ մեկը բարձրածայն
պիտի ասեր Ի՞՞Զ՞ի:

Մեկը՝ տեսքը վեռական, բայլվածքը՝ հաստատուն, շարժ-
վում է դեպի ամբիոն:

— Հեռացիր, կին, հետևանքները վատ կլինեն: — Կնոջ դե-
մք կտրեց ԼՂԻՄ մարզկոմի բարուպարը՝ Բոզսովովսկին:

— Արախյա, մի արատավորից կուսակցական տոմսիդ
պատիվը: Ուշիք եկ: — Քաղաքի կուսակցական դեկանարը բա-
շեց կնոջ քեր:

Արախյա Հայրապետյանն արդեն խոսում է՝ տաք, հրա-
շում:

Հշապարակն այիժվեց: Բռունցքները պարզվեցին վեր.
— Հա՞-յա՞ս-տա՞ն:

— Մի՞-ա՞-ցո՞ւմ:

— Իմ հայ ժողովուրդ... — Ծերունազարդ դերասանի՝ Թե-
նիկ Օվչանի ձայնը դողաց:

Ամբոխը հուզմունքից մարեց: Շատերի աշխեռում ար-
ցունք կա: Բոլորը հույնն են մտածում, հույնն են զգում,
բմբոշխնում են հոր, հանելի, արգելված զաղափարների
ֆաղցրուրյումը.

— Հա՞-յա՞ս-տա՞ն:

— Մի՞-ա՞-ցո՞ւմ:

1988 թվականի փետրվարի 13-ը էր:

Սեպտեմբերի 18: 1988 թվական:

Խոշալլուով անցնում է ուսանողական ավարորուսը: Տղա-
ները պատուհանից պարզում են եռագույն դրոշը: Քարեր են
բռչում: Յելիխը ձեռքից վիրավորվում է: Երադրությունը մե-
կեն շիկանում է: Քարկոծվում են հաջորդ մեժենաները: Վի-
րավուրներ, զոհեր, շարդված մեթենաներ: Ստեփանակեր-
տուս ցոյց է: Ամբոխը հուզմուս է: Կրքերը բորբաժնում են:
Մի քեզ շարժվեց դեպի Սումգայիթի զոհերի հոչարձանը,
մյուսը՝ դեպի Խոչալլու: Ամբիոնից դեռ շարունակում են
հնչել հույզերի շորվելու, զգնուրյունը չկորցնելու, դավա-
գրքանուրյունների շենքարկվելու ժողովրդական առաջնորդնե-
րի կոչերն ու կարգախոսները: Խոկ ամբոխի ծայրը՝ անզեն
պատահիներ, ուսանողներ, հասել էր Խոչալլոփ առաջին տես-
րին: Մի ժանիսի ձեռքին հայտնվեցին հրկիզող շերը: Մի
ժանի տուն բռնկվեց: Տներից, տանիքներից կրակում են վրե-
ժի ելած ցուցարանների վրա: Պատախան՝ բարե են բոշում:

Զորքը հասենում ու կանգնում է մեջանդում: Քանի հայ
վիրավուրներ՝ հիվանդանոցում:

Հանրահավաքը շարունակվում է: Մայրեզրերին մոմեր են
վառվում հայոց զոհերի հիշատակին: Ամբոխի միջից ձայներ
են լսվում՝ հանգցրելք մոմերը: Զենք, զենք է պետք: Զնշենք
Խոչալլուն: Զնշենք Շուշին: Հույզերը բորբոժնում են: Ցուցա-
րաւների մի ծայրը Ազատության հրապարակում, մի ծայրը՝
Մազե կամրջի մոտ դարանակալել, մի ծայրը Կրիժան է հա-

ան ու կանգնել: Կեսպիշեր է: Ցույցը շարունակվում է: Իրարանցման, վազվութի, աղուկի մեջ իրար չեն լսում, չեն տեսնում, չեն նաևաչում: Կրերը եթ են փնտռում: Ծովութագացակ աղբբեշանցիների աներից: Քաղաքը վեր է ածվել վառվոլ ջահերի: Սեպահմբերի 18, 19, 20: 21-ից՝ հատուկ դրույյուն, պարտապահին ժամով: Արգելվում են ցույցերը, համբախավաքները, փողոցային երերը, գործադպվերը, հրազեն և հրկիզոյ խառնուրդներ պահելը: ԼՂԻՄ-ում ԽՄԿԿ Կենտրոնի, ԽԾՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցչի՝ Վալսկու դիմումը Արցախի ժողովութիւնների պահպանությունը պահելը: «Երբ արյուն է բափկում, պետուրյունը չի կարող կողմ կանգնել»:

Ուսանողությունը դիտվում է որպես բաղաքական աճրարենույս տարր: ԽՄՀՄ լուսավորության հախարարի հրամանով նույնականացներին փակվում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը: Ուսանողության ներկայացուցիչների հանդիպումը Հատուկ կառավարման կոմիտեում, Վալսկու նետ: Այիկը շորսից մեկն էր: Ոչ մի արդյունք:

Ուսանողները հստել են ցույցի: Զինվորները բռնի քշում են: Գործողությունը դեկավարում է անձամբ ինքը՝ գեներալ-մայոր Սաֆոնովը: Ուպես բողոքի նշան, դասախոս Համետ Գրիգորյանը հացադուկ է հայտարարում:

1989 թվական: Ուսանողական հանրակացարանի ներքնահարկ:

— Ստիպված ենք ընդհատակ անցնել: Հավաքները այսուհետ կիֆեն բաղաքից դուրս: — Հայտարարեց Սարգսյան Աշոտը: Ապա շարունակեց: — Խնդրան ներերով, դիմումներով հարցը չի լուծվի: Պայքարի ձեռները փոխվում են: Պիտի ստեղծենք պաշտպանական խմբեր՝ ռազմական միավորումներ:

— Իսկ զե՞նք: — Տեղից գոչեց մեկը: — Զենք որտեղի՞ց:

— ՀՀՇ-ն զենք չունի:

— ՀԱԲ-ը հազիկ իրեն է բափարարում:

— Դիմենք դաշնակցությանը: — Ելքը զանվեց:

Ուսանողական կուսակցության հերթական զաղտնի հավաքը:

— Երդվում եմ Պատվուկս և Հայրենիքիս առջև... միշտ

հավատարիմ մնալ հայոց ընկերապարական արցախական
կուսակցության ծրագրին ու կանոնագրին:

Սեղանին եռագույն դրոշն է: Ալիկը ձեռքը դրեց այնպես,
որ շոշափի ծրագրին ու կանոնագրիր:

...Յոլոր ազգերի անխախտելի իրավունքն է ազգային-
ազատագրական պայքարի համապարհով և հպատականար-
մար բոլոր միջոցներով տապալել և խսպան չնշել ամեն կար-
գի բնապետուրյուն:

Ազատ անկախ և միացյալ հայրենիք՝ սահմանների մեջ
պիտի մտնեն Սերի դաշնագրով սահմանված հայկական հո-
ղերը, ինչպես նաև նախիչեանի, Ախալքալաքի և Ղարաբաղի
շրջանները:

Անկախ Հայաստանի հողի վրա պիտի համախմբվի հա-
յուրյունը՝ իր տարագիր զանգվածներով:

Ալիկը շոշափեց և զգաց զենքի սառնուրյունը:

—Եվ ամբողջ ուժերով, իսկ երե հարկ լինի՝ նաև կյան-
քիս զնով ծառայել Հայաստանի և հայուրյան ազատագրու-
րյան դատին:

Երդվում են ռազմական հանձնախմբի երդվյալ զինվորնե-
րը՝ Պալյան Աշոտ, Մելքոնյան Արմեն, Մոսիյան Մերուժան,
Դանիելյան Նորիկ...

Եռագույնը: Կարմիր, կապույտ, նարեջագույն... Այս ինչ
կարող է. սիրազ ուժերի տակ ընկալ: Քրոջ զիխաշորն է՝
հաւեջագույն: Տանը ժիշ էր լինում: Քնում էր անտառներում,
բանջարանցներում: Առտճանակը միշտ մոտն էր, քոյնի
բարակ սրվակը օծիքակարի տակ: Քույրը բարձի տակ նկա-
տել էր առտճանակը: Զարմանեցից լայնացած աշխերը հառել
էր եղբարը:

—Ալիկ, դու զե՞նք ես բանեցնում:

Եղբայրը լուս էր:

—Ալիկ, դու կարող ես մա՞րդ սպանել:

Եղբայրը քրոջ հայացքից ննշվեց:

—Մենք պաշտպաններ ենք;

—Ո՞ւմ:

—Չեր: Քույրիկս: Պատերազմ է: Իսկ դուք դեռ չզիտեք:

...Ալիկը ծանրացած ձեռքը մեկնեց ու մատները հպեց
լևոնի ձեռքին, որ սեղմել էր ջերմության մեջ վառվող հիվան-
դի ճակատը: Երեկոյան կողմ ջերմությունը իջավ:

—Հացադուլ եմ հայտարարում:

—Դրա ժամանակը չէ:—Արարատը զուր էր փորձում ետ
պահել: Ալիկը ներկայացնում է հացադուլի պահանջները:

1. Հետաքննությունը վարեն ոչ ադրբեջանցի, շեղոք քըն-
նիլները:

2. Քննությանը մասնակցեն հայազգի դատապաշտպաններ:

3. Ջերբակալվածներին հանել Աղբեջանի բանտերից,
տեղափոխել շեղոք երկրի մեկուսարաններ:

Քննիլ Վասիլեր փորձում է հանել հացադուլից:

—Դու դեռ հարցաքննություն չես տեսիլ: Դա ինչ է որ՝
մի թեթև հրմշաց: Հետեանքների մասին մտածիր:

Բանտի վարչությունը մեկուսացնում է Սարգսյանին:

Բողոքի ալիք՝ խցերում: Խոշտանգումներն ուժեղանում
են: Չորրորդ օրը ընկերների խնդրանքով կալանավորը դա-
դարեցնում է հացադուլը:

* * *

Հարցաքննություն:

Բայրամով.— Դարձյալ հորինում ես:

—Ծշմարտությունը վեր հանելու ձեր միջոցները շատ-
շատ են: Օգտվեցեք:

—Լեզուդ դեռ շատ է երկար: Հարկավոր է կարճացնել:

—Խնդրեմ:

* * *

Արեգատին շարտեցին խուց: Դաստակը վիրակապով փա-
թաթած էր: Դեմքը՝ գունատ, բայց ալքերում երանավետ շաղ
կար:

—Շան որդիներ, լթողեցին տղամարդավարի մեռնեմ: Տե-
սա շեմ զիմանում, կտրեցի:

—Դժվար չէ՞ր:—Ալիկը մոտ քաշվեց:

—Ինչ ես ասում: Մաքուր կայֆ...

—Ցավ չէ՞ս զգում:

—Ոչ մի: Արյունը երակիցդ հոսում է, տաք-տաք: Քաղցր
մի զգացողություն տարածվում, հասնում է ոտքերիդ ու ձեռ-
քերիդ: Աշքերդ կամաց-կամաց մշուշվում, փակվում են ու
սկսում ես լողալ:

* * *

Հյարգը ուոել է: Սուր նոպաներ է ունենում: Մերսումները չեն օգնում: Դրան ավելացավ միզկապությունը: Պայթում է: Ցավից գալարվում է: Թվում է՝ պիտի ցնորվի: Աղմկում են, բռունցքներով ծեծում դուռը.

— Մեռնում է: Բժիշկ կանչեք:

— Ավելի լավ: Արձանագրություն կկազմենք, կշպրտենք ձորք: — Ակնատի գռնակը բացվեց-փակվեց:

Բառաշելուց ձայնը խզվել է: Տղաների ձեռքից դուրս է պրծնում ու թափալվում հատակին: Նորից հուսահատ բախոցներ դռանը:

— Բոլորիդ ածելիով մեկ-մեկ կմորթեի: — Ֆշշաց բանտի բժիշկը և հարեր շպրտեց: — Եներիդ պատճառով շեմ ուզում տուժել: Իշխանություն է, մեկ էլ տեսար փոխվեց:

* * *

Գիշերը եղունգներով պատի հաստ շերտերում ծեփը քանդեց: Ինչ-որ բան է որոնում: Պիտի որ լինի: Դրանք բրեականների գաղտնածածկերն են:

Վերջապե՞ս:

Բաճկոնի քանդված բացվածքից ածելին խոր թաքցրեց երիզակարի տակ: Ով զիտե՛ հանկարծ կամքը թուլանա...

* * *

ՄԵԶԲԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԻԾ

Այս, կեռնային Ղարաբաղուն իրադրությունը չափացնեց բարդ է: Ղարվածորյունը ավելի ու ավելի է մեծանում: Մարզի սահմանների շրջագով տևիլ ևս ունենում գրոհայինների բախումներ, և ենդվում է անմեղ մարդկանց արյունը: Այս, ճայրահեղականների գործում են երկրի և ամբողջ բաղաբակիրք հասարակության օրենքներին հակառակ, թեև ամենքի համար պար է. զենքի ուժով ազգամիջան վեճեր անհնար է լուծել: Բայց այս ամենը բնակ հիմք չի հանդիսանում, որպեսզի ինքնավար մարզի բնակչությունը տևականորեն ապրի քաղաքական վակուումի մեջ: Միանգամաց ակնհայտ է, որ ուգիոնում բնականոն կանքի հաստատման համար հարկադր է օրինական իշխանություն, ոչ թե զինվորական իշխանություն:

Կեռնային Ղարաբաղի մի խումբ ժողովրդական պատգամավորներ հացարով հայտարարեցին ի պաշտպանություն իրնեց հայրենիքուն խորհությմների իշխանության վերահաստատման պահանջի: Նրանց քաղաքական պայքարի ծայրանեղ ձևին դիմելուն էր դրդել այն հուսահատթրյուն,

որ չեն կարողանում հարցը լուծել բնականուն դեմոկրատական գործընթացի շրջանակներում։ Արդարության զգացումնից ենելով, մենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդին կոչ ենք անուն հասնել 1989 թ. նոյեմբերի 28-ի իր որոշման կատարմանը և Լոռեային Դարարադի Խնքնավար Մարգար Վիրականցել խորհրդականի իշխանությունը։ Արդարությունը պետք է նայթի։

Խաղաղության պաշտպանության խորհրդային կոժիտեի նախագահության նախագահ՝
Հ. ԲՈՐՅԱՆԻԿ

ԽՍՀՄ ժողովագումավորներ՝
ԱՆԱԵՎ, ԱԼԵՔՍԻՆ,
ԱՐԲԱՏՈՎ, ԶՈՐԻՆ,
ԿՈՒԶՆԵՑՈՎ, ՄԱՍԵՎԻԶ

«Էլիտերատորնայա գավկան»
Հոկտեմբերի 3, 1990 թ., թիվ 40

—Պատրաստվեցեք: Տուն եք գնում: —Ավագ ՀԱԿԻԵԾ
Հրիկացրեց գուռը:

Տղաները իրար երեսի նայեցին:

—Մեզ էտապավորում են, տղաներ: —Եզրակացրեց Արարատը: Մի քանի րոպե առաջ Ասեցի՞ք: Ուղղաթիռը վայրէցք կատարեց:

—Տեսնես ուր են տանելու: Զլինի՞ Ռուսաստան:

—Ախորժակիդ քացախ: —Լունին խեթեց նորիկը:

Հանում են խցից: Զեռքները ոլորում են մեջքներին, շըդահացնում: Զ Հոգի են: Քրեականները և միլիցիայի աշխատակիցները մինչև թոփշահրապարակ... ուղեկցում են:

1991 թվականի ապրիլի 4-ն էր:

* * *

Շուվելյան: Զբոսանքի ժամ: Մեջտեղ են քաշում Ալիկին ու Արարատին:

—Բոնիր ականջից:

Ալիկը նայում է շեղ, արհամարհանքով:

—Բոնիր: Մի թեթև քաշիր ու բաց թող:

Ալիկը լի շարժվում:

—Կապանենք:

—Թեկուզ: —Տղան սկսուն, ատելությամբ նայեց թուրքին:

Ստիպում են Արարատին: Ի պատասխան անհեթեթ պահանջի՝ հանգիստ ժպտում է:

—Դաս տվեք սրանց: —Հրամայեց միլիցիայի ավագը:

Ալիկի կողոսկրերը լրթարցին: Արարատի քիթ ու բե-

բանից արյուն ժայթքեց: Վեր կացան: Հանկարծ նայեցին իրար ու ժպտացին: Նորից նայեցին ու ծիծաղեցին: Գո՞զ, շատ գո՞զ:

— Գազաննե՞ր: Երկաթ են դառել: — Գոռաց թուրքը: — Սրանց վրա ոչինչ չի աղում:

Ավագը մոտեցավ.

— Ո՞նց ես ինձ նայում:

— Քեզ նման:

— Այսինքն:

— Իսկ ինչո՞ւ պիտի քեզ ուրիշ կերպ նայեմ: — Խեթեց Ալիկը:

— Սրնախումի աշքեր ունես: Քանի՞ թուրք ես սպանել: Լուրջուն:

— Գիտե՞ս հիմա ինչ կանեմ:

— Գիտեմ:

— Պատրաստվիր:

— Պատրաստ եմ:

Զարգում են մատների հոգերը:

— Որ չկարողանաք զենք բռնել: Որ չկարողանաք կրակել: — Սպան հոգնած ու կատաղած հոգում է:

— Զենքի անընդունակ պիտի դառնաք: Այնպես անենք, որ երեք ուշքի շպաք: Տղաները օրորվում, ընկնում են:

— Միզուց շակառակվես, տղաս: — Մեր բանտարկյալը շորք պատռեց ու սկսեց կապել: Ծնկահոդի ջերը վնասվել էին:

— Եթե ենթարկվեի, ավելի ստորացուցիշ բաներ կպարտագրեին: — Թող իմանան ում հետ գործ ունեն: — Տնքաց Ալիկը:

* * *

Ի վիճակի չէ շարժվելու: Օր-օրի վիճակը ծանրանում է: Արմենն ու Կարենը հսկիլներից աշք գողանալով խոտերի արանքից փիփերթի թևեր են պոկում, թաքցնում ծոցներում:

Դիշերը կառնը հսկում է ակնատի մոտ: Հսկիշի ոտնաձայները հենց հեռանում են, ձեռքով նշան է անում: Նորիկը քանդում է ներբնակը, հանում բամբակը, ոլորում պատրույդ սարքում ու վառում: Երկաթե ամանի մեջ եփվում է փիփերթը: Սպիտակ հացի թաքցրած բաժինները կտրտում են մեջը:

— Գոնե մի գդալ, ամեն մեկը: — Խնդրում է հիվանդը:
Ու ոք չի մոտենում:

Ապրիլի 24: Տեղափոխում են թիվ 34 խուցը: Երկաթե
մահճականեր՝ առանց փալասների: Տղաների վրա շոր չի
մնացել: Ցրտից դողում են: Մարմինները ծածկված են վեր-
քերով: Իրար գրկում են, որ տաքանան: Կենտրոնում՝ ամե-
նատաք կետում կանգնածը տեղը փոխում է մյուսների հետ:

Մի շաբաթ հետո տեղափոխում են ուրիշ խուց: Տեղա-
շոր, նույնիսկ հագնելու շոր, սպիտակեղեն, վարսավիրանոց,
բաղնիք: Տղաները զարմացած են:

— Երկի ստուգիշ հանձնաժողով է եկել: — Եղրակացրեց
Արարատը:

— Զէ, սա հանձնաժողովի բան չէ: — Դլուխն օրորեց
Ալիկը:

Բանտի պետի աշխատասենյակը:

— Վաղն այստեղ հանդիպելու եք Գահբովի հետ: Խընդ-
րելու եք, որ ձեր կյանքը ձեզ բախչի: Ձեզ ազատություն տա:
Պիտի մեղա գաք, ձեր մեղքերը խոստովանիք: Լաց լինեք,
աղաշեք: Պա՞րզ է: Ամեն ինչ նրանից է կախված: Հիմա
տեսնենք ինչ եք ասելու:

— Դո՞ւ: — Դիմից Ալիկին:

— Ինչո՞ւ մինչև հիմա ասել եմ: — Նետեց Ալիկը:

— Հիմար:

— Դո՞ւ... — Բանտապետը մատնացուց է անում Վաշիկին:
Վաշիկը լուռ է:

— Լաց եղիք, հաստակաշի: Լաց եղիք, տեսնենք Գահբովի
առաջ ինչպես ես լաց լինելու: — Ասում ու խփում է բան-
տապետը:

— Մեղա եկեք: Աղաշեցիք:

Մեկ օր անց:

Մեջտեղում՝ գիխավոր դատախաղը: Մեղանի շուրջ՝ քըն-
նիչներ, միլիցիայի աշխատակիցներ:

— Դուք սպանել եք անմեղ մարդկանց: Կանանց, երեխա-
ների, խորհրդային զինվորների: Քշել եք հոտերը, պայմբեց-
րել մերենաները: Զբաղվել եք ավագակությամբ: Դուք կը-
պատժվեք օրենքի ամբողջ խստությամբ:

Օպերատորը լուսարձակները ուղղում է բանտարկյալների

Վոաւ: Բոլորը սպասում են : Գաիբովը նույն ոգով նորից մի քանի մտքեր է շարադրում: Նորից սպասողական դադար տալիս:

—Սպասեցեք: —Գաիբովը ձեռքը բարձրացնում է: Օպերատորները գաղարեցնում են աշխատանքը:

Շրջում է բանտապետի կողմը և սպառնալից.

—Մա՛ ինչ բան է: Վատ է, շատ վատ, Քյազիմով:

—Իմ կողմից՝ պատիժ: Շաբաթը՝ երեք անգամ:

Կալանավորներին հեռուստաբաճից հանում են:

* * *

Միջանցքից աղմուկ, հրմշոց են լսում:

—Էլի Հայ են բերում: —Ալիկը մնացավ ակնատին, սփրինած շրջվեց:

—Մհերը:

Ալիկն անցավ դռան ետերը: Նորեկի հոնքերը զարմանքից բարձրացան, բայց տիրապետումն էլ ակնթարթային էր: Հայցքն ընկել էր Ալիկի սասառղ աշքերին:

—Ճանաշո՞ւմ ես որևէ մեկին: —Հարցրեց ուղեկիցը:

—Ոչ:

—Զեզնից որևէ մեկին ժանո՞թ է սա:

—Ոչ:

Դուրս շրինկաց: Բայց ոտնաձայները չեն հեռանում: Ալիկը, որ դեռ դռան ետեռում էր, մատը դրեց շուրթերին: Երբ կեսգիշերն անցել էր, կամացուկ քաշվեց մոտը:

—Ե՞րբ:

—Երկու շաբաթ առաջ: Տղաներին զգուշացնելու էի գնացել: Մինչև զյուղ հանելը, Գետավանի կամրջի վրա վերցրին:

—Էլ ում:

—Միայն ինձ:

—Ի՞նչ է կատարվում այնտեղ: Տեղեկություն տուր:

—Գետաշենը տեղահանեցին: Հադրութից 10-12 զյուղ չկա:

—Իսկ տղանե՞րը:

—Գործելու հնարավորություն չկա: Խորհրդային զորքի դեմ զժվար է:

—Զեր խմբի բացակայությունը ազդում է գործի վրա:

Ալիկը ծանր հոգոց հանեց:

—Զենքի՛ համար ինչ եք անում:

—Համանում է: Բայց շատ դժվար: Եթե այս շրջանն էլ հաղթահարեցինք, կհաղթենք: Ժողովրդի մի մասի մոտ հուսահատություն է նկատվում: Մի մտավախություն կա: Ժողովուրդը մեզնից երես չթերի: Այդ գործողությունների պատճառը մեր մեջ լտեսնի:

—Ժողովուրդը կհասկանա: Կդիտակցի: Բռնությունը բըռնություն է ճնում: Սա ժամանակավոր պարտություն է: —Այլի կը իր ծածկոցը զցեց ընկերոջ մեջքին:

1992 թվականի մայիսի 30-նն էր:

* * *

1992: Հունվար: Հսկիչը մոտեցավ: Ալիկը պատգարակը ցած դրեց ու մոտեցավ ջհանգիրյանին:

—Պատմիր: Արագ:

Պատմեց:

Երկուսը ծանր մտածումների մեջ ընկան:

—Հուսահատվելու իրավունք չունեմ, Ալիկ:

Ալիկը ժպտաց:

Երկրորդ հանգիպումը ապրիլ-մայիսին էր:

—Ջհանգիրյան: —Ալիկը հարցական նայեց:

—Դատախազը գնդակահարություն է պահանջել: —Պատասխանեց խոլ, բեկրեկուն ձայնով:

—Շատերին ևն որոշել, բայց փոխել են: —Հուսադրեց տղան:

Հսկիչը մոտեցավ ու քշեց կալանավորներին, Դա վերջին հանգիպումն էր:

* * *

Մհերի մեջքի ողը նորից դուրս ընկավ ու մնաց ծոված, անշարժ: Մոտեցավ, առանց ուշադրություն դարձնելու ցավից ալայլված գեմքին, շփումներով տեղը զցեց: Մհերն ուղղվեց:

—Արագ: Քեզ հավաքիր: Կդան, կիսիեն:

Մեջքից ընկերությը պաշտպանելով Ալիկը շարքն առաջ մղեց:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ազգամիջյան ընդհարումների նորի վրա Լեռնային Դարարանում սպանվել են՝ 1989 թվականին՝ հայ՝ 5, ադրբեյչանցի՝ 7, 1990 թվականին՝ հայ 41, ադրբեյչանցի՝ 17, զինծա-

ռայող՝ Յ, վիրավորվել են հայ՝ 92, ադրբեջանցի՝ 31, զինծառայող՝ Յ, պատաճել են վեցվել. հայ՝ 46, ադրբեջանցի՝ 32, ավտոբանապարհային հարձակումներ ձեռնարկել են. հայեր՝ 6, ադրբեջանցիներ՝ 17, բնակավայրերի վրա հարձակումներ գործել են. հայեր՝ 26, ադրբեջանցիներ՝ 36:

1991 թվականին՝ սպանվել են. հայ՝ 142, ադրբեջանցի՝ 84, զինծառայող՝ 11, վիրավորվել են. հայ՝ 274, ադրբեջանցի՝ 116, զինծառայող՝ 3:

* * *

—Հա՛մ՝

Ցնցվեց:

—Հա՛մ՝

Քարը ցած դրեց:

—Նստի՛ր:

Թուրք զէկի մեկնած ծխախոտը վերցրեց:

—Լսիր, Հա՛յ: Դուք ի՞նչ տեսակ մարդիկ եք:

—...

—Նստիր: Նստիր՝ պատմեմ:

—Մի քանի ամիս առաջ էր: Հունվարին; Զյուն էր եկած: Օրը՝ 26-ն էր, ցուրտ, ցուրտ: Գյուղը զբավելու հրաման ստացանք: Կիմանա՝ Քարին Տակ է կոչվում: Փոքրիկ գյուղ է, վերևից՝ Շուշիից՝ մի բուռ, այն էլ՝ բռանդ մեջ: Լսում ես, Հայ:

—Լուսադիմին գրո՞հի անցանք: Ժամը՝ 6.00: —Շուխը ներս է քաշում: —Գյուղում 50-70 զինվոր կլիներ: Ամենաշատը՝ մինչև 100: Ոչ ավել: Մինչև երեկո՝ կոիվ էր: Հրաման եղավ՝ հետևակը մոտենա ու մտնի գյուղ: Իշանք ձորը, որ բարձրանանք: Թէ ոնց եղավ... ինչպես եղավ... Ո՞ի...Ո՞ի...Ո՞ի... —Թուրքը ձեռքերը սեղմեց ականջներին: Կրակում էին ղեմից, երկնքից, ամեն կողմէից: Տղաներն ընկնում էին իրար վրա... Արյունոտ ձո՞ր... 130 զինվոր՝ միանգամից: Ո՞ի... Ո՞ի...

—Զեր դեմ կովել չի լինի, Հա՛յ: Քաջքերի նման թափեցին մեզ վրա: Ես ո՞նց կենդանի մնացի, Հանելուկ է:

Հայը լուռ լսում է ավագ սպային, որին թուրք քրեականները «խելագար» էին ասում: —Խարեցին տարան: Նրանք, որ խարեցին, նրանց տղաներից չկային, Մհմիայն խարված-

ներ էին: Ես ամենամեծ խարվածն էի, ես՝ նրանց հրամա-
նատա՞րը:

Կալանավորը ծովիս ներս քաշեց:

—Չես խոսում, Հայ, Չեռքերդ կապված են: Բայց աշքերիդ
մեջ ես կարդում եմ քեզ:

Ալիկի աշքերը մետաղի փայլ էին ստացել:

—Աշքերդ մատնում են հոգիդ, Հայ: Այստեղ ես ու դու
հավասար ենք: Մի վախենա: Խոսիր, Հայ: Մտքինդ ասա:

Հայը լուռ ծխում է:

—Ես շմեռա նրանց հետ, այնտեղի Ես գնում էի: Ես
կրակում էի: Ես հրամայում էի: Առաջ էի տանում նրանց՝
տղաներին, որ ընկան ձորում... Դիակներ՝ ցաքուցրիվ, ար-
նաշաղախ: Փախա եա, Շուշի՝ օգնության: Ջոկատ շտվեցին
գոնե դիակները վերցնելու: Մնացին անթաղ: Աշքները՝ բաց
երկնքին: Լսիր, բեր ականջիդ ասեմ: Նրանցից շատերը հար-
բած էին, կամ... Ես արգելում էի, բայց թաքուն... սրսկվում
էին: Նայիր սրանց: Բանտը լցված գողեր են, ավազակներ,
դանակ քաշողներ, թիկունքից հարվածողներ: Սրանք ազգի
համար կորած մարդիկ են: Դուք ձեր ազգի համար տանում
եք այս շարչարանքը և հանգիստ եք, գիտեք ինչի համար
եք մեռնում, Հայ:

—Հոդվածներդ ծա՞նը են:

Ալիկը թոթվեց ուսերը:

—Հարգում եմ ձեր նմաններին:

Միառժամանակ երկուսն էլ լուռ ծխում են:

—Ում էր պետք: Հը՞: Այս կոփիր: Մենք կոտորեցինք
ձեզ: Սկզբում: Հետո գուք կոտորեցիք մեզ: Նրանց, այն
ընկածներին, ձորի մեզ, նրանց Դարաբա՞ղ էր պետք: Նրանք
լավ տղաներ էին: Շատերը՝ Բաքվից: Նրանք երեխաներ ու-
նին: Հարսեր ունեին: Ես էլ: Ես այստեղ ինչ գործ ունեմ,
Հայ: Կատարվածից հետո աշքիս ամեն տեղ թշնամիներ էին
երկում: Նստեցինք տղաներով, խմեցինք: Նրանց ճանապար-
հում էի: Չեմ հիշում, ասում են կես գիշերին փողոց եմ
դուրս եկել կրակել եմ մարդկանց, շենքերի վրա:

—Աֆղանստանում եղե՞լ ես, Հայ:

Բացասարար օրորում է զումիր:

—Ես եղել եմ: Բայց Դարաբա՞ղը... Սա ուրիշ բան է: Հայ



1991 թվական, Օգոստոս:

Հրայրը մոտ քաշվեց, կպավ Ալիկին:

—Վաղը տանելու են Աղդամ կամ հարևան շրջանները:

—Հաստա՞տ:

—Ռեժիմի պետն անձամբ ասաց:

—Չհամաձայնես: Սահմանամերձ գոտի է: Այնտեղ կռիվ-

ներ են գնում:

—Պարտադրում են կեղծ ցուցմունքներ ստորագրել:

—Պահանջիր, որ դատապաշտպանը թուրք վիճի:

—Եթե հանկարծ չգամ, մերոնց...

—Պինդ եղիր: Կպաս:

20 օրից հետո... մտավ: Տղաները վեր թռան նստեցին:

—Մերոնք են ուղարկել: — Հագի նոր շորերը ցույց տվեց:

Հայացքը՝ երջանիկ, անորոշ:

—Մեր տանը շատ մոտիկ էի: Մերոնք իմացան: Շոր ուղարկեցին:

—Հրայր: —Ալիկը մոտեցավ ու բռնեց ուսերից:

—Չե՞ս հավատում: Մրանց մեջ ես նույնիսկ լուսանկարվել եմ: Որ գնանք ոյուղ, ցույց կտամ: —Քա՞հ-քա՞հ ծիծաղեց:

—Հրայր: —Տղաները փշաքաղվեցին:

Չոքեց պատուհանի առաջ, խաշակնքեց ու սկսեց աղոթք անել:

Հեկեկոցը բռնեց ու փուլեց գետնին:

—Հրայր:

—Հեռու, հեռու կացեք... Խոսում են, խոսում են բերանիս մեջ: Չեն թողնում, որ հանգստանամ: Չեն թողնում քնեմ: Սրիկաներ:

—Ռո՞վ:

—Այստեղ, ատամիս տակ, լրտեսներ են: Մինչև Աղդամ գնալը չկար: Հա, հիշեցի, այնտեղ դրին, որ մաքերս հասցնեն բանտապետին:

—Հա՞ հա՞ հա՞... Այսպիս, դե, գնացեք: Վրեժ լուծեցի: Դե գնացեք, արածներս եեղ հասցրեք: —Ափի մեջ բըռնել էր բռունցքի հարվածից շարդված երկու արյունոտ ատամը և քրքչում էր:

—Հրայր: —Լացակումեց ծեր կալանավորը:

—Թագավոր եք: Դուք այստեղ՝ ի՞նչ թագավոր:

Աղդամում գիտե՞ք ինձ հետ ինչ է կատարվել: —Ետեւ գնաց, մեջքը դեմ տվեց պատին: Քրքչաց:

— Զէ: Զէ: Լրտեսներ, գործակալներ: Քննիչին ասելու եք:
— Զայնը ցածրացրեց:

— Ինձ այստեղ խորոված են տվել: Դինի են տվել

— Ա՛...ա՛...ա՛... — Բարձր գոռաց:

— Գինի՝ արյան գույնի...

— Դու և ինձ ծախեր: — Մհերը ետ-ետ գնաց:

— Հրա՛յր:

— Դու... — Ալիկը ետ գնաց:

— Դու...

Վազեց դեպի գուռը, երկու ձեռքով սկսեց խփել:

— Եղբայրս եկել է, ինչու շես թույլատրում տեսակցություն ինձ հետ: — Գոռաց բանտապետի երեսին: — Նա բժիշկ է: Ինձ բուժելու է եկել...

Հսկիչները թերը պինդ ոլորեցին ու տարան:

Մեկ տարի հետո միայն Հրայրին փոխանակեցին:

* * *

— Ես՝ Ալիկ Ասատուրի Սարգսյանս, ծնված 1965 թվականին, հոկտեմբերի 9-ին... — Դադար տվեց՝ հայացքով ընդգրկելով գատական կազմը: — Այսօր իմ ծննդյան օրն է, պարոնայք: — Սպասողական նայեց շուրջը:

Դատապաշտպան Տյուկան. — Ծնորհավորում եմ:

— Զգացված եմ: — Արժանապատիվ, գլխի թեթև խոնարհում շնորհավորանքը ընդունեց մեղաղոյալը:

Դատավոր. — Թողեք ներկայացումը:

— Կրթությունս բարձրագույն, ամուսնացած շեմ: — Շարունակեց մեղաղոյալը:

Դատավորը կարգում է մեղաղորական եզրակացությունը.

— 1988 թվականից, երբ բարձրացվեց Ղարաբաղի հաջը, այսինքն՝ Հայաստանի ոտնձգությունը Աղրբեջանի տարածքային ամբողջության նկատմամբ, Ղարաբաղում սկսեցին ստեղծվել զինված, անօրեն կազմավորումներ, ավազակախմբեր: Դրանցից մեկը Քաջավան գյուղում էր, որ հայտնաբերվեց և զինաթափվեց: Խումբը, որ ընդգրկում էր 25 հոգի, ստեղծվել է խաղաղ բնակչության, պետական նշանակության օրյեկտների, ավտոշարասյուների վրա, և այլն, և այլք, հարձակումներ գործելու նպատակով: Այիկ Սարգսյանը

մեղադրվում է 191-ի առաջին, 67-ի երրորդ կետերով, 70
հոդվածներով:

— Վերջին խոսքուն:

— Ես պահանջում եմ, որ ինձ դատեն ոչ թե ըստ ազգային պատկանելության, այլ կոնկրետ կատարած հանցավոր գործողություններով, որոնք իմ գործում բացակայում են: Հետաքննությունը և դատավարությունը համարում եմ բռնություն և կեղծիք: Ինձ մեղավոր չեմ ճանաչում:

— Հիշո՞ւմ ես՝ ասում էի՝ կամ լավ մանկավարժներ կը դառնանք կամ ավագակներ: Երկրորդը դառնանք: — Արմենը բոթեց Ալիկին:

Դատավորը կատարի հայացքներ ձգեց ցանցավանդակի կողմը և լուսթյուն պահանջեց:

Մեղադրյալների վերջին խոսքերը:

Արարատ. — Լեռնային Ղարաբաղում 1988 թվականից ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որ մենք ստիպված ենք եղել զենք վերցնել և պաշտպանել մեր կյանքը, կանանց ու երեխաներին:

Դատավոր. — Դու զենք ես վերցրել մարդ սպանելու:

— Ինչ եք ասում, քաղաքացի դատավոր: Մեր նպատակը միայն պաշտպանությունն էր:

— Դուք՝ անուղղակի, բայց մարդասպաններ եք: Ենթադրենք՝ դու կանգնած ես, ես գալիս եմ, ի՞նչ պիտի անես:

— Դու չես կարող գալ:

— Ենթադրենք՝ գալիս եմ:

— Չես կարող: Կփախչես:

— Չեմ փախչի: Դու էլ կկրակես՝ կսպանես: Ուրեմն հանցագործ ես:

— Այն էլ ոնց կփախչես: Մթության մեջ, որ գնդակը վրդագալով ականցիդ մոտով անցնի, մինչև Բաքու կփախչես:

Տյուլակը զսպեց փոթկոցը:

Հարցաբնության անսպասելի վերջաբանի վրա ցանցի ետևում հոհում են: Արարատը կանգնել ու հանգիստ ձպտում է: Դատավորը, փրփրած, վեր թռավ տեղից և լուսթյուն պահանջեց:

Ստեփանը կանգնեց ու կուրծքը առաջ ցցեց:

Դատավոր. — Մասնագիտությունդ:

— Ես աշխատել եմ Կիրովի անվան սովորովի դաշտում որպես որսորդ:

Յանցի ետևում՝ հոհող, ծիծաղ:

—Այդպիսի հաստիք ունե՞ք:

—Ներեցեք, քաղաքացի դատավոր, պահակ եմ աշխատել: Ես պարագավոր եմ եղել պահպանել հանրային ունեցվածքում: 100 տոկոսով անմեղ եմ:

Վիկտոր.— Քաղաքացի դատավոր: Ով է տեսել գիշերը գան և կնոջ ու երիխաններիդ վախեցնեն: Այն օրը՝ հոկտեմբերի 24-ին խորհրդացին վինվորները ինձ պառկեցրել են ցեխի մեջ, ծեծել Երիխաններս ասել են՝ հայրիկ, ինչու ես շորերդ կեղադառում, չէ՞ որ մայրիկին չի կարելի շարշարել:

Յանցի ետևում՝ հոհող:

Դատավորը համբերահատ գոռում է: —Եթե գահվեճում նորից ձայն լսվի, կպատժվեք օրենքի ամբողջ խստությամբ:

«Ավագակախմբի» կազմակերպիչներին՝ Նորայր, Արմեն, Արարատ՝ 10 տարի, «Հյուրերին»՝ Ալիկ, Լևոն, Վաչագան՝ 8 տարի, պահակակետերից վերցրածներին՝ Ստեփան, Մուշեղ, Վիկտոր՝ 6 տարի:

Դատախիազդի ելույթից. —Պահանջում եմ մեղադրվածները պատժաժամկետը անցկացնեն ադրբեջանական բանտերում: Այլապես դատում և ուղարկում եք Ռուսաստան կամ Հայաստան, և երաշխիք չկա, որ այս մարդիկ որոշ ժամանակից հեռ չեն հայտնվի մեղադրյալի աթոռին՝ առավել ծանր հանցագործությամբ:

Իններորդ օրն ավարտվեց դատավարությունը:

1991 թվականն էր: Աշուն:

—Եթե մնար իմ խղճին, ես ձեզ բոլորիդ կսպանեի: Վերջին հայն էլ լինի՝ գերագույն հաճույքով: Բայց ինչ արած, ամեն ինչ մեր ձեռքին չէ: Ամեն ինչ չէ մեր կամքով պայմանավորված: Եթե երկրորդ անգամ ընկաք այստեղ՝ հաշիվներդ պարզ է՝ զնդակահարություն առանց հարցաքննության:

—Այնտեղ, որտեղ գնում եք, կոիվ է: Այնտեղ մարտական գործողություններ են ծավալվում: Դուք զենք եք վերցնելու: Ճի՞շտ եմ գուշակում: —Բանտապես Քյազիմովը անցնում և զննում է շարքով կանգնած բանտարկյալներին:

—Չեք խոսում: Այսինքն, ինչ էլ ասեք, կեղծ կլինի: Ես ձեզ չեմ հավատա: Դուք այն մարդիկն եք, — կանգ առավ Քաջավանի տղաների դեմ: —Երբ դեռ ոչ մի հայ զենք չուներ, դուք մեր գեմ զենք վերցրիք ու վերցնելու եք: —Բան-

տապետի աշքերը զայրույթից կարմրել, ակնակապիճներից
գուրս էին թռչում:

Եքախմբից մի հսկիչ գուրս եկավ և դագանակով ուժեղ
հարվածեց շարքի ծայրին կանգնած Վաղագանի մեջքին:

Վերջինս անձայն փուլ եկավ գետնին:

—Հեռու, ստահակ, ստվերներն է մնացել: Բայց որ ան-
ցան այն կողմը, սրանցից յուրաքանչյուրը քեզ նման հար-
յուրի համար կամ:

—Ռդորմելիներ: Տաքուկ անկյուններում գլուխ պահող առ-
նետներ: Նայեցեք սրանց: —Բանտապետի մտքերի անսպա-
սելի շրջադարձից գերիները ավելի հակվեցին: —Ուշադիր նա-
յեցեք: Սրանք զաղափարի մարդիկ են: Ազգի համար կմեռ-
նեն: Ոչ թե ձեզ նման: Մի կրակոցից մինչև ծովը փախ-
չում եք:

—Դնդապետ: —Թուրք սպան ձգվեց Քյաղիմովի առաջ:

—Ռւզում ես հակածառել, հակառակն ապացուցել, Մա-
մեղով: Ղարաբաղը մաքրեցինք: Մենք նրանց համար գժիխք
սարքեցինք, որ դաս տանք, նրանք մաքրվեցին մեղնից: Սահ-
ման չկար, քաշեցին ու սկսեցին կոփկը: Բայց ձերոնք նա-
մարդ ձևով են կովում: —Թանիերորդ անդամ անցավ շարքի
առջևով: —Դուք էլ, մենք էլ: Եկեք կանանց ու երեխաներին
խնայենք:

—Գնդապետ, մեքենան դարպասի մոտ վաղուց սպասում
է: —Պատվի բռնեց Մամեղովը:

—Երկար խոսեցի: —Կարծես զառանցանքից ուշքի եկավ
գնդապետը:

—Վերցին դասը: Դե:

Պազանակները, ավտոմատի կոթերը, զինվորական կրրկ-
նակոշիկների կրունկները գործի զրվեցին:

* * *

Ազդամ —Ասկերան սահմանագծում, չորրորդ պահակա-
կետի մոտ Ալիկ Սարգսյանը հինգ այլ բանտարկյալների
հետ փոխանակվեց 12 թուրք զերիների հետ: Նրան դիմավո-
րեց ուսանողական զաղափարակից ընկերը՝ մայոր Ֆելիքս
Գաբրիելյանը՝ Ղարաբաղի պաշտպանության ուժերի հրամա-
նատարի տեղակալը:

1991 թվականի ապրիլի 11-ն էր: Բանտարկության օրից
մեկ և կես տարի անց:

Վեր մի ելեկ, որովհետեւ նհավան
ձեր միջումը չէ, որպես զի ձեր թշնա-
միների առաջին շարդուիք: ...ել դուք
սրով կընկնէք, որովհետեւ դուք նհա-
վայիցը ետ էք դարձել:

Նշանառության տակ են կարևոր երեք կետերը՝ դպրոց
խանութ, ճաշարան, ուր շտաբն է: Կից սենյակից՝ կրակոց:
Բակից՝ երկրորդը: Նորիկի քեռին՝ Յուրան, տեղաշորից
վեր թռել վազել էր բակ ու կարաբինից կրակել օդում՝ տագ-
նապի ազգանշան: Շտաբից ոչ մի կրակոց չհնչեց: Ամեն ինչ
կատարվեց ակնթարթային, հաշվարկված: Տաղավարի տակ՝
բերանքսիվայր պառկած են տղաները:

—Զեր երեսից միշտ տուժում ենք: —Շպրտեց Լոռնը:

—Լոն'! Մենք ձեր դեմ ոչինչ շունենք: —Սպան իրադրու
թյան մեջ զարմանալի նորանկատությամբ ընկալեց ասվածի
քաղաքական իմաստը: —Մենք բռնության դեմ ենք: Մենք
թույլ չենք տա ճնշել աղբրեցանցիներին: —Ռուսը սապոդի
կրունկով խփեց գլխին: Քթից արյուն արծալ:

—Օհո՛, անգիտական վիճակները... —Փակաղակները շըխ-
կացնելով հիացավ զինվորը: —Սրանդ տեսեք...

Պառկածները տրորվում են կրունկների, ավտոմատների
կոթերի ու դագանակների հարվածների տակ:

* * *

Կալանավորը ցավից դեմքը ծամածոելով մի կերպ նըս-
տեց աթոռին:

Թննիլ: —Նպատակու:

Լոռն: — Թէրթում հայտարարություն կարդացինը, Եկանը
Քաջազնան: Ես և Վաշագանը:

Թննիլ: — Դու շես գտնում, որ համառելը և խորամանիե-
լը տվյալ դեպքում քեզ չեն օգնի:

Լոռն: — Ես ասում եմ այս, ինչ եղել է: Կարող եք ստու-
գել: Աշխատող ձեռքերի կարիք էր զգացվում: Եկանը, որ
գլուղը մերականգնենք: —Համառ, առանդ ալք թարթելու նա-
յեց քննիչին: Թննիլը նույն հայացրով զննեց դիմացինին: Նա
հասկացավ, որ դիմացը պատ է: Մի քանի կաթի ավել կամ
պակաս արյուն թափելն էլ հատուկ իմաստ չունի:

—Տանե՞լ,

Զեռքերից բռնեցին ու քարշ տվեցին:

Դրսից շների հաշոց եկավ: Խցի ներսում ձգվեցին: Վընդպատոցից ու շնային անմոլուցք կովլառոցից տղաները հասկացան: որ շներին կերակրում են: Ուրեմն հիմա իրենց էլ ինչ-որ բան կծկեն: Բոլորը լուրջ սպասում են: Խոսելու, արտահայտվելու ուժ չկա. ուշադրությունը դատարկ որովայնների ճնշոցի վրա է: Երբորդ ամիսն է արդեն: Մարմինները սովածությունից նվազում են:

Ակնատը բացվեց: Կերակրաբաժինը լցվեց ամանների մեջ:

— Գդալները ցած դրեք: Զեռք շտալ: — Արարատն ու Ալիկը գդալները շպրտեցին. ըմբոստություն:

Լևոնը բախեց դուռը: Հսկիչը բացեց ակնատը: Պահանջեցին հիրթապահ սերժանտին:

Մանում է՝ զարմացած:

— Ի՞նչ աղմուկ է:

— Ընկեր շեֆ, — քաղաքավարի և ձախին հարգալից երանգ տալով դիմում է կառնը: — Նայեք, սա ի՞նչ է: — Ու գդալով խառնում է ափսեի պղպարազուրը:

— Ի՞նչ էիր սպասում:

— Գոնե կարտոֆիլի մի կտոր: ոսպի մի հատիկ լինի մե-

ջբ:

— Ինչ է, առողջարան եք եկել:

— Բայց խիզն էլ լավ բան է:

Սերժանտը շերեփով խառնեց ընդհանուր կաթսան: Սըրա համար կերակրի այս որակը նորություն չէր իհարկե, բայց հանդիմանեց հսկիչն: Հսկիչը թոնթորալով գնաց հարկան մասնաշենքը՝ ճաշ բերելու:

Հարկան խցերում հայտնի է դառնում կատարվածը: Վաշկիլ և Վիկտորը նույնպես անհնազանդություն են հայտարարում: Երկուսին ծեծելով միջանցքով տանում են պատժախուց՝ երեք օրով:

Երբ կառնը ամանը դրեց ակնատի գողին, հսկիչը շերեփով այնպես տվեց, որ ճաշի շուրը ցայտեց դեմքին:

— Կարգին չե՞ս կարող:

— Դա դու՞ ես ինձ ասում:

— Ես եմ ասում: — Դավագրգությանը հանձնվեց տղան:

— Չե՞ս խրատվում:

— Չե՞մ խրատվում:

— Լավ: Կտեսնենք:

«Զբոսանքից» հետո հսկիչը կանգնում է կառնի դեմ ու
նրան անջատում է խմբից:

—Դե, հիմա խոսենք:

Կալանավորը լոռում է:

Դագանակի հարված պիխին:

—Դե, խոսիր տեսնենք:

—Թե դրսում հանդիպեինք:

—Դրսում ի՞նչ:

—Դրսում չի իմացվում՝ ով ում... Այստեղ տերը գու ես,
դու ես ելոսում:

Երբ մեկ ժամ հետո կալանավորին շպրտեցին խուց, ուշ-
քը պիխին չեր:

* * *

—Վերցրու կերակրակաթսան և շներին կերակրիր:

—Չեմ անի: — Լեռնը լարվեց ամբողջ նյարդերով: Գիտեր
պատասխանին ինչ հետեւլու:

—Վերջին անգամ եմ կրկնում՝ տա՛ր:

—Թե կուզ սպանեք էլ...

Կողոսկրերը ջարդված ընկած է կալանավորը:

Կապիտանի ուսադիրներով ծանոթ թուրքը մոռենում ու
միջամտում է:

—Մ'նչ ես ամեն ինչից պատմություն սարքում: Հերիք է,
էլի:

Լեռնը տնքում է:

—Ինքոք քեզ որ չես խղճում, մե՞նք պիտի խղճանք: — Կա-
րեկցանքով ջոր է ջփում գեմքին:

—Թող մարդավարի խնդրեր, տանեի:

—Քեզ՝ մարդավարի: — Սրան տեսեք: — Նորից կատա-
ղած վրա է քշում ոստիկանը: — Բայց զու ո՞վ ես, որ ես
քեզ խնդրեմ:

—Ես նա եմ, որ չե՛մ տանի:

—Հերիք եղավ: — Հաֆիզը գոռաց երկուսի վրա ու հը-
քեց վրա պրծած ոստիկանին:

* * *

Բանալին պտտվեց: Տղաների դեմքով ժպիտ անցավ:
Ճարտարապետ Հաֆիզը եկել էր քաղաքական զուցցի պա-
հանջը լրացնելու: Խցում բոլորը բարձրագույն կրթությամբ
կալանավորներ են:

—Ար օրինակ, ձեր դաշնակները, Վրաստանի որոշ տարածքներ էլ են հաշվում հայկական: Դուք հողեր եք ուզում նվաճել:

—Դե, դա առանձին մարգկանց ծրագիրն է, իսկ ընդհանրապես,—կեռնը ծամծմեց միտքը,—հիմնականում...— Այդպես էլ շկարողացավ հստակ ձևակերպել: Հայ հեղափոխական դաշնակցության ծրագրի այդ մասի շուրջ ինքը հաճախ էր վիճում ընկերների հետ: Ամբողջական Հայաստանի գաղափարը նրան թվում էր՝ անմիտ ցնորք, անցած պատմություն, որ իմաստ չունի փորփրելը:

Մտքիս չի հասնում: Մի տեսակ լուրջ գաղափար չէ՝ ասում էր: Որովհետև Բաքվում ես կրթվել: —Խեթում ու բացատրում է Սարգսյան Աշոտը: Անիրական է: Առայժմ: Հետո... Բացատրում էր դաշնակ ընկերը:

Իր համար այս կոփվը կոնկրետ է: Իր տունը, իր հողը պահել՝ ամեն գնով: Ղարաբաղի լինել լինելու հարցն է: Իսկ Արևմտյան տարածքները... Եթե իրենցը լինեին, իհարկե, վատ չէր լինի: Բայց... Առողի մտածողությունը ոեալ է: Գնել և լուծել կոնկրետ խնդիրներ: Այս, ինչ իր զգայարաններից հեռու է, մի կողմ է թողնում, ինչո՞ւ ուղեղը զբաղեցնել:

—Մարդ որտեղ ապրում է, որտեղ իր տունն է, ոչ ոք իրավունք չունի նրանից խևելու այդ՝ տունը, ապրելը, ազատությունը:— Ինչպես միշտ, գժվարին քաղաքական վեճերում զիվանագիտուեն և ճարպիկ լողաց նորայրը: Նա ավելորդ էր համարում նման դեպքերում ավելորդ քաղաքական կրեք բորբոքելը: Մինչդեռ նորայրի վերջին խոսքերի վրա կապիտանը մտորեց ու համաձայնեց. մարդու հայրենիքը հողն է, որի վրա ապրում է:

—Դրությունը նորմալանում է: Հավանաբար շուտով խաղաղություն կինի:

—Մեր ուզածն էլ այդ է: Բայց ի՞նչ ձևվ:— Նորայրը դասավորում է հարցերն այնպես: որ կարողանա դրսի իրադարձությունների վերաբերյալ տեղեկություն կորզել:

—Պարզ է՝ անջատում չի լինի: Հադրութն ու Բերդաձորը գրավել ենք՝ ետ շենք տա: Կապրեք ձեր տեղը՝ եթե իհարկե... նորից ձեր ծալրահեղականները լիառնեն:

—Այնուամենայնիվ, ինչքանո՞վ է բարոյական, որ գրավված գյուղերի բնակիչները քշվել են իրենց տներից:— Զդիմացավ նորիկը: Ալիկը կսմթեց կողը:

—Կոիվը մենք չենք սկսել: —Ճարտարապետը ավարտեց
օրվա զրույցը:

* * *

Դժվարը առաջին հարվածներն են: Մարմինը դող է պա-
տում՝ սպասումից, վախից: Հետագա հարվածները մարմինը
ընդունում է անտարբեր, նյարդիրը՝ բթացած: Այդ օրը տղա-
ներին կիսամերկ հանեցին բակ: Այդ օրը իր դաժանությամբ
առանձնանում էր: Ճարտարապետը անցավ կողքներով՝ դեմ-
քը շրջած: Հեռու կանգնած ծխում էր, չէր էլ նայում տղանե-
րի կողմբ: Հաջորդ օրը մոտեցավ խմբին, ծխախոտ մեկնեց:
Նորայրը շրջվեց: Տուփը դրեց նստարանին:

—Խոզալլուում ձերոնք մորթել են կանանց ու երեխանե-
րի: Դուք դաժանությամբ մեզ գերազանցեցիք:

Փետրվարյան դաժան ցուրտ օր էր:

* * *

Աշխատում են:

—Նայիր, աշքդ ուսու՞մ է: Կարո՞ղ ես... —Սերժանտը դա
վագրպում է թուրք «փսլնքոտին»:

—Մրա՞ն: — Հոխորտաց թուրքը:

Վիկտորը բարձրացավ կոացած տեղից ու աշքերը զար-
մանքից լայնացել են: «Փալնքոտը» մոտենում է: Հաղթան-
դամ լայնաթիկունք՝ Վիկտորը կանգնել ու սպասում է:

—Գու՞...

—Հա, քե՛զ...

Վիկտորը փնշաց: Գույնը դեմքին տվեց, կարմրեց, սփըրթ
նեց:

—Ես քո թուրք... — Հայ՞ոյանքը կրկնակի խիստ էր: Տը-
ղաները փոթկացին: Նորայրը անհանգիստ փորձեց զգաս-
տացնել:

—Վիկտո՞ր:

Վիկտորն անջատված էր և նրան չհասավ նորայրի ձախը:
«Փալնքոտը» առաջինը ապահովեց: Վիկտորը ձեռքը ետ տա-
րավ ու՝ շրա՞խկ: Թուրքը փովեց ուշագնաց: Ոստիկանները
դրան էին սպասում:

Խցի անկյունում Վիկտորի մարմինն է՝ անդիտակից: ան-
հաղորդ:

—Հացագուկ և բողոքի նամակ: — Առաջարկեց Լեոնը:

—Արդյունք չի տա:

—Թեկուզ: Բայց թող հասկանան, որ արժանապատվություն ունենք: —Մհերն էր:

Նորայրը թելադրում է: Յուրի Ակոպովը որպես քրեական աշխարհի գիտակ, գողության գործով էր նստած, լրացնում, ուղղումներ էր անում:

—Բանտն էլ օրենքներ ունի, պարտավոր են ենթարկվել:

Ավագ սպան բանակցում է, երեք տուփ ծխախոտ, կալանավորի անձը հարգելու և շծեծելու խոստումներ՝ եթե «հարգելի, ծանրակշիռ» պատճառներ չկան:

* * *

Վիկտորի վիճակը ծանր է: Լեզզի խոհարարից ոսպ են խնդրում: Կես գիշեր է: Լցնում են 300 գրամանոց թիթեղի ամանի մեջ: Հանում են թաքցրած թերթերը, թաթախում պուլիթիւններ տոպրակի ճղված կտորների մեջ: Որ դանդաղ վառվի...

Ծխախոտ չկա: Վաշագանը առաջարկում է իր ոսկե ատամնաշապիկը և մեխով հանում: Նորայրը բանակցում է ավագ լեյտենանտի հետ: 12 տուփ «Աստրա»:

* * *

Հսկիչը կանգնում է դռան, մեջ: — Վաշագան Քոշարյան: Լևոն Գասպարյան: Հավաքվեք:

—Ռո՞ր:

—Նախիցնան: Փոխանակության:

Օդանավակայան: Կալանավորներին դիմավորում է... ամբոխը:

—Պիտի համբուրեք հողով:

—Պիտի'...

—Պիտի'...

Քաշում են մազերից: Կուցնում: Դիմադրում են: Հողը բուռ են անում ու լցնում բերանները:

—Թող աշխները դուրս գա:

—Թող'...

—Թող'...

Կալանավորների քթից, բերանից արյուն է հոսում: Դիմադրությունը կամաց-կամաց թուլանում է: Խնբնաթիւնների հռնդյուններն ու ամբոխի հարայնոցը հեռանում է:

Միլիցիալի բաժանմունք; Երկուսն էլ ընկած են հատա-
կին՝ կիսամեռ:

Հեռացած ձայները նորից մոտենում են: Այս ինչ խոշոր,
Հսկայական ֆիդուրներ են շարժվում: Զեռք է բարձրացած՝
ոնց որ ծառի գերան: Իսկ սա Հսկայական աշք է, կույզ, մութ,
բրդջում է, իսկ ուր է մարմինը՝ չկա, չի երեսում: Իսկ այս ե-
ղունգները՝ սարսափելի են, խրվում են մարմնի մեջ: Արյան
քաղցր ու հողի կոշտ համը փիսում է առաջացնում: Գիտակ
ցությունը նորից մթագնում է՝ կյանքի ու մահվան սահմա-
նագծում պահպանելու հոգու անոթը՝ մարմինը: Զհասկացան,
թե քանի ժամ, քանի օր էին ընկած այսպիս, միայն նեղիկ
լուսամուտից թափանցած լույսի փոնչը խլոտաց ընդարձա-
ցած մարմիններում:

Առաջինը կենդանության նշաններ ցույց տվեց Լևոնը:
Երջվեց ու կառաց բոթեց Վաշագանին: Սա զանդաղ ձգելով
կոռեր՝ բացեղ աշքերը, հետո մարմինը մի կերպ ձգելով՝
նստեց: Վաշիկի երեսը ծովել է: Մի աշքը ուռած, լցված ու խո-
շորացած: Փորձեց խոսել, բառերը դուրս չեկան, թուքը ծորաց
կրծքին: Զեռքը տարավ ու անզգայցած լնդերի վրա շոշափեց
շարժվող տառամները: Քաշեց՝ մեկը երկուսը, երեքը: Բերա-
նը հանգստացավ:



Ժողովրդական ճակատի տղաները շրջան են կազմել:

Լևոնին կանգնեցրին պատի դեմ: Հրամանատարը՝ Ղարիբ
անունով, մոտեցավ ջրով լի բաժակը դրեց գլխին: Մի քանի
մետր հեռացավ ու բարձրացրեց ատրճանակը: Նշանառու-
թյուն է վերցնում: Տղան աշխատում է չնկատել, միտքը չկհնա
ռոնցնել հաշիշեց կարմրած աշքերի վրա: Զինվորները հրո-
հըռում են: Ղարիբը գոռում է տղաների վրա՝ մի իսանգարերը:
Աշքերը չի թարթում: Աղմուկը էլ ավելի է թունդ առնում: Տղ-
ան նայում է ակնդիտ, աշքը չի թարթում:

Չի վրիպելու: Խփելու է ուղիղ բաժակին: Ինքը չի կասկա
ծում զրա մեջ: Համոզված է՝ ներզգացողությամբ, բոլոր դգա-
յարաններով: Ատրճանակը շպրավեց օդ ու նորից հայտնվեց
Հրամանատարի ձեռքում: Խաղում է... Փողը վեր ու վար է ա-
նում: Չի վրիպելու: Հաստատ: Տղան անթարթ նայում է: Կրա-
կոց: Զուրը զովացնում է դեմքը: Հանգստությունը լիակա-
տար է զառնում վայրկենապիս: Տղայի ոչ մի մկանը չի շարժ
վում: Կանգնած է նույն դիրքով: Մեկը մոտեցավ ու քացով

ուժեղ հարվածեց որպիտայնին: Երկրորդը հարվածը, երրորդը՝
Մոտենում են նաև մյուսները: Գոռում են՝ սա գրոհային է...

—Հեռո՛ւ: — Անսպասելի գոռաց հրամանատարը: — Հեռու
ու զնացեք: — Ընդհանուր հարայ-հրոցի մեջ ոչ ոք ուշագրու-
թյուն շդարձրեց: Մոտեցավ ու բռունցքով տվեց մեկի մոռ-
թին: Խումբը հետ քաշվեց: Տղան գետնին տապալված հառա-
շածայն խուլ հեռում է:

Էլեկտրական սալիկի վրա կեռ դաշույնը տաքացնում են:
Դաշույնի հետքը՝ կարմիր, երկար, մնաց Վաշիկի կրծքի ու
փորի վրա: Դանակով մեջքներին և ազդրերի վրա խաչեր փո-
րեցին գլխների մաշկի վրա կիսալուսնածև պատկերներ
խարանեցին: Մեկ ուշագնաց են լինում, մեկ՝ գիտակցության
գալիս, իսկ վախի, սարսափի զգացողությունն այլևս չկար-
անհետացել էր:

Երջան են կազմել: Սարսում է անցնում կա-
լանավորների մարմնով: Դա՞ առաջին պահ: Երբ ձեռքները
դրեցին երկաթե դռան արանքում և սկսեցին սեղմել եկավ
մի պահ, որ այլևս չեին գոռում:

Վաշիկի փորին շիկացած դանակով անպարկեշտ պատկեր
ներ են կարում:

Քաշում են շրջանի մեջտեղը, հանում են շորի վերջին
ծվենները:

— Սրան նայեք... Դիմադրում է:

— Ուժ կա մեջը... Տվե՛ք... Տվե՛ք...

Դիմադրություն:

Դանակը տաքացնում են:

— Հանիր լեզուդ, հա՛յ:

Երկաթե ձեռքեր օղակել ու աքցանել են կոռնի մարմինը:
— Լեզուդ...

Շիկացած երկաթը կպչում է լեզվին:

Լույսի այս շողը որտեղից ներս ընկավ: Հարված: Նրան
թվաց թե մի կոշտ բան մտավ փորը: Երկտակվեց: Բռնեց
լույսի շողից ու փակեց աշքերը:

— Տար ինձ, շող: Փրկիր մարդակերներից:

— Եկ ինձ հետ... Բռնիր ինձնից, պինդ, այդպես, ես հի-
մա կօղակեց քո մարմինը ու միասին կթոշենք այստեղ, ուր
վերքերդ գալլերը կլիզեն: ուր ուրուրները որովայնիդ մեջ լեր
դացած արյունը կկացեն, այնտեղ ցողը կբավի մարմնիդ՝
երանավետ հանգստություն բերելով:

— Գալիս եմ, շող: Գրկիր ինձ: Ուժ չունեմ քեզնից բռնելու:

— Թոփ'ր, թոփ'ր, խեղճ, թշվառ... Մի քիշ էլ, մի քիշ էլ ձգվիր, ու մենք կփաթաթվենք իրար ու լույսի արագությամբ կհասնենք մարդագետինը՝ կարմիր, կապույտ, նաև ըլնջագույն... Այստեղ չեն լինի մոռւթներն այդ գորշ, մարդիկ՝ պարանոցներով խստավիզ...

— Ինչ-որ բան ինձ քաշում է...

Մա, այդ դո՞ւ ես...

— Անգինս, թանկագինս: Մինումարս:

— Թող գնամ այստեղ, լույսն ինձ տանում է:

— Մա՛... թող ինձ...

— Ինչ տառապանքով մեծացրի քեզ, որդի՛ս:

— Հա, մամ, գիտեմ: Կարդացել եմ աշքերիդ մեջ:

— Տղա՛ս...

— Հիմա էլ ես դարձա տառապանքիդ պատճառը: Դա

ես ուզում ասել, մամ:

— Լեռն... Որդիս... Արդեն 35 տարեկան ես, բայց...

— Հա, մամ, գիտեմ, ուշացել եմ:

— Ինձ լսեցիր, որդիս:

— Հա, լսեցի, որ գամ, քո ընտրած աղջիկը կառնեմ:

— Բաց աշքերդ...

— Ոնց որ վառվող ծծումքի մեջ եմ, ցավում է... Ժանը է, մամ, ծանր է ...

— Մի ասա: Այդպիս մի ասա:

— Լույսը երանելի է: Թող, մամ, թող բռնեմ: Շող մի գընա առանց ինձ, աղաշում եմ: Ա՛հ, փախչում է...

* * *

Երջան են կազմել ժողճակատի զինվորները:

— Սպանեք, դահիճները: Սպանեք միանգամից պրծնեմ:

Վաշիկի ոտքերը ծոմովել ու կանգնել շի կարողանում, փլվում է: Լեռն ընկած տեղից ձեռքը մեկնեց դանակին: Մի հարված և տանջանքները կվերջանան:

Զինվորական կոշիկի կրունկը կոպիտ իջավ դաստակին ու մեխեց: Լեռնը ճակատը զարկեց հատակին:

— Սպանե՞ք: — Ունաց անմարդկալին:

— Բարձրացրեք դրան: — Հրամայեց մայորի աստիճանով թուրքը:

— Առ: Դու՛ ինքդ:

Աւոնի աշքերը փայլեցին: Վրա պրծավ իրեն մեկնած ավտոմատին: Պահեց կրծքին, ձեռքը դրեց ձգանին ու փակեց աշքերը:

Հոհուց բարձրացավ: Փամփուշտները հանված էին:

ՄԵԶԲԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

Լեռնային Պարարադի բնակիչներ.

Նրորդ տարին է, ինչ եղացրական պատերազմի սկանդալը չեն հնասնում Պարարադի լեռներից: Աղրբեշանում այս դեպքերին վաղուց տրված են արժանի զնամնութական Բայց բավական են խորքեր, երկկողմ համեմատություններ և խոտումներ: Խարկավոր են ունալ գործեր, փոխադարձ գործնական քայլեր, համատեղ աշխատանքներ, հանուն մեր երեխաների կաների և երշանկության:

«Պարարադյան շարժման» առաջնորդները և նրանց մեջած ավանդության կոչ են անում չեզ «մինչև վերջ» շարունակել պայքարը...

Արդյոք բավական չէ՝ բափիմած արյունը: Այդ անմիտ արյունահեղությունը կարող է դադարեցնել միայն բարությունը: Մենք կամ մեր այս ընդհանուր հողում կգտնենք ընդհանուր լոգու, կամ ստիպված կիմներ օգտագործել Աղրբեշանական համբաւառության օրենքի ուժը: Անկան երանց համբաւական դիրքից և նախկին ծառայություններից, մենք պատասխանատվության կանթարկենք բոլոր երանց, ովքեր հակված են շարունակել ազգամիջան երկպառակությունը: Խմ կողմից համբաւառության ՆԳՆ-ը և համբավառության ԼՀԻՄ-ի Կազմկոմիտեին տրված են հանձնարարականներ մաքրել մարզը զինադյաներից:

Բայց ես, որպես պրեզիդենտ, հակված եմ հարցի խաղաղ, բաղարական մեթոդներով լուծմանը: Դրանով ինձ կօգնի ամբողջ աղրբեշանական ժողովուրդը: Հասկ է ընտրության ժամը: Հարկավոր է վերջ տալ ազգային անշատութականությանը և թշնամությանը: Հապաղման լուրաքանչյուր բուգեն բազմացնում է մեր ցավի վիշտը: Թող անհճվեն երանք, ովքեր դա քերում են մեր օշախները:

Աղրբեշանական ԽՍՀ պրեզիդենտ՝ Ա. ՄՈՒԹԱԼԻՔՈՎ

Հունիսի 24, 1990 թ.

* * *

— Զեզ վեշքեց: Զեր տղան կենդանի լինի՝ կփոխեք: Զէ՝ արյունը աստծուն նվեր: — Պարիբը այս խոսքերով գերիներին հանձնեց Ծովշանին:

Թուրքի տանը՝ դռնից ներս կանգնել են ծվատված, խաշվածի նման: Թուրքի կինը, որ մյուս սենյակի դուռը բացել ու մտել էր, ուշաթափվեց:

* * *

Ցերեկը աշխատեցնում են, գիշերը փակում գետնահարաւում: Գիշերը դժուան մոտ կանացի փափուկ ոտնաձայներ են լսվում, և Ֆաթման՝ ջահել հարսր ուտելիք է զնում և արագ ու անշշուկ անհետանում: Հետո մի օր սովորականի պես բացեց՝ մի թաշկինակ ու երկու զույգ գուզաղ դրեց: Տղամարդիկ իրար նայեցին ու կնոշը նայեցին: Դրսից ձայն լսվեց: Երեքն էլ ցնցվեցին: բուի կոխնչ էր: Լևոնը ժպտաց կնոշը, ձեռքը մեկնեց ու վերցրեց թաշկինակը: Կինը ժպտաց կառնին ու փություն հեռացավ:

Գերության երկրորդ տարմա վերջին շաբաթներն են գործում:

* * *

Անտառից դուրս եկան, և Կուբաթլուն մնաց ետևում: Մարդագետնի կանաչն ու երկնի լազուրը օգոստոսյան շոգի մեջ իրար խառնվեցին ու սկսեցին պտույտ տալ՝ սկզբում գանդաղ, ապա հողմի նման, և գույներն արդեն շեն ջոկվում: Լևոնը հայացքը կենտրոնացրեց դաշտի եզրագծում տիրական մխրճված քարափի վրա, որ կանգնեցնի պառատահողմը, ապա ձեռքը տարավ դեպի օծիքը և խոր շունչ քաշեց. կրծեղձուկը բաց թողեց: Գերիներին շատ քիչ տարածություն է բաժանում իրն ձորեսկից: Սա՞ է ազատությունը: Բայց ինքը ոչինչ չի ըզգում ոչ ուրախություն, ոչ տիբրություն: Հոգում և մարմնում մի թալկություն կա, որին թվում է՝ հատնում չի լինելու: Համատարած լուսության մեջ, ավտոմատի կրակահերթեր ճարճատեցին, քարափի վրայից տղաները նկատել են դեպի իրենց շարժվող խումբը և որպես հրճվանքի արտահայտություն՝ կրակում են օդում:

— Զերոնք են: — Խումբը կանգնեց՝ այսինքն՝ կարող եք առաջ գնալ:

Գերիները քայլում են անհաստատ, երերուն ու շեն ըզգում ոտքի տակի հողմը: Դիմավորող ամրոխի մեջ ոչ մի ծանոթ դեմք չկա: Մի՞թե ազատ են և ազատությունը սա է: Լևոնը բերանի մեջ լեզվի վրա հանկարծ տտիպ, գաղջ, դառը համ զգաց ու քիչն այրվող մսահու կպավ, որից մթագնեց գիտակցությունը. խարա՞նը...

Ամեն ինչ նորանով եղավ, եւ առանց
նորան ոչինչ չեղավ:

Աղմուկի վրա շնահաշոցն ուժեղացավ: Թուլաների ու
քնծուոտ կատուների հետ խառը՝ թուրք լակոտները շրջապա-
տեցին անծանոթ մեքենան: Փոփոան կիսաշրջագգեստով մի
շահել հարսի ստվեր արագ անցավ ֆերմայից դեպի վարչա-
կան սենյակը, և վարիչը դանդաղ ու ծանրաքայլ մոտեցավ
եկածներին.

—Հը՞, ի՞նչ կա:

—Ի՞նչ սիրտդ ուզի... —Երկիմաստ ասաց դաշուշենցի

Սամվելը: —Մրանք էլ մեր լավ տղաներից են:

Վարիչը սեղմեց երկու անծանոթի ձեռքը:

Ծանր արկդերն իշեցրին մեքենայից: Թուրք չոբանը, որ
ճկուել էր շալակի տակ, դժգոհ քրթմնչաց.

—Էս արձի՞՞ն են լցրել մեջը...

—Գնա, գնա, նման մի բան է:

—Ի՞նչ մարդ ես, շաղատվեցիր էլի սրանցից, — խոժոռ-
վեց կամոն: —Որ շրջապատած տեսնում եմ, աշքիս մի տե-
սակ ես երևում:

—Իմ մարդիկ են, ախառոր տղա, մի անհանգստանա: —
Տղամարդու աշքերի մեջ ծպիտ շողաց՝ ուժեղ, առնական,
ինքնավտահ:

—Դո՞ւ գիտես: Բայց որ ընկար...

—Լա՞վ: Ի՞նչ կա էստեղ: —Վարիչը ձեռքը արկդին մեկնեց:
Կամոն կասկածանքով նայեց կանանց:

—Բացեք արկդը՝ հենց նրանց ներկայությամբ:

Հրճվանքից աշքերը լայնացան:

—Հը՞՝ հիմա ո՞նց է:

—Գոհ եմ:

—Բայց սա՝ հետագայի համար: —Զեր ունեցած մանր-
մունքը օգտագործում էք, սա՝ հետո, երբ հրաման լինի:

Յուրան ձեռքերը քսում է գնդացրին:

—Ա՛յ սա բան է, ա՛յ սա ուրիշ է: Թե չէ սուտուփուտ ինչ
կա՝ սաղացնում եք զլիխիս: —Նա ակնարկում էր կիսափշա-
ցած որսորդական հրացանը և գերմանական «Շմայսեր» ինք-
նածիդը, որ դժվարությամբ էր օգտագործվում:

Կիսաբաց գոնից մի շիկամազ զլուխ խոթվեց: Յուրայի
հայացքն ընկապ տղայի շիլ աշքերին: Գլուխն անհետացավ:

— Ո՞վ էր, հորեղբայր, — դժգո՞նց Կամոն։
— Խասայի տղան է, արձակուրդ է եկել, — ասաց Հայաթը։
Վարիչն անտարբեր ձեռքը թափ տվեց։
— Էստեղ տերը ես եմ։ Են մեկը բացիր, տեսնենք ինչ կա։
— Տես, հորեղբայր, լքաշվես։ — Կամոն սեղանի վրա
դարսում էր փամփուշտները, նոնակները, պայթուցիկ նյութի
սոպրակները։

Մի քանի օր Հետո շրջակա գյուղերի թուրք բնակչության
մեջ պտտվում էր լուրը։ «Հայերը նոր զենք են բերել, մի
վայրկյանում Ֆիզովին կղնջի»։

...Վարիչը շրջում է տարածքում։ Միակ հայ հովիվը՝ Եղի-
շը թան առաջարկեց։ Խնեց ու մոտեցավ մի ուրիշ դռան։ Ա-
ռաջ անցավ։ Զերքը մեկնեց շթե վարագուրին, բայց շհասց-
րեց ետ քաշել, երբ դավադիր ճոռոցով մի դուռ բացվեց կող-
քին, և կինը, որ նորածին հորթերի համար ջուր էր տանում,
հանկարծակի եկավ։

— Դո՞ւ ես։

— Ինչպես տեսնում ես, Հայաթ։
— Քեզ չունես ոնց որ։
— Հարևան ֆերմայի կովերը քշել են։
— Ալաջանցիների ձեռքի գործը կլինի։
— Պարզ է։ Թուրքացած հայեր են։ Դրանց տեսակն ավելի
վատ է. ճարպիկ գողեր են։
— Մեր հարցը էղպես էլ.. Ի՞նչ պիտի անենք... Վախենում
եմ։

— Ո՞մից։ — Վարիչը կարծեց, թե տարեց թրքուհին նկա-
տի ուներ ծանոթ միջադեպը.

Գյուղից մի քանի տարարյուն ջահելներ իշել էին ֆերմա։
— Թուրքերին պիտի քշես։
— Ես զիտեմ իմ գործը։
— Դավաճան։

— Զորսհարյուր գլուխ անասունը ո՞վ է պահելու, դո՞ւք։
— Փորձեց համոզել նրանց, տեսավ՝ չի ստացվում, անցավ
տղամարդկային խոսակցության։

— Գնա քո կնիկը պահիր, որ ոտքը դուրս Աինի, Հետո
ուրիշներին խելք սովորեցրու։ Ազգի մասին մտածողներ...
Տղաները կատաղած թողել-հեռացել էին։

— Մերոնցից ես վախենում, — հարցը կրկնեց Յուրան։
— Զէ։ Մերոնք են մարդ ուղարկել, էլի ա՞ն են տալիս, որ
եթե լթողնենք հեռանանք...
— Ես պահանջում եմ այս գործությունը։

— Մի վախենաւ:
— Բա որ գա՞նւ
— Ետ կտամ:
— Շատ հն:
— Եատը հաշիվ լի:
— Որ հազարով գա՞ն:
Յուրան լոկց:
Յաղիգարի գույնզգույն հագուստը ծածանվեց չթե ծաղ-
կավոր վարագույրի ետևում, ու երկար սև հյուսքի ստվերը
մնաց վարիչի հայացքում:
Հայաթը անպատասխան ետ քաշվեց:

* * *

— Նուրուշը հոտոտում է հանդերը: — Ֆերմայի պահակ
Արիֆը ծնոտը հենեց մահակին ու իրար հասկացան. Թուրքը
«Հեռախուզության» է գալիս: Ուրեմն էդ կողմերն էլ կարշա-
վեն: Վարիչը ձի հեծավ ու մի քանի օր շրջում էր, մինչև ան-
տառի խորքում դուրս եկան դեմհանդիման:
— Ասա, լեզվիդ տակ բան կա:
— Մեկ միլիոն... եթե թողնես հեռանաս:
— Էդքա՞ն բան:
— Զէ: Էլի կա:
— Ասա, նուրուշ, շուր մի ծհծիր, գործի մարդ հմ:
— Եթե մասլահաթով շհամաձայնես, մեկ է...
— Գնա ասա՝ ձեր իմացածներից չեմ, ու ամեն մարդու
կնկա լէ, որ ման են տալիս:
— Ուրիշ բան էլ կա:
— Հը՛:
— Գալու են՝ տավարը քշեն:
— Արի, նուրուշ: Բան շեմ ասում: — Յուրայի ձայնը
սպառնալից շեշտեր ընդունեց:
— Ես՝ չէ, որիշները կգան:
— Պատրաստ եմ՝ ուրիշների համար էլ, քեզ համար էլ,
Զին դոփում, ծառս էր լինում: Վարիչը սանձերը պինդ
քաշեց ու շրջվեց.
— Զեռք քաշեք էս ձորից:
Ու ձին վարգեց:

Նովրուզ բայրամի օրերն են: Դադար շունի: Մտավ սենցակ ու շուրերով պառկեց մահճակալին՝ աշք կպցնելու Սանր մղձավանջային նիրճի մեջ էր, երբ կանանց աղաղակը թընդաց.

— Տարա՞ն: Տարա՞ն:

Վեր բուավ: Թուրք պահակը կապկպված ու բերանը լաթ կոխած ընկած էր տեղը, Հարյուր կովի կապ արձակված էր: Բարձրացավ տանիքը: Մթության մեջ շարժվում էին ինչ-որ ստվերներ, ու դժվար էր զոկել՝ մա՞րդ է, թի անասուն: Ավտոմատի կրահահերթերը շամփուրեցին օդը:

— Նոնակները: — Գոռաց:

Թուրք կանայք շարվել, փոխանցում էին նոնակները: Երկուար, երեքը... Գոռոց լսվեց: Չորրորդ նոնակը... Խումբը փախավ:

Վեր կացավ, մոտեցավ պատուհանին: Վաղորդացնի սառը օդը խփեց գեմքին: Ներսում ինչ-որ անհանգիստ զգացողություն կար: Կարծես ինչ-որ բանի էր սպասում: Նայեց գուրս. բարձունքում, թփի տակ, կանալ անհովար զինվորական զըլիարկ նկատեց: Հայացքը պտտվեց լանջով գեպի անտառ ու նորից կենտրոնացավ: Այո, զինվորական զիմարկ է՝ մութուլույսի մեջ հազիվ նշմարվող: Ուշագիր զննեց դաշտը: Խոտերի մեջ նկատեց ավտոմատի ցցված ծալրը:

— Են բաները... թաքցրեք: Արա՞գ ինչքան հնարավոր է: — Կամացուկ ձայնից Հայաթին ու Յաղիգարին: Իսկ ինքը մոտեցավ պատուհանին. աղջամուղի միջից զրահամեթեհենայի սառը, պղղապատափառ ուրվականը մարեց տղայական ողևորտյունը: Կարուկ շրջվեց և միջանցում՝ իր վրա ուղղված ավտոմատներից՝ վայրկենապես անվրդով տեսք ընդունեց: Ծրբունքներին խաղացրեց ժայիտք՝ ծաղրալից, առնական:

— Անձնագրային ուժիմի ստուգում է: — Հայտարարեց ուրեմն փոխգնդապիետը:

Թուրք սպան գնաց գեպի ելարանը, որ ձեղնահարկ էր տանում: Ցուրան շտեսնելուն տվեց: Երկու, երեք աստիճան բարձրացավ՝ մինչև կարողանա տեսնել ներսը: Հետո կարծես շուգենալով սկսեց իշնել: Վարիչն աշքերը ցած խոնարհեց,

որ ոչ ոք չնկատի իր ժպիտը։
Ճենք շկար։ Իսկ կթորուէիների տան անկյունում՝ մահ-
ճակալի տակ աննկատ մնացին լվացքի փոշու տուփերը, ու-
րոնց մեջ կանայք լցրել էին պայթուցիկ նյութերը։

Մի զինվորական մոտեցավ ձեռքը խոթեց Յուրայի բաճ-
կոնի գրպանը ու հանեց՝ ափի մեջ փամփուշտներ։ Յաղիգա-
րը ճգաց ու կախվեց օձիքից։

—Դու դրեցիր։ Դո՞ւ...

—Քա՛ծ Բոզ...

Բուրք սպան մազերից քաշեց ու շպրտեց աղջկան։ Ռասի-
ման լացելով վազեց ու գրկեց քրոջը։

—Ամոթ։ Ամոթ ձեզ։ Զհամարձակվեք...—Ծղրտաց Հայա-
թը և ձեռքերը թափահարելով այս ու այն կողմ էր վազվզում։

Յաղիգարը վեր կացավ ու վազեց։ Ռասիման ետևից։
Աղջիկները լաց են լինում, ու ֆերմայի վարիւը, արդեն մե-
քենայից, առանց նայելու տեսավ աղջկա հյուսքերի ծածան-
վող ստվերը...

Մայիսի 15-ն էր։ 1991 թվական։

* * *

Շուշի։

5 ժամ «մշակելուց» հետո նորից տանում են Հարցա-
քննության։

—Գրոհայինների անուններն ասա։

—Յաղիգարը, Հայաթը, Ռասիման, Արիֆը...

—Էս ո՞ւմ է ձեռ առնում։ Մի դեսը տվեք, ես խոսցնե-
լու ձեզ զիտեմ։ —Քննիլի ձեռքից ոստիկանը խլեց կալանա-
վորին։

Մե՛կ ժամ։ Երկո՛ւ ժամ։

Կանգնեցրին՝ ձեռքերը վեր պարզած, ոտքերը՝ լուսած։

Ձեռքերը թուլանում են, մարմինը ծովում է։ Դագանակով
խփում են աճուկներին։ Քրտինքը ջրի նման ծորում է։

Երե՛ք ժամ։ Զո՞րս ժամ։ Հարվածներ՝ աճուկներին։ Դա-
գանակի հարված՝ գլխին։ Փլվեց հատակին՝ անձայն, ան-
մոռնչ։

—Դե հիմա տարեք քննիլի մոտ։ —Հոգնած փնչացրեց
ոստիկանը։

—Ո՞ւմ հետ էիր մեքենայում։

—Ի՞նչ մեքենա։

— էն, որ մայիսի 2-ին կանգնեց ֆերմայի առաջ և առաջինը դու իշար:

— Ճանապարհին տեսան, վերցրին:

— Զե՞ս ճանաշում:

— Պատահական մարդիկ էին:

— Պատահական մարդիկ ի՞նչ գործ ունեին քո սենյակում:

— Կարգ է, տարա հյուրասիրեցի:

— Զե՞նք ունեի՞ն:

— Հա: Ավտոմատ էր: Մեքենայի մեջ տեսաւ:

— Ուրիշ էլ ի՞նչ:

— Էլ ոչ մի բան:

— Ուրեմն, հրաժարվո՞ւմ ես նրանց ճանաշելուց: — Դապանակի հարված: — Ո՞վ է ճանապարհին դեղատուփը զրել: Քննիլը փորձաքննության լուսանկարները դրեց սեղանին:

Տղաները ճամփեղրին գեղատուփ էին դրել: Տող զնացող թուրքի մեքենան կանգնել էր: Լարված ականը պայթել էր ձեռքների մեջ և երկու հոգի սպանել: Բայց որտեղից սրանց այս մանրամասները հարցը շքրքրեց հոգու խաղաղությունը: Ձդուում էր միայն մի բանի՝ շտորանալ, շդուալ:

— Ով էր դրել: Կրկնում եմ: — Գոռաց քննիլը:

— Շատ չե՞նք երկար զբաղվում սրանով: Սրդեն 15 օր է...

Մետաղարի մի բանի հարված մեջքի երկարությամբ՝ գլխից մինչև ներբանները: Առաստաղը, պատերը օրորվեցին: Ընկալվ: Ոստիկանը զղվանքով վզակոթից բռնեց ու շպրտեց աթոռին:

— Ազգանո՞ւնդ:

Հասկացավ, փորձեց հիշել: Զհիշեց: Սենյակը նորից պտտվեց, ինքը օրորվեց, հետո պտույտներն արագացան: Ավելի՛ ու ավելի՛: Եվ այդ խելագար գալարումների հորձանքում փորձեց ձեռքը մեկնել դռան տեղ կախված շթե վարագույրի ծաղիկներին, բայց մի շեկ, հաստակունդ գլուխ խցկվեց իրենց արանքը, ու ինքը տեսավ թուղթ հովվի ուսանող տղայի շիլ աշքերը: Մատնիլը... Այդ նա էր...

* * *

Խցի դուռը բացեցին: Վեր կացավ ու կողքի ուժեղ ծակոցից երկտակվեց: Թվաց՝ թի շարդված կողոսկրը դուրս պըրծավ մաշկի տակից: Ոտքը սոթ տվեց ու հազիվ պահեց հա-

վասարակշռությունը։ Ատամներն իրար սեղմեց։ Պիտի իր
ոտքով հասնի քննասենյակ։

Մեկը մի քայլ առաջ եկավ։

— Յուրա... ախպեր... — Ու կարկամեց։ Ֆերմալի պահա-
կըն էր՝ Արփիք։

Իր Հովիվներն էին։

Քննիլ. — Գնդացիր ինչո՞ւ էիր պահում։

— Ինձ մոտ միայն ազգանշանային հրթիռներ կային։

— Ումի՞ց ես ստացել։

— Հրթի՞ոց։

— Ու։ Գնդացիրը։

— Զի եղել։

— Դա ոռամբ էլ է պահել։ Ես տեսել եմ, գիշերը շպրտել
է մեզ վրա։ — Ոգնորված գոռաց խմբից մեկը։

Զայն անծանոթ էր։

— Հիշո՞ւմ ես, երկուաը վիրավորվեցին։ — Թուրքն առաջ
եկավ։ Կալանավորը հանգիստ շունչ քաշեց։ Իր Հովիվներից
լէր։

...88-ին էր։ Հանդիպեց Վիգեն Գրիգորյանին ու զենք
խնդրեց։

— Հետարավոր չէ։ Եթե դաշնակ լինեիր...

— Կուսակցական հարցերով զբաղվելու ժամանակ չու-
նեմ։ Ավտոմատ տուր, սրանց հայսիցը զանք, հետո կմտա-
ծեմ։

— Ավտոմատն ինչ եմ անում, ձեր անունը ների է։ — Տո-
ղի ջոկատի պետք կատակի տվեց-անցավ։ Բայց նշմարու-
թյուն էր, որ Տողի, Սալահյարինի, Հողերի բուրմերը վախով
էին անցնում ձորակով, մեծքաղլարցիների անունը դեռ հնուց
հայտնի էր։

Այդ օրը կորավ ֆերմայի արշարը։ «Օհո՛, արշար որ
մարսեցին, վաղն էլ մեզ են տանելու», — մտածեց։ Պիշերը,
երբ մուրը վրա կոխեց, աննկատ մտավ Հողեր։ Մազցեց հե-
նասյունը և հայտնվեց երբորդ հարկի պատշճամբաւ։ Պուրք
բաց էր։ Մտավ ու պատին շոշափեց անշատիչը։

— Ո՞վ է։ — Քնարաբախ անկողնում հստեց Իրբանիմ
մուալիմը՝ ձորակի հայտնի գողը։

— Հանգիստ։ Առանց ձայնի։ — Լույսի տակ Իրբանիմի
ու կնոշ դիմաց կանգնած վարիչը ուսին ուղղեց հրացանը։

— Ես եմ: Ճանաշեցի՞ր:

— Ճանաշեցի: — Չայնը փոքր ժաշեց բուրքի:

— Դե որ ճանաշեցիր, Իրահիմ մուալիմ կամ՝ արջառու, կամ՝ մյուս անգամ շեմ արթացնելու, մնալու ես... բնած, — ձայնը խորհրդավոր ցածրացրեց Յուրան:

— Կարող է չորբան Զինզիզն է տարել, — կմկմաց բուրքը և վարիչը զզաց, որ բուրքը տեղի է տալիս:

— Մեկ շաբաթ ենց ժամանակ, պայմանավորվեցի՞նք:

Մարդը եկած «նանապարհով» շացավ մքության մեջ: Արջառը վերադարձին:

...Իրրահիմը առաջ եկավ ու երկաթաձողով խփեց կալանավորի ուսին: Չայն չհանեց: Դանդաղ լորեց: Թուրքը երկրորդ անգամ բարձրացրեց երկաթը: Արիֆը ետէից բռնեց: Իրրահիմը քաշեց: Արիֆը ավելի պինդ բռնեց: Ոստիկանը մոտեցավ, ճանկեց Արիֆի օձիքն ու քաշքելով տարավ գուրս: Խումբը հետևեց նրանց:

...Չեռքից ձեռք են տալիս բանտի հատուկ զոկատայինները:

Ոչ մի ձայն: Ոչ մի տնքոց:

— Լավ չես ծեծում: Մի տուր ինձ: — Աժդահա ոստիկանը բարձրացրեց ու թափով տվեց գետնին:

Պառկեց՝ անշարժ-անձայն: Ոստիկանը մազերից բռնեց, քաշեց ու գեմքը շրջեց իր կողմը: Երեխսա ժամանակ աշքերը շլելու ու ծիծաղեցնելու սովորություն ուներ: Շրջեց ակնակապիճները:

— Սա մեռած է, — թուրքը սարսափահար ետ քաշվեց: Կալանավորը տապ կացավ:

* * *

Բանտախուց թիվ 2:

Խցի գուար բացվելուն պես ոստիկանների դադանակները փնտրում են Առնոյին: Ցուրան աշխատում է առաջ ընկնել ու հարցածներն ընդունել իր վրա, բայց քաշում-շպրտում են մի կողմ: Այս անգամ Առնոյին մերկացրին ու ծեծելով տարան հարցանության: Ժամը 5-ին մոտ քարշ տալով բերին: Կիսամեռ էր:

Մի ծեր հսկիչ երեկոյան կողմ գլուխը ակնատից ներս խորթեց:

— Ո՞նց եք:

Ուշոք շպատասխանեց: Առնոն ուշագնաց ընկած էր: Գլուշ
իսր քաշվեց: Մի ժամկց մտավ, մի բաժակ թեյ ձեռքին: Բարձ-
րացրեց զլովսը: Գդալ-գդալ խմեցրեց: Առնոն բացեց աշքերը:
— Ճանաշո՞մ ես ինձ:

Կալանավորը բացասաբար օրորեց զլովսը:

— Հորդ հետ հին ժանոթներ ենք: Չեր տանը... Զե՞ս հի-

շում:

Կալանավորը պատասխանի փոխարեն հոգնած փակեց
աշքերը: Թուրքը բաժակի մեջ մնացածն էլ լցորեց բերանը:
— Բալա՛:

Առնոն նորից բացեց աշքերը:

— Մեղք ես, բալա, ինչ ուզում են՝ այն ասա, հոգիդ ա-
պատիր-պրծիր:

Կալանավորը անտարբեր փակեց աշքերը:

— Սրա մասին՝ ոլ մեկին ոլ մի խոսք, — թուրքը ցուց
տվեց բաժակին ու դուրս դնաց:

— Նա ինձ ամեն ինչ կխռուռովանի, բերեք ինձ մոտ: —
Պետի դիմաց կանգնեց բանտի հայտնի կրկնաճանցագործը:
Աբրասովը շմերժեց հույնին:

Առնոյին պատգարակի վրա դուրս տարան:

— Դու պիտի՝ ապրես: Պիտի՝ դիմանաս: — Սա հույնի
առաջին բառերն էին, երբ մի քանի օրվա խնամքից հետո
Առնոն կիսանստել, մշուշու հայացքով նայում էր նրան:

— Մինչև վերջին վայրկյանը պիտի դիմանաս:

— Վերջին վայրկյանը... — Հեղնեց:

— Դու պիտիս, որ քո գործը ծանր է:

— Վերջին վայրկյանը... շուտ է լինելու: Մի քիչ կամք

և...

— Հոդուդ մեղք մի վերցրու: — Հասկացավ հույնը:

— Մեռնելն ավելի լավ է:

— Զփորձես:

— Էլ ուժ չունեմ:

— Ամեն ինչ Աստծո ձեռքին է:

— Զեմ դիմանում:

— Դու զրուցո՞մ ես Աստծո հետ:

— Իմ Աստվածը... մնաց այնտեղ, լիռներում...

— Ժամանակը փոխվում է: Մեկ էլ՝ տեսար... Պետք չէ
հուսահատվել:

— Դու ինձ մեղադրո՞ւմ ես:

— Չիմ մեղադրում, բայց կարգին շեմ էլ հասկանում ձեզ:
Սրանք ուրիշ բան են խոսում, քո պատմածը ուրիշ է...

— Իմ պատմածն ի՞նչ... մի փշրանք է հայի պատմություն-
նից: Բայց իմ մասին ես քեզ ասացի այն, ինչ եղել է:

— Ես գիտեմ միայն՝ և պարտադրում եմ, որ դիմանաս,
Առնո:

— Ոչինչ շեմ հիշում: Ոչինչ չի մնացել իմ մեջ:

— Հիշեր: Ու կթեթևանաս: Հոգիդ էլ այդ վերջին վայրկ-
յանի մեղքից կթոթափվի: Լավ, հերիք է խոսենք: Պիտի էս
կարագը ուտես:

— Կուշտ եմ, թող...

— Չէ, պիտի ուտես:

— Թող, արգեն քայլում եմ:

— Մի փոքր հույս գոնե շունե՞ս: Քեզ մի շերտ լույս է
պիտք՝ բռնես ապրես:

— Կապրեմ:

— Քանի՞ օր է միասին ենք:

— Յոթերորդ օրն է, կիրակի: Ուղիդ մեկ շաբաթ:

— Եթե թողնեն մի շաբաթ էլ մնաս...

— Կթողնե՞ն որ... — Մուռ ժամաց:

— Այս մի շաբաթվա համար... — Առնոն ծամծմեց խռո-
քը, չգիտեր՝ ինչ բառերով հայտներ իր երախտագիտությունը:

— Ուժ հավաքիր, Առնո: Մեկ էլ տեսար՝ տարան:

Երկուսով լուռ ուտում էին:

Եվ հույնը թախծապահուախառն գորովանքով հայի հետ
կիսում էր Մեծ Գողի իր բաժինը:

* * *

Առնոն դեռ չէր հասցրել տեղավորվել խցում, տարան:

— Ահմե՞դ, վիզդ ոլորելու եմ, դնեմ ուտքերիս տակ, Ահ-
մե՞դ:

Հույնը քացով խփում է դռանը:

— Կկոտորեմ բոլորիդ... Առնո՞... Առնո՞... — Ունում է
Գողը: — Դիմացիր, Առնո, ես դրանց...

Տնքոցները մարում են ու միջանցքում դատարկ պարկի
պես փլվում է կալանավորը:

— Որտե՞ղ ենք մնացել, Յուրա:

— Այստեղ եմ: — Յուրան կարծեց, թե կալանավորը զա-
ռանցում է ու մոտ քաշվեց:

— Զէ, որտե՞ղ ենք մնացել, հիշեցրու ինձ: — Յուրան հաս-
կացավ, որ նա շարունակում է թիրատ պատմությունը:

— Դրա ժամանակը չէ: Հետո...

— Զէ, հիշեցրու, Յուրա:

— Նա ասաց՝ ես՝ էղմոն Դանտեսս, 14 տարի տանջլել
եմ իֆ ամրոցի զնդանում, 14 տարի արցունք եմ թափել,
կրկնել եմ վրեժի երդումս և ահա այն ի կատար եմ ածում:
Մերսեղեալ ծովնկ շոքեց Մոնտե Քրիստոյի առաջ:

Յուրայի ուսերը՝ մհծ-մհծ ցնցվեցին:

— Դու լսո՞ւմ ես ինձ: — Առնոն ընդհատեց խոսքը: — Հե-
տաքրքիր տեղ ենք հասել: ...Կոմսը բարձրացրեց կոռչը. «Մե-
նամարտը տեղի կունհնա, տիկին, բայց ձեր զավակի փոխա-
րեն կթափվի ի՞մ արյունը»:

— Եղ ի՞նչ է, դու լա՞ց ես լինում:

Յուրան ձայն շնանեց ու փորձեց արցունքները ներս քա-
շել, որ թափվում էին ընկերոց համար:

— Զէ, շեղավ: Դա սազո՞ւմ է քեզ:

Յուրան ցնցվում էր կոշտ, տղամարդկային հեկեկոցից ու
այլն իրեն չէր տիրապետում:

Ակնատը բացվեց:

— Դանիելյան Կամո:

Յուրան բարձրացավ ու մեխվեց տեղում: Հսկիչը կրկնեց
անոն-ազգանունը:

— Հայրանո՞ւնը: — Համարձակվեց հարցնել:

Կասկած շմնաց, բայց անտարբեր ձեւցավ ու ասաց.

— Ես շեմ:

Ակնատը փակվեց, Ուրեմն, Կամոն էլ է այստեղ: Իսկ ին-
քը հույս էր փայտիայում, որ եղբորորդին կհետաքրքրվի իր
գործով:

Որ ազգանունը տվել են, ուրեմն հանելու են միշանցը՝
մտածեց ու բարձրացավ մահճակալը՝ նայելու դուրս: Զու-
գարանի պատին նեղիկ հեղք կար: Շեղ նայեց: Երկու վայրկ-

յանի շափ կալանավորը մնաց տեսադաշտում։ Զեռքերը ծոծ-
րակին, զլուխը կախ՝ նա է, կամոն, իշավ ու հուսահատ նըս-
տեց։

— Ո՞վ էր; — Առնոն մոտ քաշվեց։

— Կամոն։

— Որտեղից ես ճանաչում։

— Եղբորս տղան է։ — Յուրան շշնչաց ականջին, որ խցում
Ասեն։ — Իսկ դո՞ւ։ Քեզ ծանո՞թ է։

— Միասին կռվել ենք։ Մեր քաջ տղաներից է։ — Էլ ավե-
լի ցածրաձայն ու խորհրդավոր՝ Առնոն վստահեց Յուրային։

* * *

Առնոյին տարան։ Հարցաքննությունը տևեց շատ կարճ։

— Մենք նայել ենք ձեր զիրքերը։ Դուք կարող էիք կռվել։
Ինչո՞ւ չեք դիմադրել։ — Ռուս գնդապետն էր հարցնողը։

Առնոն ժպտաց քթի տակ, փորձում են՝ ի՞նքն է զեկավա-
րը, թե՝ չէ։ Բայց նրանց հայտնի է։ Ուրեմն...

— Սա հարցաքննությո՞ւն է։

— Ու։ Ջուս մասնագիտական հետաքրքրասիրություն։ —
Պատասխանեց մյուսը։

— Հրաման չի եղել։ — Փոխադարձ անկեղծությամբ ասաց
Առնոն։ — Բավարարվա՞ծ եք։

— Այո։ Ամեն ինչ պարզ է։

Գնդապետները բազմանշանակ ու հարգալից նայեցին կա-
լանավորին։

* * *

Վրաններ են բարձում։ Հրամայված է հաշվել։ Յուրան
հաշվում է մինչև 25-ը ու շփոթում թիվը։ Ուղեղը չի մտա-
պահում։

— Ինչքա՞ն եղավ։ — Հսկիլը ստուգում է։ — Հայվան, հաշ-
վել չգիտե՞ս։

Սեծում են։

Բերում են մի կալանավորի՝ ձեռքերը շղթայակապ, ար-
նաշաղախ ու ջարդված։ Յուրան բարձրացրեց զլուխը։ Կա-
լանավորը նայեց նրան։ Անձակաշելիորեն խեղված, բայց
Յուրան ճանաշեց Բարայան Սամվելին (հետագայում Արցա-
խի ՊԲ հրամանատար, գեներալ-մայոր)։ Կամոյի ու Արա-

բատի հետ է տեսել, Հաղբութում, Ստեփանակերտում։ Աւրեմբն, Սամվելն էլ է այստեղ, Դրսում ի՞նչ է կատարվում։

* * *

Շուկելլան։

Աշխատում են։

Միջօրեի ժամ է։

Թուրք հսկիլը մոտեցավ և իշամեղուն խոթեց Հեյքաթյան էդիկի ականջը։ Էդիկը գոռալով վեր ցատկեց։ Հոհոց ընկավ։ — Մեկն էլ սրա համար բերեք։

Ցուրան կանգնել էր անտարբեր։ Հսկիլը իշամեղուն խոթեց քիթը։ Կալանավորը կանգնել ու անթարթ նայում էր թուրքին։ Զեռքը հանդարտ տարավ, մեղուն բռնեց ու շպրտեց գետնին։

— Ուրիշը բերեք։

Հսկիլները վազվզում են տարածքում, Կրկնում են փորձը։ Ոչ մի շարժում։

Երրորդը, շորորորդը...

— Չե՞ն խայթում։ — Կապիտանը մոտեցավ Ցուրային։

— Չե՞ն խայթում։ Չեմ զգում։

— Ուրիշի վրա փորձեք։ — Հրամայեց։

Մոտեցան Արթուրին։ Սա հենց առաջին վայրկյանին ցնցվեց ու վայ արեց։ Հսկիլները մոտեցան ու զննեցին խայթոցի կարմրած տեղը։ Քիչ անց կալանավորի ձեռքն ուղել էր։

— Մեկն էլ...

Ցուրան խայթոցներն ընդունում էր նույն անտարբերությամբ։

— Սա մարդ չի։

— Չե՞ք տեսնում, որ սա մարդ չի։ — Կալանավորներին քշում են խցերը։

— Լսիր, չե՞ն խայթում։ — Հարցրեց Մանվելը, հենց որ դուրը փակվեց։

— 17 տարի մեղվաբույծ եմ աշխատել, — Ցուրան բացեց գաղտնիքը, ու խցում զսպված ծիծաղ բարձրացավ։

* * *

— Պիտի հանես, տաս բաճկոնդ։ — Բաճկոնը լկտի տնտղելուց հետո պահանջեց հսկիլը։

— Զեմ տա: — Անվրդով ասաց Սլավիկը:
— Փողով եմ ասում: ՀՕ ուրբի: — Զիշեց թուրքը:
Սլավիկը թոթվեց ուսերը՝ իբր՝ հեշ:
— Էժա՞ն է: Վեց տուփի ծխախոտ էլ...
Թուրքը սակարկում էր, և բոլորը զարմացած էին Սլավիկի
համառության և հսկիչի մեղմ վերաբերմունքի վրա:
— Պարզապես չեմ տալիս:
— Ի՞նչ: — Թուրքը գույն տվեց՝ գույն առավ:
— Իմն է չեմ տալիս: — Կոշտ պատասխանեց Սլավիկը:
— Առաջ: Առաջ ընկիր: — Հրամայեց հսկիչը:
...Երկու ժամ հետո բերեցին՝ առանց բաճկոնի ու կոշիկ-
ների:
— Տնաշեն, էշի նման կողդ գեմ էիր տվել: Մեկ է վերց-
նելու էին: — Յուրան շորը թրչել, մաքրում էր երեսի արյունը:
— Իմն է չեմ տվել:
— Հիմա ծխախոտ կունենալինք, դու էլ այդ վիճակում չէիր
լինի: — Տունդ չքանդվի... — Մանվելն էլի:
— Ճիշտ եմ արել՝ չեմ տվել: — Զզիշեց Սլավիկը: — Հո՞
չեն սպանել: Մուշտի են տվել, էլի:



— Տղերք, սոված եմ:
Ու ոք չարձագանքեց:
— Տղերք, ծեծին դիմանում եմ, էս անտեր քաղցին չեմ
դիմանում: — Յուրան հաշվում է ժամանակը: — Տասը ամիս
է: Տասը ամիս՝ սոված...
— Լսիր՝ բան եմ պատմում: Լատվիան որ անկախացավ...
— Առնո, քաղցը ինձ ոնց որ հաղթում է:
— Ուրքդ ինձ վրա պահպան տես ինչ եմ պատմում: Լատ-
վիայի անկախության առթիվ շնորհավորական հեռագիր ձևա-
կերպեցինք, տակն էլ զրեցինք՝ Բերդածորի անկախ Հանրա-
պետություն՝ ու ստորագրեցինք՝ Բիել-ի՝ Բերդածորի ինքնա-
պաշտպանության խորհրդի կողմից: Հետո գտանք, որ դա
այնքան էլ ճիշտ չի լինի, մի հեռագիր էլ ձևակերպեցինք՝ դա
էլ ստորագրեցինք՝ լեռնային Դարաբաղի Անկախ Հանրապե-
տություն: Պատասխան նամակներն էլ ստացանք: Ու ցնծում
էինք, որ իրար հասկացել ենք՝ մենք ու լատիշները: Գիտե՞ս,
Յուրա, ես երազել եմ ստեղծել Բերդածորի Անկախ Հանրա-
պետություն...

Յուրան նայում ու չի հասկանում՝ Առնո՞ն կատակում,
թէ՞ լուրջ է խոսում:

— Չե՞ս հավատում: Դա Հնարավոր է: Բացատրեմ...

— Որ Հնարավոր է, թագավորություն ստեղծիր, դու՝
թագավոր կլինես, ևս էլ սենեկապետ: Նստեմ՝ ուտեմ, կըշ-
տանամ...

— Դու կարդալ սիրո՞ւմ ես, Յուրա:

— Սիրում էի:

— Հեքիաթներ, պատմություններ... սիրո՞ւմ ես:

— Սիրում էի: — Նորից կոչտ ու անտարբեր կրկնեց Յու-
րան:

— Դե որ սիրում ես, լսիր:

— Ուսկորներս շեն դիմանում: Անց որ ծակծկված մազ...

— Վիշապի քար ենք ասում: Ես լուսանկարիլ եմ: Դա
կլինի մեր անկախության դիմանշանը: Եռագույնը՝ և ժայռը՝
անառիկ, Հավարա: Սազում է, գիտե՞ս: Այնտեղ Վիշապի քա-
րի գագաթ՝ ող-ոք բարձրացած չկա, Աշակերաններիս մի օր
վերցրի, գնացինք: Քանի ժամ պտղեցինք՝ չեինք կարողա-
նում մատչելի տեղ ճարել: Վերցապես գտանք: Մի տեղ՝
երկու բարածայք՝ ուղղաբերձ, դեմ-դիմաց ու արանքը՝ փոք-
րիկ ձոր՝ մոշուտ: Կածան սարքեցինք ու առաջ գնացինք:
Գտանք ելքը՝ քարի աստիճաններ էին: Այստեղով բարձրա-
նում էր Վիշապը: Բարձրացանք, բարձրացանք, մեկ էլ ժայռե
տափարակ, Հազիկ 5-6 մարդ կտեղավորվի, վերկից՝ քարե
կամար ու դիմացը՝ շբնաղ, շբնաղ պատկեր. բաց հորիզոն,
լեռները, անտառները մնում են ներքեսում, Հայացքիդ տակ,
ու սա Վիշապի տունն է:

— Հո շե՞ս քննել:

— Ի՞նչ ես ասում: — Տնքոցով կողքի ընկավ Յուրան:

— Երանից Շուշի եկադ առևտրական ճանապարհը ծունկ է
տախու ու հեռվից շրջանցում Տունը: Ասում են՝ Վիշապը
կով էր տալիս շեղված անցորդներին: Ասում են՝ Վիշապի
կուղիկ ու վախսկոտ եղբորը կաշառում են ու գավաղում:
Ու Վիշապը զայրացած շպրում է գավաղանը, ու դիմացի
սարի վրա տափարակ է գոյանում: Մենք բարձունքից տե-
սանք տափարակը: Հետո շիշը, մակարությամբ, թաղեցինք
այնտեղ:

— Ի՞նչ ես գրել: — Հարցրեց Յուրան քաղցը մոռացած:

— Գաղտնիք է, չեմ ասի: Երբ ինձ հյուր կգաք, կտանեմ
այնտեղ ու կհանենք շիշը:

— Առնո, քանի՞ տարեկան ես:

— Հիմա՞: Հիմա՝ հազար:

— Զէ, լուրջ եմ ասում:

— 40: Դա ինձ համար սահման կլինի: Բայց ես չեմ վա-
խենում: Միայն ափսոսում եմ, որ մեր անկախությունը չեմ
տեսնելու:

— Դու անհնարին բաներ ես երազում, մոռացած, թե ինչ
երկրում ես ապրում:

— Երբ դու՝ հիշում ես, թե որ բանտում ես գտնվում: Բաճ-
կոնդ ու կոշիկներդ... — Կատակի տվեց, մեկ էլ լրջացավ: —
Ես՝ գուցե՛ չէ, դուք տեսնելու եք Ղարաբաղի անկախությունը:

— Որտեղի՞ց այդ մտքերը քեզ:

— Գորիսից: Ուսանողական ցուցին ես տանում էի Եռա-
գույն դրոշը: Կալանքի վերցրին: Օրգանները դրանից հետո
ինձ հետամուտ էին: Բայց սա երկի վերջը կլինի... — Խոսքն
արդեն կցկուր էր. խցում շատերը քնել էին:

— Առնո:

— Հը՛:

— Առնո:

— Լավ, մոտ նստիր: Զրուցելու բռնել է:

— Առնո, ում վրա ես կասկածում: Ո՞վ է մատնել քեզ:

— Մեկը պիտի գտնվեր, կարեռ չէ: Ինձ տանջում է՞ ով
մատնեց զենքի պահեստի տեղը: — Երկար լոեցին: — Լսիր,
Յուրա: Սա՝ այստեղ՝ նույն կյանքն է, ինչ որ այնտեղ՝ դրսում:
Այստեղ էլ կարող ես ապրել ստոր, անպատիվ կամ գաղա-
փարներով... Դե, իմ հանդեպ միշտ ծայրահեղ են եղել:

— Որովհետեւ դու ուրիշ ես:

— Եայրահեղ եմ: Ինձ կամ սիրում են կամ ատում: Ան-
տարբեր վերաբերմունք չի լինում:

— Դու էլ նույն ես:

— Լսիր, որ այստեղից դուրս գաս, կգնաս մեր տուն:

— Դու էլ ես դուրս գալու:

— Դու ինձ մի ընդհատիր, դու լսիր՝ ինչ ասում եմ: Կգնաս
մեր տուն, կտեսնես խնձորի այգին: Ուրիշ բան է, հրաշք:
Հայրս մեզ ստիպել է հող կրել: Բերում էինք հեռու տեղից,

անտառից։ Հողը թափում էինք քարերի վրա սակարակ սար-քում ծառեր տնկում։ Բա զրե՞լը... Ոնց որ հողն ենք բերել, նույն ձևով էլ՝ ջուրը։ Հմամակարգով հիշում եմ, բայց այն ժամանակ քրտինքը ծորում էր, ոտքերս ծանր դույլի տակ ճկվում էին, հաշվում էի մետրերը, հասնեմ մինչեւ այն մացառը՝ հանգստանամ, հասնում էի՝ սահմանակետը հեռացնում մինչեւ այն բլուրը, մինչեւ այն քարը... Ինձ փորձում էի ինչքան կդիմանամ, եթե դույլը չդնեմ, չհանգստանամ։ Հետո քրտնաթթախ պառկում էի դաշտում, այդ հոտը, խոտի հոտը...։

— Լավ է, դու կողքիս ես, Առնո։

— Դու էլ՝ իմ, Յուրա։ Հա... պատմեմ լսիր։ Խոտ ասացի՝ հիշեցի։ Արտերից խոտ էի հարել, բարձել էշին։ Համագյուղացի մի մարդ կանգնեց գիտավերեւս։

— Կոլխոզինն է՝ պիտի հանձնես։ — Ասաց, բայց հասկացվ, որ չեմ տանելու, ոչ մի գնով, ինչ էլ անի։ Թե որտեղից՝ հայրս հայտնվեց։

— Սա խոտհարքի մեջ չի մտնում, լանջից եմ հարել։ — Արդարանում եմ հորս առաջ։

— Պիտի տանես։ — Հորս խոսքին հնազանդվում եմ։

— Դա՞ ինչի՞ պատմեցիր։

— Այդ մարդը ինձ ատում էր, Յուրա։

— Հիմա՞ էլ։

— Հիմա էլ։ — Առնոն ծածկոց-լաթի ծայրը քաշեց ընկերոջ վրա։ — Մի բան էլ պատմեմ։ Արտերին պահակ էի կանգնել և պարապում էի. ընդունելության քննություն պիտի տայի։ Մի ձի կար՝ կատաղի, շնեծած, շանձած։ Քեզ կտամ՝ հանդերը կպահես, եթե սանձես՝ ասաց մի բրիգադիր։ Կարող էի ջարդվել, բայց ես մտածում էի միայն՝ սանձելու մասին։ Հեծա սարուծորով թոշում եմ ոնց եմ թոշում... Քեզ լինի՝ ասաց։ Զին սովորեց ինձ։ Ես գիրք էի կարդում ձին հսկում էր արտերը։ Հենց այժ, ոչխար, կով էր մտնում, գնում հեռու էր քշում։ Դա հենց տեսավ, եկավ ու տարավ ձին։ Խելոք կենդանի էր։

— Ի՞նչ եք բշխում, բարձր ասեք՝ մենք էլ լսենք։ — Տընքաց էմիլը։

— Էդգան էներգիա որտեղից։ — Ասաց ու շարունակեց։ — Զախկալի միսն ի՞նչ համ ունի, գիտե՞ս, էմիլ։

— Որտեղից իմանամ; Եթե ինչ-որ տեղ կարդացել եմ,
Հիմա չեմ հիշում:

— Կերած չկա՞ս:

— Չէ:

— Միս ես ուղում մի կարգին բան ասա. շախկալ հա
շախկալ. — Լեթեց Գագիկը:

— Եղբօրս՝ Արմոյի հետ որսի էինք զնացել; Ինչ-որ կեն-
դանի մաշկեց, կրակ վառեց, խորովեց: Ասաց՝ նապաստակի
միս է, կեր: Կերա պրծա, ասաց՝ Առնո, շախկալի միս ես
կերել: Համերը իրար շատ մոտ են, հիշում եմ, մենակ շախ-
կալինը մի քիչ ծանր ու թթված էր:

— Հիմա շախկալները կիպ մոտենում են գյուղին ու ոռ-
նում են, կաղկանձում են լայող երեխայի ձայնով... — Անուրջ-
ների մեջ ընկապ էմիլը:

— Յուրա, — Սլավիկը մոտ քաշվեց: — Երբ մի շաբաթ
առաջ ինձ տարան «մշակելու», ականջատակիս հարվածից
ուշագնաց փովեցի գետնին, մեկը ինձ բարձրացրեց.

— Հայ չե՞ս: Քեզ պինդ պահիր: — Ասաց: — Բարձրահասակ
էր: Ռւժեղ, շատ ուժեղ ձեռքեր ուներ: Ես դա զգացի, երբ
վկակոթիցս ճանկել ու ոտքի է կանգնեցրել: Արտահայտիլ,
սուր նայվածք ուներ: Հասկացա, որ հայ է, կալանավոր:
Բայց առաջին անգամն էի տեսնում: Բ՞ով է:

— Պատժախցի մշտական կալանավորը: Նապոլեոնը:
Սլավիկը հարցական նայեց:

— Դա նրա մականունն է: Խսկական՝ Արկադի Հայրիյան:
Մարտակերտի շրջանից է: Նրան շատ քշերն են տեսել: Հա-
տուկ վտանգավոր հանցագործի պիտակ ունի և մեկուսացած
են պահում: Հսկիչներից մեկը պատմել է, որ իրենք ծեծե-
լուց հոգնել են, բայց ոչինչ չի խոստովանել: Նա ուրիշ տե-
սակ մարդ է: Մենք նրա մոտ՝ ինչ...

— Որ ամիսն է: — Հարցրեց Արվիդը:

— Մարտը:

— Մի տարին լրանում է:

— Մի կտոր՝ թեկուղ շախկալի միս լիներ՝ ծամեխնք: —
Յուրան դեռ շեր մոռացել Առնոյի պատմածը և դա ասաց սո-
վածի այնպիսի անձկությամբ, որ յուրաքանչյուրի ուշադրու-
թյունը դարձավ իր պատարկ ստամոքսին:

Խցում լուրջուն իջավ... մինչև առավոտ,

— Բերդաձորցիներ՝ հարցաքննության: — Վերջին անգամ հսկիչը կանգնեց շեմին:

Կալանավորները զդաստացան: Հերթով տանում են: Սանկտ պետերբուրգի դատապաշտպանները, որոնց «ոսկե հնգյակ» անունն են տվել, ժանովանում են գործին:

— Բռնացել են մեր կամքի վրա՝ ստորագրել ենք: — Առնյին ետ բերեցին:

— Ծեծել են, ստիպել են, ստորագրել ենք: — Իրենց ասածներից հրաժարվեցին Արվիդը, Հրաչիկը, Գագիկը, Արթուր և Հերթով խոյց բերվեցին:

Մեկ ժամ հետո եկան մերկացրին ու հանեցին միջանցք:

— Առնո, լավ լսիր, — ոռնում էր Մուստաչափ հսկիչը, — Եթե անգամ օրինքը քեզ ազատի էլ, իմ ձեռքից շես պոժնի, ծեծելով սպանելու եմ: Որ ասե՞ն՝ ազատ իս՝ Հավատասս, ետևիցդ կրակելու եմ՝ սպանեմ:

1992 թվական: Հոկտեմբեր: Աղդամ: Ոստիկանական մեկուսարան:

— Զերոնցից մեկը՝ անունը՝ Արթուր, իրեն այս խցում կախել է: Դուք էլ եք կախվելու: — Դուքը բացվեց-փակվեց:

Յուրան լարեց տեսողությունը՝ ճանաչելու ներս գցածին: Զկարողացավ. աշքերը արյունով լցված էին ու ինչ-որ փառ էր կապված: Մշուշի միջից ինչ-որ մեկի ուրվագիծը տեղավորվեց անկյունում:

— Ո՞վ իս: — Առաջինը խոսեց Յուրան:

— Հայ իմ: — Պատասխանը հնչեց վեհերոտ:

Գուցե ինչ-որ թակարդ է՝ կասկածեց Յուրան ու զգուշութեն առաջ տարավ խոսակցությունը:

— Որտեղից:

— Քաղաքից: Իսկ դո՞ւ:

— Ես՝ նույնպես: Երբվանից: Ինչպե՞ս...

— 91-ի ապրիլից: Այստեղ՝ 20 օր է: Բերել են դատելու:

Գուցե իրենց տղաներից է՝ մատածեց:

Հեյքաթյան էգիկը թվարկեց անունները:

— Մերոնցից ես: — Յուրան հաղիկ այդքանը կարողացավ ամել ուժասպառ հևում էր:

Դուռը բացվեց ու հսկիչ Բարաթը մի կտոր հաց շպրտեց։
—Պիտի դու ուտես։ Քո վրա հալ չկա։ —Եղիկը մի փռշ-
րանք կծեց ու սկսեց ծամել, իսկ Յուրային ստիպեց ուտել
ամբողջը։ Պատառը կու էր տալիս, ծամել չէր կարողանում։
Հետո սկսեց դողալ։

—Յո՞ւրա։

Կայանավորը չի արձագանքում։

—Յո՞ւրա։ —Եղիկը կունում ու ստուգում է աշքերը։

Կալանավորի մշուշոտ գիտակցությունը մատների հպու-
մից թեթև հստակվում է։

—Աշքերդ մի տեսակ են, Յուրա։ —Եղիկի ձայնը դողու՞
է, ու Յուրան զգում է ընկերոց վախու։

—Կղիմանամ։ —Ատամները կափկափում են։ —Յուրտ է։
Մըսում եմ, բայց կղիմանամ։

Յուրան վերջին բառերի վրա կարծես իրեն հավաքեց,
սկսեց մեջքի տակից քարերը մի կողմ քաշել։

—Ի՞նչ հս անում։

—Փոս սարքենք, մտնենք՝ մի քիչ տաք կլինի։

Երբ քարերն արդեն շարվել էին կողքներին երկուսով
առակեցին փոսի մեջ, ու Հեյբաթյանը զգաց, որ իրեն կպած
մարմնի դողը կտրվեց ու հանգստացավ։ Գլուխը մոտեցրեց
կրծքին՝ ստուգելու շնչառությունը, ու սրտի թույլ զարկերը
լսելով, հանգստացավ։ Ու խցում գերեզմանային լուսթյուն
իջավ։

* * *

Ութ անգամ դագանակը շաշեց մեջքին։ Տեր Աստված, պա-
հիր ինձ՝ մտքի մեջ կրկնում է Յուրան, որ չգոռա, որ ձայն
շնանի։ Շրջվում ու հիմա էլ խփում են Եղիկի մեջքին։

—Վա՞յ, մամա՞։ —Գոռզուաց։

—Լոիր, Գոնե միայն վայ ասա։

—Քավթա՛ռ։ Մրան տեսեք։ —Հսկիչները նորից շրջվում ու
մեկ ժամ հետո՝ Յուրան անմոռնլ, անձայն փոված էր բա-
կում։

Երեկոյան խցի ակնատը բացվեց։

—Էյ, — Յուրքի մի զլուխ կիսախցկվեց։ —Վերցրեք էն
տղամարդու համար են ուղարկել։

Թուրք հայտնի գողի ուղարկած մի կտոր միսն ու խաշած

ձուն Հեյքաթյանը գրեց Յուրայի առաջ, ինքը կերավ միայն
լոլիկի ու վարունգի կեսը:

Էդիկին տարան դատավարության: Ետ հկավ՝ արյունլվա,
շորս տեղից՝ դանակով խոցված:

Հազորդ օրը տարան Յուրային:

Քարեր թռան դեպի ցանցավանդակը: Մեղադրյալը կռա-
ցավ, ձեռքերով ծածկեց գուխը, որ պաշտպանի:

Ամբոխը գոմոացնում է:

— Ժողովուրդ, ամեն ինչ՝ կարգով, օրենքով: — Նախագա-
հողը թափահարում է ձեռքերը: Մի խանգարեք, այստեղ նըս-
տած են ժողովրդական ճակատի ներկայացուցիչները՝ Բա-
րակ, Կուրբանով, Կասիմով:

Ոտքի են կանգնում: Նորից քարեր թռան դեպի մեղադր-
յալը:

— Նրանց չե՞ք վստահում: — Դուքս նախագահողը:

— Ամենախիստ պատիժը: — Հնչեց դահլիճից:

— Ժողովուրդ, սրանց ինչ պատիժ էլ տանք, մեկ է՝ կեն-
դանի դուրս չեն գալու բանտից: — Հավաստիացրեց «դա-
տախազ» նորիկը, և նրա խոսքի վրա նախագահողը փըռթ-
կացրեց:

— Մաշալա: Դատախազը ճիշտ է:

Նախագահողը կարդաց դատավճիռը՝ շորս տարի՝ խիստ
ուժիմով:

— Բնկեր դատավոր, միանգամից սատկացնենք պըրծ-
նենք: — «Դատապաշտպանի» այս ելույթի վրա դահլիճի
հուզմունքը ալիք տվեց, իսկ նախագահողը նորից զսպեց ծի-
ծաղը:

— Այդպես էլ կլինի: Հարգելի դատապաշտպան Աքբարով:
— Կալանավորը նայեց նախագահողի դեմքին ու հասկացավ,
որ դատարանում միակ պրոֆեսիոնալը ինքն է, մյուսները
պատահական մարդիկ են ու դատ են խաղում:

Կալանավորին գուրս տարան:

Գազազած ձեռքեր կարկառվեցին դեպի բանտարկյալը:

— Ժողովուրդ, մնացածը, մնացածը՝ ինձ վրա: — Մտար-
շինա Բարաթը Յուրային խցկեց «սև ագուավի» մեջ:



Յուրան կանգնած է մերկ ու կապտած մարմինը էլ ավելի
է կապտել: Բարաթը շոր է լցնում և ցախավելով ծեծում:

Կալանավորի հագուստով մեկը փախած եկավ բայց Զեռ-
քին ինչ-որ թիթեղի տուփ էր:

—Տես, խոսում են: Իմ մասին են խոսում: Մո՞ւ...
Լսիր... —Տուփը դրեց ականջին:

Յուրան աշքերի անխմատ փայլից հասկացավ, որ այդ
նա է քարինտակիցի Վլադիկը, որի մասին էղիկն էր պատմել:

—Գնանք, ձերոնց հետ հեռակաղով պիտի խոսես: —Հա-
մոզում է հսկիչը:

—Յուրատ է: Զեմ կարող: —Փախչում է կալանավորը:

Երբ թևատակերից ամուր բռնեցին, կալանավորը դիվա-
յին բղավեց:

Յուրան սարսուաց... բայց ոչ նոյեմբերյան սառնաշունչ
օրվա ցրաից:

* * *

Պառկել են խցի փոս արած տեղում: Բանալին շրխկաց:

—Սպանելու են, Յուրա: —Սրթսրթաց Հեյքաթյանը:
—Մեր հերթն էլ է գալու: Կոտորելու ենք սրանց և ո՞նց
ենք կոտորելու... —Մոլտաց քթի տակ ու վեր կացավ:

Էղիկը լոեց:

Կալանավորներին տանում էին Շուվելյան:

...Ներս բոթեցին, ու դուռը փակվեց: Նստածները քարեն
առան: Խոկ շախմատ խաղացողները և «ցավողները» ուշա-
դրություն չդարձրին:

—Չիդ ալստեղ չեր: —Առանց գուփսը տախտակից կտրե-
լու զայրալից շպրտեց մեկը:

—Այստեղ էր: —Անփուլթ պատասխանեց մլուսը:

—Ինձ ինչ՝ տեղ ես զրել: Այստեղ չեր: —Առաջինն էլ
ավելի քարձրացրեց ձայնը:

—Այստեղ էր: —Նախկին անտարբերությամբ պատաս-
խանեց ու հանկարծ բռնկվեց: —Էլի՞ սկսեցիր: Մի անգամ
մարդավարի պարտվել կարո՞ղ ես, թե չէ:

—Լոռն: —Անկյունում նստածներից մեկը սաստող ձայ-
նով տիեց խաղացողներից մեկի անունը:

—Ե՞ս: Սա ո՞ւմ է ասում: Ե՞ս իմ պարտվողը: —Մեկ ըն-
կերների, մեկ կեռնի երեսին էր նայում տղան: Ու աշքերից
զայրույթի ու կատաղության կայծեր էին ցայտում: —Թագա-
վորի պաշտպանական դիրքերին ուշադիր նայիր՝ հետո խո-
սիր: Վերցին անգամն է, որ քեզ հետ խաղում եմ:

—Կիսաղաս: —Դարձլաւ անփույթ նետեց կմոնք:—Մինչև որ հարամություն լցցես՝ շես հանգստանում:—Ե՞ս եմ հարամը: —Վեր թռավ տղան:—Զի՞դ Զի՞դ այնտեղ չէր: —Տղան որպես վերջին խոսք ձեռովկ զարկնց շախմատի տախտակին: Ֆիզուրները ցաք ու ցրիվ եկան: «Յավողներն» արդեն հեռու քաշվել ու նստել էին քնատախտակին:—Հերթք եղավ: Զահլաներս գնաց: —Հաղթանդամ մեկը կանգնեց երկուսի մեջ:—Ծխախոսութ: —Առանց որևէ մեկին նայելու պահանջեց խաժ աշբերովը:—Չկա:—Ո՞նց թե՛ չկա: Խամբարում էր՝ այստեղ իշխում էր, նայեց վաշագանին:—Հենց այդպես: Չկա: Վերջինը երեկոյան հերթով լուծեցինք: Մոռացե՞լ ես:—Հիշեցնեիր մի բան կմտածեինք:—Ծախմատը թողնո՞ւմ է, որ մտածես: —Դժգոհեց վաշիկը:—Ինչքա՞ն փող ունենք: Տղաները թաքստածալքերից հանեցին:—30 ուրբի: —Հաշվեց վաշիկը:—Խայելով պիտի օգտագործենք, վերջին կոպեկներն են:—Ասաց մեծ քթով ու արծվի աշքերով տղան:—Սրանով վաղը ծխախոտ կհաջողացնեմ: —Փողը հաշուստի ծալքի աննկատելի խորքը հրեց խաժը:—Գուցե կե՞սը օգտագործենք:—Ամբողջը:—Իսկ հե՞տո ինչ ենք անելու:—Աստված մեծ է, կհասցնի: Ծխախոտի շուրջ խոսակցությունը հանգստացրեց կրքերը:—Բարեւ, ծերուկի: Խաժը մեկնեց ձեռքք: Մինչ այդ նորեկին կարծես թե ոչ-ոք չէր նկատել:—Նախ մարդավարի: Ոչ թե ես եմ ծերովկ, այլ դու ես...—Կաթնակեր բարը ծամծմեց ու շասաց, որովհետև մի տեսակ չէր համապատասխանում:—Ուղում էից լակո՞տ ասել:—Նման մի բան:—Չե՞ս վախենում:—Դաստակդ սեղմեմ՝ ոսկորներդ կըրթըրթան:

—Հետաքրքիր ծերուկ ես երևում: —Բարեհոգի ծիծաղեց
տղան:

Յուրան նոթուվեց:

—Նեղացա՞ր: Լավ, արի հաշովենք: Փորձում էի՝ տես-
նեմ ինչ մարդ ես: Քեզ ինչի համար են նստեցրել:

—Նույնի համար՝ ինչոր քեզ:

—Պահպահ: Շատ շեղա՞վ: —Բարեհոգի ծիծաղեց տղան:

—Շատն ու քիչը մենք շենք որոշում:

—Լավ: Մանոթանանք:

—Նորիկ Դանիելյան:

Մանոթանում է: Յուրան տնտղեց հիշողությունը: Հիշեց:
Ստեփանակերտից եկած տղաների խոսակցություններում այդ
անոնք հաճախ էր հոլովվում:

—Ճանաշեցի՞ր: —Տղայի ինքնազոհությունն արդեն մի
տեսակ հաճելի էր:

—Ճանաշեցի: —Ժպատաց Յուրան: Կարգին ապրում եք: —
Ասաց՝ նայելով շախմատին:

—Ապրում ենք: —Տղայի տոնը մեծամիտ էր, բայց ոչ վա-
նող: Իսկ աշքերի խաժությունը պայծառացավ, ու Յուրան
նկատեց տարիքին անհարիր, զարմանալի հասունություն:

—Մեռնելիս՝ մեռնում ենք, ապրելիս՝ ապրում: —Արտա-
սովոր ու առինքնող, իրեն ենթարկեցնող ուժ կար տղայի ար-
տաքինի, ձայնի, շարժուձեռի մեջ, ու նոր եկածն էլ իրենից
անկախ անվերապահ ենթարկվեց:

—Քանի՞ տարեկան ես:

—Նշանակություն չունի: —Տղան կարդաց նրա մտքերի
ու հույզերի ընթացքը, ու ժայիտը դարձավ խորամանկ ու
շարաձնի արտահայտություն:

Յուրան կապտուկների ու այտուցվածության մեջ անգամ
զգաց տղայի առնական գեղեցկությունը:

—23: Իսկ սրանք իմ տղաներն են: Մանոթացեք:

—Ալիկ:

—Արարատ:

—Մշեր:

—

Թիվ 46 խցում Քաջավանի 9 տղաներն էին:

* * *

Ստեփանը ներս մտավ ու ծոցից քաղցրաբլիթներ հանեց:
—Այսօրվա ավարը: —Ինքն իրենից գո՞յ ասաց:

— Միայն է՞դ: — Հարցրեց Վիկտորը:

— Սա՝ էլ, — Երկու տուփ ծխախոտ շալվարի փողքից հանց ու զրեց նստարանին: — Սա իրենք ավին՝ գործիս գիմաց: — Ստեփանը վարսավիր էր աշխատում սպայական կազմի համար: — Իսկ բլիթները թոցրել են: Տարել էին պահեստը մաքրելու հնչ ես դժողո՞ջդո՞ջ նայում: Դու զնա էսքան բեր, — վրա պրավ Վաշիկին:

Հետո նստեց կողքին:

— Մի մտածիր, քանի անգամ եմ ասել, դրսում ընկերներ կան, օգնելու են: — Վաշիկը ընկերոց հուսադրելուց էլ ավելի մտասուզվեց ու զուփը զրեց ծնկներին: Կինը վի աշխատում, և երեխանները փոքր են: Նրան իր մտքերից չկտրեց նաև շախմատ խաղացողների վեճը, որ վեր էլ ածվել լուրջ կռվի:

— Ես քեզ կսպանեմ: — Առողջ կարմրատակել ու հնում է:

— Դու՝ ի՞նձ: — Նորիկի աշքերը զայրուցից դուրս էին բռչում:

— Առողջ ձեռքը բարձրացրեց: Նորիկը բռնեց դաստակից ու արդեն կատաղած շնչում էին երես-երեսի:

— Ես՝ քո... — Առողջ հայցոյից:

Պատասխան ավելի խիստ հայցոյանքը տեղաց, ու Նորիկի ձեռքը ամուր ճանկեց շլինքից:

— Դե, երբիք եղավ: — Գոռաց Յուրան: — Մեկ էլ խաղացիք, վշշելու եմ էդ տախտակը:

Ոչ մի ազդեցություն:

— Մեկ խայտառա՞կ եք անելու: — Իրար ետեից վրա է տալիս Յուրան, պտտվում տաքացած երիտասարդների շուրջ:

— Եվ դո՞ւք եք մեծ գործի կոչվածները:

Գործի անունը լսելով Նորիկը անշարժացավ:

— Սրանց նայեք... Ձեր առջևում գիտե՞ք դեռ ինչեր կան... Յուրան երեք շաբաթվա մեջ զտել էր Նորիկի երակը մըտնելու ձևը: — Ամբարիշտներ: Հերոսներ:

— Նորիկը առաջնը թուլացավ, բաց թողեց ու հեռացավ:

— Ասում ես՝ մեծ գո՞րծ... — Նորիկի աշքերի քիչ առաջվարտահայտությունից նշույլ շէր մնացել:

— Հա՞՛ Մեծ գործ: — Կրկնեց Յուրան ու տեսնելով իր խոսքերի ազդեցությունը՝ հոգու խորքում հճվեց. զարմանալի տղա է, և կատաղությունն ու զայրութն է մեծ, և բարությունը ու մեծահոգությունը:

Ցուրան ինչպես միշտ՝ որպես ավագ՝ ծխախոտը ինքը
վառեց, առաջինը ձգեց, հետո փոխանցեց նորիկին, հետո
ծխուկը ձեռքից-ձեռք անցավ:

Այս տղաների հետ ժամանակն այնքան արագ է թռչում՝
մտածեց: Երանի իրեն ուրիշ խուզ լտանեն: Արդեն շորրորդ
շաբաթն էր այսաեղ:

Ծխախոտը մի շրջան պատել ու նորից իրեն էր հասել: Վեր-
ջըն էր, մատները վառելուց հաճույք զգաց, ուժեղ ձգեց ու
տրորեց ձեռքի մեջ: Անկյուն քաշվեց, նստեց: Տրամադրության
անկումը ինքը սովորաբար կարողանում էր քողարկել: Բայց
այսօր շատ է մտքերի մեջ ընկնում:

—Մի տեսակ ես երևում: Զլինի՞ էն դանշը ներին նորից
ես տեսել: —Նորայրի խաժ աշքերի խորքում նենդ կրակներ
են կայծկլտում:

—Էն օրվա ծխախոտը...

—Իմ լեզու թափելո՞վ ծխախոտը եկավ, թե՞ քո երազով:

—Ինչպան տեսել եմ, բարի է հղել: —Ներքնի շրթունքը
սովորության համաձայն կծեց Ցուրան:

—Ոնց էլ հավատում ես դժան: —Նորիկը շրջվեց զեպի
տղաները:

Գիշերվա երազը, որ օրվա ընթացքում չէր լքում նրան,
մաս առ մաս նորից սկսեց պատվել ու մտքերը տարավ քաղ-
ցըր զգայությունների:

...Մեծ-մեծ բիդոնների մեջ կարը փրփուր է տփել: Հաշ-
վամ է ու կորցնում հաշիվը: Սառնարանում կարի սեր կա:
ինքը սոված է:

—Հայա՛ր:

Կինը ետ է տանում շրե ծաղկավոր վարագույրը ու նորից
ծածկում:

Փայտում է առեղծվածային ու անհետանում:

Հայարը: Գալիս է շորորուն ու բմծիծաղում է:

—Հայար, սոված եմ: Ո՞ւր են աղջիկները:

Կինը երկար, ոսկեգույն ծոպավար գլխաշորի ծայրը
շպրում է ուսի վրայից, ձեռքը դնում գոտկատեղին ու նորից
շորորում է:

—Արագ շարժվիր: Ի՞նչ ես նորու նստել:

Անոշաղիր, անգայր՝ շորորում է՝ դեմքին բմծիծաղ:

—Տեսա՛ր ոնց տարան ինձ, Հայա՛ր:

— Հայաբը մեռե՞լ է, օղով, որ նեզ տանեն: — Ժպտում է:
Քայլում է դանդաղ, ձեռքը՝ գոտիատեղին:

— Յաղիգա՞ր...

Չը վարագույր ծածանվում է...

— Դանիելլան Յուրա:

— Կանգնեց:

— Փոխանակության:

Քարացավ: Մեկն ուրախությունից ձեռքերն իրար զարկեց:

— Վա՛յ, հս քո՛... — Նորայրն էր:

Հսկիչը դադանակը հս բերեց:

— Արա՛գ: Արա՛գ:

Գուան մոտ Յուրան՝ երադի ու իրականության մեջ դեռ
շփոթախառն՝ հս նայեց: Նորայրի խաժ աշքերի խորքում
կրակներ վառվեցին: Մյուսը՝ կծեց ներքին շրթունքը ու զըս-
պեց ժպիտը: Երկու տղամարդ, աարիքով իրարից շատ հե-
ռու, հասկացան իրար...

* * *

Հորադիզ: Կայարան Մարիչանլու: Ստեղ-ստեղ լսվում են
Հրետանային թնդյունների խուլ ձայները: Այնքան խով, որ
Հավաքվածները զգում են՝ ինչ-որ տեղ պատերազմ է: Պատե-
րազմ է, բայց պատերազմի սարսափը զեռ հեռու է, կա մի-
այն արձագանքը, որ կատաղություն է բերում: Այնտեղ, լեռ-
ներից այն կողմ, սպանվել է մեկի հայրը, մեկի եղբայրը, մե-
կի նշանածը: Կամ սպանվել են, կամ՝ զերի տարվել: Եղկու-
սին էլ դժվար է հավատալ: Բայց աշա իրենց առաջ կանգնած
է մեկը, և դա թշնամի է: Եթե իրենց եղբայրը սպանվել է,
սպանողը դա է, եթե գերվել է, գերողը դա է: Որ ինչ-որ տեղ
պատերազմ է, մեղավորը դա է, որ կա, գոյություն ունի, որ
շի հանճնվում, որ դիմադրում է: Դա է՝ այդ ոսկոր ու կաշի
մնացած կմախքը, որի աշքերը... Սրա աշքերը... Եվ դեռ
կարողանում է՝ ուղիղ նայել: Բնազգը գործում է: Եթե իրենց
հարազատը չկա, սպանվել է, սա ինչո՞ւ է կենդանի: Ինչո՞ւ
է կանգնել իրենց առաջ: Եվ ամբոխից քարեր ու փայտեր են
թռչում գետի մեջտեղ, ուր կանգնել է կալանավորը: Կանգնել
ու սպասում է: Սպասում է, թե ինչ է լինելու, առանց սար-

սափի; Նրան ծանոթ է այդ բնագեղը, այդ ամբոխային կատաղությունը; Ինչո՞ւ ծանոթ, դա նաև իրենն է եղել, ու նա միշտ իշխան ու կարողացել է օգտագործել դրանց; Օգտագործել է, թե սիրել է; Աչքն ընկավ սկսուածի ծածկոցին՝ վառ կարմիր ծաղիկներով: Սա՛ ինչի՞ համար է մտածեց; Նա նըշկատել էր, որ Ամիրի կինը անից գուստ գալիս ինչ-որ բան վերցրեց; Անջատվեց մի պահ: Չթե վարագույրի ծածանվող ստվերը եկավ աշքի առաջ: Կծեց ներքելի շրթունքը; Ի՞նչ անհետեթություն. Հիմա կարող են սպանել իրեն, իսկ ինքը հիշելու ընթացքունքը. Հիմա կարող են սպանել իրեն, այս ժամին: Քարեր ու փայտեր:

— Ժողովուրդ: Լսեք ինձ... — Փափախը հանելու ժամանակ առ ճեռքերը

— Մատկացնենք:

— Ժողովուրդ: Լսեք, սա իմ մատազն է, իմ բաժինը, ալ-լահի ինձ ուղարկածը, որ որդիս ու փեսաս...

— Սպանել են: Խոչալլուում ճեռքներն ընկածներին մորթել են:

— Կենդանի են: Տեսնող է եղել:

— Մի հավատաւ Գերիներին էլ են մորթուածել Ո՞ւր են, քանի՞ ամիս է... ինչո՞ւ չկան... քանի՞ ար չկան... Հաշվեք:

— Ես երազը տեսել եմ: Կենդանի են:

— Թի տղամարդ ես՝ մատազդ բաց մի թող: Թող թափենք արյունը...

— Խոստացել եմ՝ պիտի կենդանի մնա:

— Ո՞ւմ ես խոստացե՞լ: — Լսվեց մի ձայն:

— Ալլահին եմ խոստացել, ժողովուրդ:

Փայտը թուավ ու կպավ ճակատին: Ամիրը նկատել ու ծածկել էր կալանավորին: Զեռքը տարավ ու արյունոտ ետքաշեց: Կինը, որ մինչ այդ սկսուած ու արժանապատիվ կանգնել էր, ծունկ չորեց ամբոխի առաջ:

— Ժողովուրդ, ալլահը վկա, սա, — Կինը ճեռքը դեմքի երկինք, մյուսը զեպի հայը մեկնեց, — մեր մատազն է: Եթե սրան սպանեք, ես ինձ... կվառեմ: Հենց ձեր աշքի առաջ:

Ամբոխը ետ քաշվեց: Կինը բարձրացավ, քաշեց նախաշուն ծածկոցը: Սկսուածին աղ ու հաց էր դրված: Հետո անսպասեած շարժում չորեց:

— Բազի՞;

Կինը գրկել էր ոտքերը ու լաց էր լինում: — Բազի՞:

Սևազգիստ մանկամարդ աղջիկը, որ մինչ այդ լուս ու վախվորած կուշ էր եկել մոր թևերի տակ, մոտ վազեց ու հեկեկոցով շոքեց մոր կողքին, կալանավորի ոտքերի առաջ: — Բազի՞: Խոսք եմ տալիս: Տղամարդու խոսք: — Կալանավորը բարձրացնում է կնոջը:

Կինը մատուցարանը ձեռքերի մեջ առավ ու մոտեցրել Մարդը կտրեց հացը, թաթախնց աղի մեջ:

— Երդվում եմ: Կտննեմ կենդանի լինեն, թե մեռած:

Ամբոխը սսկված դիտում է: — Եթե կենդանի լինեն... — Հետո դառավ դեպի կինը: — Զնեղանաս ինձնից, բազի, եթե...

— Կենդանի են: Դու գտնելու և ուղարկելու ես: Կինը գիտեր, որ ազատվելուց ամիսներ հետո մարդը գտնելու և ուղարկելու է իր կորուստը:

Կալանավորը ամբոխից շրջվեց, թեթևակի խոնարհվեց սևազգիստ կնոջը՝ որպես հրաժեշտի նշան ու նստեց մեքենան:

* * *

Հրետանային թնդյունների լընդհատվող ձայնը խմբին ստիպեց կանգ առնել: Իշան մեքենայից: Հաշվեց մինչև 40-ը: «Գրադ» կայանքից հրթիռակոծվում էր Ֆիզովի քաղաքը: Բարձունքից երևում էին երկինք հասնող փոշու սյուները: Աշխատում էր հեռահար հրետանին՝ և այս, և այն կողմից: Սուլոց, գվլոց, պայթյուն: Մեկ ժամի շափ սպասեցին: Եթե այսպես շարունակվի իրենք ինչպես պիտի հասնեն Ֆիզովու և Հադրութի սահմանագիծը: Ազատությունը, որ այնքան մոտ էր, երբ մեքենա նստեց, հեռացավ: Նորից սկսեց գործի «Գրադը», և բարձունքի վրա գտնվողները չէին կարող ակամաշմտածել իրենց ուղմաճակատի գծից դուրս գտնվելու առավելության մասին:

— Ֆիզովու վրա են աշխատում: — Ասաց թուրքը:

Այս սա՞ ուրիշ բան է: Մտքում ծիծաղը եկավ հիշելով իրենց պաշտպանությունը նոնակներով ու որսորդական հրացաններով: Սա կոիվ է, սա մեծ կոիվ է, սա ազգի կոիվն է

կալանավորը կամաց-կամաց սկսեց հարմարվել աշխարհին:

Հրթիռակոծությունը դադարեց, ու լեռների լոռությունը անսովոր ու անձկալի կերպարանը ստացավ: Ռւղեկիցներն իրար նայեցին՝ ճանապարհ լընկնե՞նք:

—Վտանդավոր է: Ավելի լավ է մի քիչ եւ սպասենք: —Եղբակացրեց խմբի ավագը:

Բարձունքից դժուում էին շրջակայքը: Ֆիզուլուց դուրս եկող ճանապարհներին շարժում երևաց: Սովորական աշքի համար տեսանելի էին սլացող մեքենաները: Զանազանվում էին բնուատարները, զրահամեքենաները: Փախչում էին: Ամի-

րը հեռադիտակը քաշեց աշքերից ու բռնեց զլուխը:

—Ես սրանց... ծուրա: —Թուրքը հիշոց արձակեց: —Էս

ուր են փախչում:

Յուրան կծեց շրթունքը: Նա ամբողջությամբ չէր կարողա-

նում ընկալել այն, ինչ կատարվում էր, ինչ տեսնում էր:

—Մենք թամիրով ազգ էինք, էս ո՞ւր են փախչում: —

Կրկնեց թուրք:

Յուրան վերցրեց հեռադիտակը: Նա տեսավ մեքենաները՝ բարձած, կապիկած թրերով: Ճանապարհները բռնված՝ հեղեղի նման գնում էին: Հեռադիտակը աշքեց չէր կարողանում հեռացնել: Թիթե անկյունագծով շարժեց: Ակնապակու տեսահորիզոնում հայտնվեց Զեբրայիլը: Նույն պատկերն էր, մի տարբերությամբ՝ մեքենաները քիչ էին ու ճանապարհներին դեռ հետիոտն չկար: Ն ա հ ա ն շ է: Խուճապ է: Գաղթ է:

Թուրքը վերցրեց հեռադիտակը: Երբ քաշեց, աշքերը կարմ-րած էին:

—Ես ի՞նչ կատարվեց:

—Ես ի՞նչ է կատարվում:

—Ես ո՞նց եղավ:

Աշքերը ջրակալված էին: Թաշկինակը հանեց ու սրբեց:

—Մի բան ասե՞մ:

—Ասա: — Բայց չնայեց կալանավորին:

—Զերք քաշեք Դարաբաղից:

—Բայց սկզբում այսպես չէր, ո՞նց եղավ:

—Անմեղ արյուն թափեցիք:

—Թափեցինք: Չեմ մոռանա... 91-ի մայիսին էր... Ով

մեքենա ուներ, ճավաքեցին տարան: Ես չէի ուզում գնալ: Բայց կամավորները շատ էին: Մեծ մասը: Ծուսու և օմոնը

դրավում էին, մենք թալանում էինք: Մարդկանց հավաքում,
լցնում էինք մեքենաները, տանում գորիս: Զեին թողնում
ովինչ վերցնել: Արփազյաղուկում ծեր մարդ ու կին դուրս չե-
կան տնից: Գնդակահարեցինք: Այսպես 14 գլուղ... քշեցինք...
երբ տուն հասա, կինս վախեցած նայեց աշքերիս: Ի՞նչ է
պատահել՝ հարցրեց: Սա մեզ չի ներվի՛ ասացի: —Նորից աըր-
բեց ջրակալված աշքերը:

Հեռահար հրետանու որոտից սարերը խոլ ցնցվեցին: Ճա-
նապարհներից, ուր մեքենաներ են, մարդ, կին, երեխա, փոշու-
ոյուներ երկինք բարձրացան:

Տեսնես տղաները ուր են, ի՞նչ են անում, Արթուրը, Կա-
մոն, Սամվելը, Տողի Վիգենը, Արմենշոն, Աղաբեկյան Արթու-
րը... Հիշեց ու զգաց, որ շտապում է... այնտեղ, լեռները...

ՆՎՐՈԴ ԳԵՎՈՐԳԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

1991. «ԿՈԼՅԾՈ»

СОГОМОНЯН НВАРД ГЕВОРКОВНА

1991. «КОЛЬЦО»

(на армянском языке)

г. Степанакерт, 1994 г.

Խմբագիր՝ Վ. ԱԹԱՆԵՍՅԱՆ

Նկարիչ՝ Ա. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Մ. ԱԶԻՔՅԱՆ

Սրբագրիչ՝ Գ. ԲԱԼԱՅԱՆ

Հանձնված է շարվածքի՝ 7. 12. 95 թ.

Ստորագրված է տպագրությամ՝ 28. 12. 95 թ.

Զափոր՝ 50 X 84 1/32; Թուղթ՝ օֆսեր:

Տառատեսակը՝ Բայկալան:

Տպագրություն՝ բարձր: 9 տպագրական մամուլ:

Տպաքանակ՝ 1000: ԼՂ-881, պատվեր՝ 157

Գիւղ՝ պայմանագրային:

ԼՂՀ պոլիգրաֆ ձեռնարկության տպարան:

Ք. Ստեփանակերտ, Վ. Մամիկոնյանի փ., 21

